

Մխիթար Գաբրիելյան

**Հայկական ընտանիքն
անցումային շրջանում
(ազգաբանական ուսումնասիրություն)**

Ե Ր Ե Վ Ա Ն - 2 0 0 5

Մխիթար Գաբրիելյան

**Հայկական ընտանիքն անցումային շրջանում
(ազգաբանական ուսումնասիրություն)**

Ե Ր Ե Վ Ա Ն - 2 0 0 5

ՀՏԴ 391/395 = 919. 81

ԳՄԴ 63. 5 (2 Հ)

Գ 124

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագիր՝

պատմական գիտությունների թեկնածու Ս. Գ. Հոբոսյան

Գաբրիելյան Մ.

Գ 124 ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ) / Խմբ.՝ Ս.

**Հոբոսյան.- Եր., հեղինակային հրատարակություն, 2005, 160
էջ:**

Աշխատությունը նվիրված է անցումային շրջանի հայկական ընտանիքի ազգաբանական վերլուծությանը: Հանրապետության բազմաթիվ բնակավայրերում գրառված ազգագրական նյութերի հիման վրա վեր են հանված հայկական ընտանիքի զարգացումը պայմանավորող քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային գործոնները, ներկայացված են հնարավոր զարգացումները:

Աշխատությունը կարող է օգտակար լինել ազգաբանների, անցումային շրջանի ոսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար:

Աշխատանքում արտահայտված տեսակետները հեղինակին են և կարող են չհամընկնել աջակից կազմակերպությունների դիրքորոշումներին:

ԳՄԴ 63. 5 (2 Հ)

ISBN 99930 - 4 - 493 - 8

© Գաբրիելյան Մ., 2005թ.

**Հետազոտությունն իրագործվել է հրատարակվում է
«Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ
/ՀՌԿԿ/ - Հայաստան» կենտրոնի հետազոտական
դրամաշնորհի շրջանակներում:**



**Caucasus Research Resource Centers-Armenia
A program of the Eurasia Foundation**

**Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան
Եվրասիա Հիմնադրամի ծրագիր**

ՀՌԿԿ-Հայաստանը կազմում է Նյու-Յորքի Կարնեգի Կորպորացիայի և Եվրասիա Հիմնադրամի համագործակցությամբ հարավկովկասյան երկրներում ստեղծված հետազոտական ռեսուրսային կենտրոնների ցանցի մի մասը: Հասարակագիտական հետազոտությունների ու հանրային քաղաքականության վերլուծության ոլորտը խրախուսելու նպատակ հետապնդող այս կենտրոնը տեղակայված է Երևանի պետական համալսարանում և բաց է բոլոր հասարակագետ – հետազոտողների համար: Կենտրոնի գործունեության մասին կարելի է տեղեկանալ www.crrc.am վեբ-կայքից

Բովանդակություն

Առաջաբան.....	7
<i>Գլուխ առաջին</i>	
Հայկական ընտանիքի զարգացումը խորհրդային շրջանում.....	18
<i>Գլուխ երկրորդ</i>	
Քաղաքական ու տնտեսական վերափոխումների ազդեցությունը հայկական ընտանիքի վրա.....	41
<i>Գլուխ երրորդ</i>	
Մշակութային փոփոխությունների ազդեցությունն անցումային շրջանի ընտանիքի վրա.....	79
<i>Գլուխ չորրորդ</i>	
Ներընտանեկան հարաբերություններն անցումային շրջանի հայկական ընտանիքում.....	111
<i>Վերջաբան</i>	151
<i>Աղբյուրների և գրականության ցանկ</i>	158

Առաջաբան

Հայաստանի Հանրապետության անկախացումից անցել է շուրջ մեկուկես տասնամյակ: Այս ընթացքում վերափոխվել են *քաղաքական, տնտեսական, հասարակական ու մշակութային* համակարգերը և ենթահամակարգերը, ձեռնարկվել են *բազմակուսակցական համակարգի, խոսքի և դավանանքի ազատությունների ձևավորմանը, ազատական տնտեսության սկզբունքների ամրագրմանը, ժողովրդավարության, իրավական պետության ու քաղաքացիական հասարակության կայացմանն ուղղված քայլեր*: Անցած տարիներին արձանագրվել են էական տեղաշարժեր: Սակայն վերափոխումների ազդեցությունը բնակչության սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական ու ունեցվածքային տարբեր խմբերի վրա միանշանակ չէ: Հայաստանյան իրականությունը, բացի դրական միտումներից, այսօր բնութագրում են նաև այնպիսի իրողություններ, ինչպիսիք են քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավիճակից հասարակության անբավարարվածությունը, աննախադեպ ծավալներ ունեցող աղքատությունը, ունեցվածքային բևեռացումը, տնտեսության տարբեր ոլորտների մոնոպոլիզացիան, կոռուպցիան ու հովանավորչությունը, արտագաղթը: Ստեղծված պայմաններում հասարակական հրամայական է դարձել սոցիալական արդարության ձևավորման պահանջը:

«Անցումային շրջանը» վեր է ածվել կախարդական շրջափուլի, որը չեն կարողանում հաղթահարել ոչ իշխանությունները, ոչ էլ հասարակությունը: Եթե ընդունենք

տնտեսագետների մոտեցումները, որոնք անցումը ներկայացնում են որպես J-տեսք ունեցող կոր, որում անկմանը հաջորդում է տևական վերելքը, ապա կարող ենք ասել, որ հայաստանյան հասարակությունն այժմ կորի ստորին հատվածում է: Վերելքի ապահովմանն ուղղված ջանքերն անբավարար են, որոշ ոլորտներում՝ անարդյունք, իսկ հեռանկարները՝ անորոշ:

Նման շրջափուլում է նաև հայկական ընտանիքը: Քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային հակասական ու իրարամերժ գործընթացների հորձանուտում հայտնված ընտանիքը կորցրել է այն հիմնական **արժեքներն ու կողմնորոշիչները**, որոնց օգնությամբ ոչ միայն կազմակերպվում է ամենօրյա գործունեությունը, այլև կենսագործվում են ընտանեկան կյանքի պլանավորման ու վերարտադրության հիմնական սկզբունքները:

Ընտանիքը մեծ բարդություններով է հարմարվում նոր իրավիճակին ու դեռևս պատրաստ չէ ժամանակի պահանջներն ու հրամայականներն ընդունելու:

Ընտանիքի պասիվության, իրավիճակի կարգավորման նախաձեռնությունների անբավարարության պայմաններում կարևորվում են համակարգված, գիտականորեն հիմնավորված մոտեցումները: Որպես կանոն, տարբեր հասարակություններում նման գործառույթ ստանձնում են էլիտար խմբերը: Նրանք ոչ միայն ազգային, հասարակական ու համապետական կարևորության արժեքներ «ստեղծելու», այլև դրանք համամարդկային արժեքներին համադրելու ու սինթեզելու կարողությամբ, իրենց իսկ կողմից ընդունված արժեքներին հետևելու սկզբունքի հետևողական կիրառման շնորհիվ ապահովում են հասարակական ներդաշնակության ու շարժընթաց զարգացման մթնոլորտը:

Ասվածը կարևոր է հատկապես լուրջ ընտրանքի խնդիր ունեցող անցումային հասարակությունների համար: Եթե սրան հավելենք, որ գլոբալիզացիայի, ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների ազդեցության աճի պայմաններում հաճախ իրագործվում է նաև բացահայտ մշակութային էքսպանսիա, պարզ կդառնա, որ ընտրանքի կարևորությունը, որի առջև կանգնած են հասարակությունն ու ընտանիքը, բազմապատկվում է:

Ընտանիքն ընտրություն է կատարում հնի ու նորի, ավանդականի ու արդիականի, սեփական մշակութային ժառանգության ու առաջարկվող/պարտադրվող արժեքային համակարգերի միջև, հաճախ վերջինիս հիմքում դնելով նաև իռացիոնալ սկզբունքներ ու մոտեցումներ:

Այս իրավիճակը, ինչպես ցույց է տրված ազգագրական հետազոտություններում, նոր չէ հայկական ընտանիքի համար:

Միայն 20-րդ դարում միմյանց հաջորդել են արմատական փոփոխությունների մի քանի փուլեր:

Անցումային շրջանում ևս դրանք շարունակվում են: Արցախյան շարժումը՝ որպես ազգայինի վերափնաստավորման գործընթաց, այս շարքում կարևորագույններից է: Սակայն, քաղաքական համակարգի ու տնտեսական հարաբերությունների զարգացման ոլորտներում առկա բացասական իրողությունները բերեցին հասարակության զանգվածային անտարբերության ու օտարման, իսկ ազգի ու հասարակության գոյատևման ու շարժընթաց զարգացման տեսանկյունից կարևոր բազմաթիվ արժեքային համակարգեր հաճախ պարզապես մղվեցին երկրորդ պլան:

Ցավոք, անցումային շրջանի Հայաստանում, ի թիվս այլոց, խախտված են նաև առողջ էլիտայի ձևավորման մեխանիզմները: Հայաստանյան քաղաքական ու տնտեսական էլիտայի տարբեր

խմբերը դարձել են փակ, ինքնաբավ ու ինքնավերարտադրվող «կաստաներ», որոնք ի զորու չեն հասարակական կարևորության արժեքների ներդրումն ու վերարտադրությունն ապահովելու: Ավելին, էլիտայի տարբեր խմբեր հաճախ խոչընդոտում են առողջ, կառուցողական արժեքների ձևավորման, տարբեր խմբերում ամրագրման գործընթացները, սեփական վերարտադրությունն ապահովելու ցանկությունից ելնելով:

Անցած մեկուկես տասնամյակի փորձը թույլ է տալիս արձանագրել ևս մեկ փաստ: ՀՀ-ում դեռևս չի ձևավորվել պետական ու հասարակական կարևորության գործընթացների գիտական վերլուծության, պլանավորման ու կանխատեսման սկզբունքը: Պետական կառավարման համակարգն այսօր հանդես չի գալիս պատվիրատուի դերում: Մինչդեռ զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ նրանցում հասարակական կարևորության ցանկացած իրադարձություն ենթարկվում է համակողմանի գիտական ուսումնասիրության, մանրամասնորեն կանխատեսվում են հնարավոր դրական ու բացասական ազդեցությունները և վտանգները: Պատահական չէ, որ հասարակական գիտությունների ներկայացուցիչները՝ ազգաբաններ, մարդաբաններ, սոցիոլոգներ ու մշակութաբաններ, գտնվում են բոլոր կարևոր իրադարձությունների կիզակետում, բազմաթիվ դեպքերում ստանալով պետության բազմակողմանի աջակցությունը: Ավելին, զարգացած երկրներում արդեն վաղուց ընդունված պրակտիկա է նաև այլ պետությունների գիտական ներուժն օգտագործելը, ինչը թույլ է տալիս համակողմանիորեն պատկերացնել ոչ միայն սեփական, այլ հարևան երկրներում առկա հիմնախնդիրները: Հայաստանում նույնպես վերջին մեկուկես տասնամյակում տարբեր հետազոտություններ են իրագործվում միջազգային կազմակերպությունների

աջակցությամբ, լրացնելով գիտական ուսումնասիրությունների ոլորտում ձևավորված բացը:

Ընթերցողին ներկայացվող սույն ուսումնասիրությունն այդ շարքից է:

Այն իրագործվել և հրատարակվում է Հետազոտական Ռեսուրսների Կոմպասյան Կենտրոններ /ՅՈՒՆԿԵՄԻՍԻՍ/ - Հայաստան կազմակերպության, Եվրասիա հիմնադրամի ու Կարնեգի կորպորացիայի աջակցությամբ ու ֆինանսավորմամբ:

Հետազոտության առաջարկում առանձնացվել էր անցումային շրջանի հայկական ընտանիքի ազգաբանական ու մշակութաբանական բնութագրին վերաբերող մի քանի հիմնահարց.

- *ներկայացնել անցումային շրջանի հայկական ընտանիքի մշակութային նկարագիրը պայմանավորող հիմնական, այդ թվում ավանդական տարրերը՝ սովորույթներ, ավանդույթներ, նոր արժեքներին հարմարվելու գործընթացներ և այլն:*
- *Հաշվի առնելով խորհրդային անցյալը, ուշադրություն դարձնել հատկապես խորհրդային տարրերի պահպանվածության վրա: Դիտարկել, թե ինչպես է խորհրդային ժառանգությունն ազդում նոր իրողություններին հարմարվելու գործընթացների վրա:*
- *Բացահայտել, թե ընտանեկան հարաբերությունների որ ոլորտներում է պահպանված ավանդականը և որքանով է այն նպաստում ընտանիքի համախմբվածությանը:*
- *Ուսումնասիրել փոփոխությունների հանդեպ հայկական ընտանիքում ձևավորված վերաբերմունքը:*

- *Բացահայտել, թե ինչպիսին է նորի ու ավանդականի հարաբերակցությունը հայկական ընտանիքում, ինչով է պայմանավորված որևէ տարրի ազդեցությունն ու նշանակությունը:*

Հետազոտության կանխավարկածի հիմքում ընկած էր այն թեզը, որ այսօր հայ հասարակությունն ու ընտանիքը բնութագրող շատ իրողություններ հիմքում ազգաբանական ու մշակութային են, ուղղակի կամ անուղղակի ազդված նախընթաց շրջանների զարգացումներից, արժեքային կողմնորոշումներից, 20-րդ դարի հայոց պատմության տարբեր իրադարձություններից:

Ուսումնասիրությունը հիմնականում հաստատեց կանխավարկածի դրույթներն ու թեզերը:

Հետազոտական ծրագրի շրջանակներում նյութեր են գրառվել ՀՀ Շիրակի, Տավուշի, Վայոց ձորի և Արարատի մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում: Օգտագործվել են նաև 1993թ.-ից ՀՀ բոլոր մարզերում ու ԼՂՀ տարբեր շրջաններում, ավելի քան 150 քաղաքային ու գյուղական համայնքներում գրառված ազգագրական նյութերը: Դրանք ցույց են տալիս, որ և՛ քաղաքաբնակ և՛ գյուղաբնակ ընտանիքների համար այսօր չափազանց կարևոր են նորին հարմարվելը, եղած հնարավորություններից ընտրություն կատարելը: Խոսքը վերաբերում է ոչ միայն տնտեսական հարաբերություններին, այլ քաղաքական, հասարակական ու մշակութային համակարգերին: Ընտրությունը որի մասին խոսում ենք, այս դեպքում արդեն չափազանց կարևոր մշակութային գործընթաց է:

Ընտանիքը, վերջինիս առանձին անդամները նորն ընդունում կամ մերժում են ելնելով նաև նախընթաց փորձից, ընդամենը մեկուկես-երկու տասնամյակ առաջ կենսագործունեությունը պայմանավորած սկզբունքների ու

մեխանիզմների պահպանվածությունից: Կարևոր համարվող արևմտյան արժեքային համակարգերի մուտքի ու ամրագրման գործընթացները նույնպես պահանջում են գիտելիքների, համապատասխան մշակութային միջավայրի առկայություն:

Պատահական չէ, որ ընտանիքը վերջին տարիներին գտնվում է պետական կառույցների, հասարակական ու միջազգային կազմակերպությունների և անհատ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Նույն վիճակն է անցումային շրջանում գտնվող բոլոր հասարակություններում: Տարաբնույթ հետազոտություններում կարևորվում են հասարակական, քաղաքական կյանքին ընտանիքի ու վերջինիս առանձին անդամների մասնակցության մշակութային, ազգաբանական ու արժեքային առումները¹:

Ցանկացած վերափոխում, հասարակական, քաղաքական ու տնտեսական համակարգերի բարելավմանն ուղղված ցանկացած նախաձեռնություն պարտադիր պետք է ունենա *սուբյեկտ՝ հասարակական խմբեր կամ անհատներ*, որոնք, ընդունելով առաջարկվող նորի կարևորությունն ու առավելությունները, ձեռնամուխ կլինեն նաև դրա տարածմանն ու ամրագրմանը:

Այս տեսանկյունից ևս անցումային շրջանի ընտանիքը հայտնվել է ծանր վիճակում. զանգվածային արտագաղթը դարձել է գործունյա, նոր տնտեսական համակարգին հարմարվելու ունակ

¹Տես՝ Ա. Թադևոսյան, Անցումային շրջանի էթնահոգեբանական փոփոխությունների առանձնահատկությունները Հայաստանում, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (այսու՝ ՌԱՀԿ), Եր., 2000; *Մույնի՝* Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում, ՌԱՀԿ, Եր., 1998; *Մույնի՝* Հասարակական շերտավորման և աղքատության ձևավորման պատկերը Հայաստանում 1991-1997թթ., ՌԱՀԿ, Եր., 1998; *Մույնի՝* Արժեքային գործընթացները և միտումները 1991-1998թթ., ՌԱՀԿ, Եր., 2000:

խմբերի հեռանալու պատճառ, խախտված են հասարակության բնականոն վերարտադրության հիմնական ցուցանիշները, զանգվածային աղքատությունն առաջնային է դարձրել «գոյատևման ռազմավարությունը» դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով. *կենսական պահանջմունքների շեմի ու տեսականու սահմանափակումներ, աղքատության՝ որպես գոյավիճակի մեխանիկական ընկալումներ, հետևաբար՝ նաև դրա հաղթահարման ուղիների ու հնարավորությունների արհեստական պարզեցում*²:

Վտանգավոր չափերի են հասել բնակչության օտարվածությունը, ինքնամեկուսացումն ու կենսական նշանակության տարբեր որոշումները մեխանիկական կապերի կարևորմամբ կայացնելը: Ընտանիքը, զրկված լինելով շատ գործընթացներում որպես սուբյեկտ հանդես գալու հնարավորությունից, ներընտանեկան հարաբերություններում ևս առաջնորդվում է գոյատևման սկզբունքով, կարևորելով ընդամենը կենսական նվազագույնի լուծման հարցերը:

Անցումային շրջանի հայկական ընտանիքը կանգնած է լայն առունով *քաղաքակրթական ընտրանքի առջև*:

Ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության ու իրավական պետության՝ առաջարկվող հասկացությունները մաս են կազմում *արևմտյան քաղաքակրթական համակարգի*: Ընտրանքի խնդիրն իր հերթին էլ ավելի է կարևորում ընտանիքի՝ որպես օրգանական ամբողջության ու կարևորագույն հասարակական միավորի դերը: Անցումային շրջան ապրած ասիական, լատինաամերիկյան ու աֆրիկյան երկրների փորձը

²Տես՝ Ա. Թադևոսյան, Մ. Գաբրիելյան, Աղքատության ու գոյատևման պատկերը. հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, ՄԻԺԻ, Եր., 2003:

ցույց է տալիս, որ հնարավոր չէ քաղաքակրթական նոր արժեքների ներմուծում ու ամրագրում այն միջավայրում, որտեղ բացակայում են անհրաժեշտ հասարակական ու մշակութային նախադրյալները: Նման իրավիճակում տարբեր վերափոխումները, նաև հսկայական ֆինանսական միջոցների ծախսումը դատապարտված են անհաջողության, որովհետև հնարավոր չէ հաջողություն հասնել **առանց սուբյեկտի:**

Շարժունակ, շահագրգիռ, հստակ կողմնորոշումներով ու չափանիշներով առաջնորդվող սուբյեկտների առկայությունն է միայն թույլ տալիս արձանագրել հաջողություններ քաղաքական, տնտեսական ու հասարակական համակարգերի առողջացման գործողություններում:

Հայկական ընտանիքն անցումային շրջանում ունի ընդամենը **օբյեկտի կարգավիճակ**. ամեն ինչ ուղղված է վերջինիս կենսամակարդակի, հնարավորությունների ու ակտիվության աճին, սակայն խիստ սահմանափակ է ընտանիքի ու նրա առանձին անդամների մասնակցությունը տարբեր գործընթացներում: Առկա է խզում առաջարկվող համակարգերի և դրանց ամրագրման ու վերարտադրության դաշտերում, ինչը հիմքում ազգաբանական, մշակութաբանական իրողություն է: Առանց այս խզման հաղթահարման, քաղաքացիական ակտիվության կրող խմբերի ձևավորման, առանց ընտանիքը օբյեկտից սուբյեկտի և ակտիվ դերակատարի վերածելու ջանքերի ու դրանց ինստիտուցիոնալիզացիայի, հնարավոր չեն դրական տեղաշարժեր ու փոփոխություններ մոտ ապագայում:

Ընթերցողին ներկայացվող ուսումնասիրությունը նշված խնդիրների ազգաբանական դիտարկման փորձ է: Բնական է, որ նույնիսկ մի քանի հետազոտությամբ հնարավոր չէ պատասխանել բոլոր հարցադրումներին, մանավանդ որ շատ գործընթացներ

դեռևս կայացման փուլում են ու դժվար է ասել, թե առաջիկայում դրանք ինչպես կզարգանան:

Աշխատանքում օգտագործված դաշտային նյութը գրառված է ազգաբանության մեջ ընդունված որակական հետազոտությունների մեթոդներով՝ անհատական խորացված հարցազրույցներ, ֆոկլուս-խմբային հարցումներ, դիտարկումներ, փորձագիտական հարցումներ: Վերանալոլ որակական ու քանակական մեթոդների արդյունավետության վերաբերյալ արդեն մի քանի տասնամյակ շարունակվող գիտական բանավեճերից, նշենք, որ որակական նյութին նախապատվություն տալը հետապնդում է անցումային շրջանի հայկական ընտանիքում առկա հիմնական միտումների բացահայտման, սուբյեկտիվ՝ անհատական, ընտանեկան ու համայնքային մակարդակներում, ընկալումների դիտարկման, զարգացման հնարավոր ուղիների կանխատեսման նպատակ:

Հետազոտության գիտական բազան չի սահմանափակվում միայն հեղինակի գրառած ազգագրական նյութերով:

Հարցադրումների առանձնահատկություններից ելնելով, օգտագործվել է նաև հրապարակի վրա եղած գրականությունը՝ ազգագրական, սոցիոլոգիական, տնտեսագիտական հետազոտություններ, վիճակագրական տվյալներ, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրություններ ու զեկույցներ³:

³Է. Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Եր., 2003; Ս. Ծաղիկյան, Կոռուպցիա. պատճառները, հետևանքները, Եր., 2001; Է. Օրոյան, Պետական կառավարման համակարգը Հայաստանում, Եր., 1998; Մ. Գաբրիելյան, Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001; Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001; Ս. Մանուկյան, Կոռուպցիան և անցումային շրջանի սոցիալական դինամիկան. Երևանի ուսանողության կոռուպցիոն դիրքորոշումներն ու միտումները, Եր., 2005; Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր. պետական

Չեղինակն իր շնորհակալությունն է հայտնում ուսումնասիրության կայացմանը օժանդակած բոլոր անձանց ու կազմակերպություններին՝ Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ /ՅՈՒՆԵՍԿ՝Հայաստան կազմակերպության աշխատակազմին, դաշտային հետազոտությունների անցկացմանն աջակցած անհատներին ու կազմակերպություններին, ազգագրագետ գործընկերներին, որոնց դիտողություններն ու առաջարկությունները նպաստել են տարբեր թեզերի կատարելագործմանն ու լրամշակմանը:

Ֆինանսները և աղբատության կրճատումը, Եր., 2002; Հայաստանի կանայք և տղամարդիկ. վիճակագրական գրքույկ, Եր., 2005; Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), Եր., 2003, Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003 :

Պատմագիտական, հասարակագիտական ու ազգաբանական դպրոցների ներկայացուցիչների ջանքերով մի քանի տասնամյակում ստեղծվեց *խորհրդային մարդու* դրական, որոշ առումներով նաև *իդեալականացված* կերպարը, որն ուղեցույց էր երիտասարդ սերնդի ներկայացուցիչների համար: ԽՍՀՄ-Արևմուտք հակադրությունը, որի հիմնական տարրերից մեկն անգիջում գաղափարախոսական պատերազմն էր, ընձեռում էր խնդրի լուծման լավագույն հնարավորություններ: Ձևավորվել էր «փակ համակարգ»․ չկար օբյեկտիվ, չվերահսկվող տեղեկատվություն, սահմանափակ էին նորույթների մուտքի ու ամրագրման հնարավորությունները, ինչն էլ ապահովում էր համակարգի գրեթե նույնական վերարտադրությունը:

Հասարակության տարբեր խմբերում ձևավորվող նորույթները ևս վերահսկվում էին: Սահմանափակ էին նաև դրանց տարածման ու ազդեցության հնարավորությունները⁵:

Կապիտալիստական արևմուտքը խորհրդային քաղաքացու համար թաքու էր, իսկ Եվրոպան հիմնականում սոցիալիստականն էր, որտեղ ժամանակ առ ժամանակ լինում էին արտադրության առաջավորներ, մտավորականության ներկայացուցիչներ:

ՀԽՍՀ-ն խորհրդային համակարգում զարգանում էր նույն օրինաչափություններով⁶:

էին խորհրդային պատմության և հատկապես խորհրդայնացման առաջին տարիների իրենց տարբերակները:

⁵Եվ ավանդույթը և նորույթը կարևոր են մշակութային զարգացման համար: Ինչպես էնդոգեն (հասարակության ներսում ձևավորվող), այնպես էլ էկզոգեն (դրսից մուտք գործող) նորույթներն ապահովում են մշակութային ենթահամալիրների շարժընթաց զարգացում ու վերարտադրությունը: Այս մասին ստեղծվել է հարուստ ազգաբանական գրականություն: Մանրամասն տես՝ Ն. Ածօժի իձ, Իձձիձն էձեձձձ: ձձձձձձ էձձձի իձձձձձ, Ի ., 1989, էջ 160-200:

Հայաստանը խորհրդայնացվեց որպես ագրարային, գերազանցապես գյուղական բնակչությամբ, Եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր հայություն ունեցող երկիր և արդեն խորհրդայնացման սկզբին իշխանությունները կանգնած էին ծանրագույն սոցիալական խնդիրների առաջ: Սրան ավելանում էր **իրական խորհրդայնացման** անհրաժեշտությունը, այնպիսի հասարակության ձևավորումը, որը սոցիալիզմի ու կոմունիզմի գաղափարախոսության կրողն էր:

Տարբեր երկրներում 20-րդ դարում իրագործված վերափոխումներին վերաբերող գրականությունում⁷ ցույց է տրված, որ համակարգային խնդիրների լուծման դեպքում կիրառվում է երկու հիմնական տարբերակ:

Առաջինը ենթադրում է տևական նպատակասլաց աշխատանք հասարակության տարբեր սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական ու ունեցվածքային խմբերում այն նպատակով, որ վերջիններս, յուրացնելով առաջարկվող համակարգերի առավելությունները, ժամանակի ընթացքում դառնան նաև դրանց պաշտպաններն ու վերարտադրողները: **Երկրորդ** տարբերակն առավել հեղափոխական է, երբ համակարգը պարտադրվում, իսկ նրա վերարտադրությունն ապահովվում է հարկադրանքի ու տոտալ վերահսկողության ճանապարհով: Վտանգավոր տարրերը՝ լինեն անհատներ, խմբեր կամ առանձին էթնոսներ,

⁶Սփյուռքի գոյությունը, սակայն, թույլ էր տալիս արևմուտքից ստանալ չափավոր տեղեկատվություն, իսկ հայրենադարձությունը մասամբ հասանելի դարձրեց ոչ սոցիալիստական աշխարհի մասին պատկերացումները:

⁷Օձաձեօեֆիիիá íáúáñòáí è ìèđí áàÿ ýèíííìèèà: èðèòèèà òáí ðèé ì í ááđí èçàòèè, 1 ., 1981.

ունեցած կոլեկտիվացում), խրուշչովյան «ձնհալ», բրեժնևյան «լճացում», գորբաչովյան վերակառուցում⁹:

Խորհրդային համակարգը, չնայած բարդություններին ու տարբեր փուլերի առանձնահատկություններին, լուծում էր առաջադրված հիմնական խնդիրները: 1920-ական թթ. լենինյան լոզունգներն անգրագիտության վերացման, նոր տիպի մտավորականության կերտման մասին մի քանի տասնամյակում դարձան իրականություն: Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ում բարձր դիրքեր էր զբաղեցնում և՛ գրագիտության մակարդակով և՛ բարձրագույն կրթությամբ մասնագետների և՛ վերջիններիս զբաղվածության բարձր տեսակարար կշռով:

Հաջորդ հարցը, որ լուծում էր կուսակցությունը, **մշակութային աստիճանական համահարթեցման խնդիրն էր**, որը, սակայն, միագիծ չէր:

Մի կողմից փորձ էր արվում կերտել **նոր տիպի՝ խորհրդային մարդ**, մյուս կողմից, թույլ չափաբաժիններով զարգացվում էին ազգային մշակույթի այն գծերը, որոնք, նպաստելով էթնիկ ինքնագիտակցության աճին, վտանգ չէին պարունակում համակարգի համար: Ստեղծվում էին գիտական ու մշակութային ազգային դպրոցներ, ակադեմիաներ, բուհեր, որոնք զբաղվում էին սեփական ժողովրդի մշակույթի ու պատմության ուսումնասիրության և պրոպագանդման հարցերով, չմոռանալով շեշտել, որ դա արվում է լենինյան ազգային քաղաքականության դրույթներին համապատասխան:

Այս ոլորտում ևս Հայաստանն առաջատար դիրքեր էր զբաղեցնում. ստեղծվել էր գիտական հզոր միտք, գիտական, այդ

⁹Սրանցից յուրաքանչյուրը, ինչպես ցույց են տալիս ազգագրական նյութերն ու ուսումնասիրությունները, չնայած ընդհանուր տրամաբանությանը, ունին նաև որոշ առանձնահատկություններ:

թվում՝ հայագիտական ու պատմագիտական դպրոցներ, որոնք բարձր մակարդակի հասցրին հայոց պատմության ու մշակույթի ուսումնասիրությունը: Այլ հարց է, որ գաղափարական բնույթի սահմանափակումները, արևմուտքում կատարվող հետազոտություններին ծանոթ չլինելը թուլացնում էին վերջիններիս տեսական-մեթոդական հիմքերը:

Ինչ վերաբերում է *խորհրդային մարդու* կերտման գործընթացին, ապա այստեղ գործ ունենք երկու տիպի իրողությունների հետ՝ *մակերեսային ու խորքային*:

Առաջին մակարդակում իրոք կային ձեռքբերումներ: Չնայած Հայաստանի համեմատաբար մենեթնիկ լինելուն, հայերի կողքին բնակվում էին այլ ազգությունների ներկայացուցիչներ, որոնց հանդեպ խտրական վերաբերմունք չէր ցուցադրվում¹⁰:

Երկրորդ մակարդակում արդեն բարդություններն ավելի շատ էին: ԽՍՀՄ հանրապետություններում ու տարբեր ժողովուրդների շրջանում աճում էր անբավարարվածությունը «լենինյան ազգային քաղաքականության» արդյունքներից:

Ազգային չլուծված խնդիրներ կային գրեթե բոլոր հանրապետություններում: Հարավային Կովկասում հայերը դժգոհում էին ղարաբաղյան հիմնախնդրի անարդար լուծումից, վրացիների համար լուրջ էին Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի խնդիրները, ադրբեջանցիները ոչ միայն «լուծում էին» ազգային փոքրամասնությունների «կամավոր» ադրբեջանացման խնդիրը, այլ տարածքային պահանջներ ներկայացնում

¹⁰Ինչպես անցումային, այնպես էլ խորհրդային շրջանում ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական, հասարակական ու մշակութային զարգացման մասին մանրամասն տես՝ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I (խմբ.՝ Յու. Մկրտումյան), Եր., 2000; ՀՀ ազգային փոքրամասնությունները

Հայաստանին¹¹: Հյուսիսային Կովկասում ու այլ տարածաշրջաններում ևս նմանատիպ խնդիրների թիվը մեծ էր:

Ընտանիքը, բնականաբար, բոլոր տիպի ազդեցությունների ուղղակի կրողն էր: Փոխվում էին մշակույթի առանձին տարրեր, վերափոխումների էին ենթարկվում ներընտանեկան հարաբերությունները պայմանավորող հիմնական արժեքներն ու նորմերը, սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ու ենթախմբերի ձևավորումը բազմազանություն էր մտցնում հասարակական ու համայնքային հարաբերություններում:

Միաժամանակ, ամեն ինչ արվում էր ընտանիքը հնարավոր վտանգավոր ազդեցություններից զերծ պահելու համար: Ստեղծվել էր որոշակի «պաշտպանական համակարգ»¹²: Ընտանիքը, եթե արտահայտվենք բժշկական տերմինաբանությամբ, «գտնվում էր հիվանդանոցային պայմաններում», որպեսզի հնարավորինս զերծ մնար վարակներից ու հիվանդություններից: Մեծաթիվ էր նաև «պաշտպանության գործընթացի» վերահսկողությունն իրագործող «բուժանձնակազմը». կուսկազմակերպություններ, վերջիններիս ղեկավարներ: Ցանկացած քայլ, որ հարիր չէր խորհրդային մարդուն, դատապարտվում էր, քննարկվում կուսակցական ժողովներում, հանգեցնում նկատողությունների, պատիժների, բացառիկ դեպքերում նաև՝ կուսակցությունից հեռացման:

քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում (խմբ.՝ Յու. Սկրտունյան), Եր., 2005 ուսումնասիրությունները:

¹¹Մ. Օ' Էժձեյն ձի, մշվ. աշխ.:

¹²Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ և՛ գյուղական և՛ քաղաքային միջավայրում կային պաշտպանված լինելը հիմնավորող չափորոշիչներ.- «աշխատանք ու աշխատավարձ, կրթության հնարավորություն, անվճար առողջապահություն, բնակարան ստանալու/կառուցելու հնարավորություն, հավատ երեխաների վաղվա օրվա հանդեպ, բանկային խնայողություններ և այլն»:

Աշխատանքային կոլեկտիվներում, հասարակական միջավայրում դրսևորվող վարքի նորմերը/ դրանց մի մասը մուտք էին գործում նաև ընտանիք: Եթե հաշվի առնենք, որ մոտավորապես նույն պայմաններում էին ընտանիքի բոլոր անդամները, պարզ կդառնա, որ «պաշտպանվածությունն» ազդում էր ներընտանեկան հարաբերությունների, արժեքային կողմնորոշումների ու մոտեցումների վրա: Չնայած սրան, նշենք, որ բավականին մեծ էին նաև շեղումները. հնարավոր չէր պատժել կուսակցական գծից բոլոր հեռացողներին: Ավելի բարձր մակարդակում ընտանիքի պաշտպանությունն ապահովում էին կուսակցական շրջանային ու քաղաքային մարմինները, դարձյալ նույն գործառույթներով: Հանրապետական կուսակցական ղեկավարությունը հանդես էր գալիս որպես հոգատար ծնող, իսկ միութենականն արդեն ստանձնել էր ժողովուրդների հոր գործառույթ, ապահովելով «ընդհանուր պաշտպանվածության» մեխանիզմներն ու մշակելով կատարման համար պարտադիր որոշումներ, գաղափարախոսական դրույթներ:

Փաստորեն, խորհրդային շրջանում ընտանիքը գտնվում էր «երկաթյա բազմաշերտ վարագույրի» պաշտպանության ներքո, ստանալով գրեթե ամեն ինչ սեփական կարիքների բավարարման համար: Կենսական կարիքների սանդղակն ու տեսականին նույնպես հարմարեցված էին խորհրդային չափանիշներին¹³:

Բարձր հիմքերի վրա էր նաև կուսակցական քարոզչությունը: «Տեսականից» բացի, բնակչության բոլոր

¹³Շեղումները ընդունված ստանդարտներից համարվում էին կապիտալիզմի դրսևորումներ, որոնք կուսակցական մարմինների ու հատուկ ծառայությունների իմացությամբ անցել էին ընդհատակ՝ անլեզալ արտադրամասեր, ապօրինի գործունեություն, որը հսկայական շահույթ էր ապահովում ինչպես սպեկուլյանտների, այնպես էլ վերահսկողություն իրականացնողների համար:

սեռատարիքային ու մասնագիտական խմբերի համար նախատեսված էին բազմաթիվ «գործնական պարապմունքներ», որոնց կազմակերպումն ու իրականացումը վերածվում էր տոնի՝ մասնագիտական օրեր, շաբաթօրյակներ, շքերթներ, սոցիալիստական մրցություն, պլանային ու արտապլանային միջոցառումներ, որոնք նպատակ ունեին ամրապնդել կոլեկտիվի զգացողությունն ու փոխկապվածության մեխանիզմները:

Միաժամանակ, արդեն 1970-ական թթ. առկա էին խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէր ապահովել «տեսական ու գործնական» պարապմունքներով:

Խորհրդային կարգերի գոյության տասնամյակները «լուծեցին» ինդուստրիալիզացիայի ու ուրբանիզացիայի խնդիրները. մեկ միլիոնից ավելի բնակիչ ունեցող Երևան, Երկու հարյուր հազարանոց Գյումրի ու Վանաձոր, մի քանի տասնյակ հազար բնակչություն ունեցող Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Կապան, Էջմիածին ու այլ քաղաքներ: Քաղաքային բնակչության արագ աճն ապահովվում էր հիմնականում գյուղից երիտասարդության և միջին սերնդի ներկայացուցիչների արտագաղթի հաշվին¹⁴: Շատ գյուղեր դատարկվում էին, ծերանում, խախտվում էր բնականոն ժողովրդագրական իրավիճակը, մյուս կողմից՝ արագ զարգացող քաղաքներում չէր հասցնում ձևավորվել քաղաքային մշակույթը: Ազգաբանական

¹⁴1926-1994թթ. հանրապետությունում վերացել է 279 գյուղ.-տես՝ Գ. Ավագյան, Հայաստանը 1920-1990թթ., Եր., 1997, էջ 99; Ա. Պոտոսյան, Հայաստանի Հանրապետության գյուղական տարաբնակեցումը, Եր., 1999, էջ 43: Գյուղական բնակավայրերի թիվը պակասել է ներկայիս բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի մարզի, որտեղ գյուղերի թիվն ավելացել է 12-ով: Արագածոտնում գյուղական բնակավայրերը պակասել են 33-ով, Արարատում՝ 67-ով, Գեղարքունիքում՝ 24-ով, Լոռիում՝ 43-ով, Կոտայքում՝ 21-ով, Շիրակում՝ 26-ով, Սյունիքում՝ 84-ով, Վայոց Ձորում՝ 30-ով, Տավուշում՝ 40-ով.-Ա. Պոտոսյան, նշվ. աշխ., էջ 43-49:

գրականությունում ցույց է տրված, որ քաղաքային մշակույթի ձևավորումն ու վերարտադրությունը բավականին բարդ ու տևական գործընթաց են¹⁵. մասնագիտության յուրացումը դեռևս չի մշանակում քաղաքային մշակույթի հիմնական տարրերի յուրացում: «Քաղաքային» մասնագիտություն ունեցողը կենցաղում, ներընտանեկան հարաբերություններում, նաև՝ միջանձնային շփումներում դեռևս բավականին երկար ժամանակ կարող է հանդես գալ որպես գյուղական կամ *անցումային մշակույթի* կրող, զուգակցելով քաղաքային ու գյուղական մշակույթի տարրեր:

Սրան անուղղակիորեն նպաստում էին նաև նախախորհրդային շրջանի որոշ իրողություններ: Այդ շրջանում ներկայիս ՀՀ տարածքում չկային խոշոր քաղաքներ, հետևաբար նաև դասական քաղաքային մշակույթի ավանդույթներ: Ալեքսանդրապոլը, Երևանը, Նոր Բայազետը կապիտալիզմի ներթափանցման պայմաններում նոր էին յուրացնում ու վերարտադրում քաղաքային մշակույթի տարրերը¹⁶: Նախընթաց քաղաքական ու սոցիալ-տնտեսական զարգացումները դարձել էին պատճառ, որ Արևելյան Հայաստանը հանդես էր գալիս որպես մարդկային կապիտալ արտահանող: Խոսքը վերաբերում է և մտավորականությանը և գյուղական բնակչության այն մասին, որը Կովկասի խոշոր արդյունաբերական կենտրոններում համալրում էր արդյունաբերական բանվորների բազմազգ բանակը:

Ձևավորվել էր իրավիճակ, երբ քաղաքային մշակույթ ստեղծող տարրը՝ մտավորականություն ու արդյունաբերական

¹⁵ Ի անթեմի եմ Ածաաի ա: ԿՕԻ Ի ու օեի օի աե=անեթ օնթեաաի աաի օյ, Ած., 1986.

¹⁶Կ. Սեղբոսյան, Արևեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները Լեռնականցիների կենցաղում.-Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ (այսու՝ ՀԱԲ), պրակ 6, Եր., 1974, էջ 159-252:

բանվոր-ծառայողներ, հիմնականում գտնվում էր Հայաստանի տարածքից դուրս¹⁷: Խորհրդայնացումից հետո դրվեց նաև նոր տիպի մտավորականության ձևավորման խնդիր: Այսինքն, այս բազմազանությունում, հակասությունների ու հակադրությունների պայմաններում լուրջ էին ինչպես քաղաքային մշակույթի ձևավորման, այնպես էլ գյուղական մշակույթի պահպանման խնդիրները:

Թվարկված խնդիրների ու հակասությունների մեծ մասը գոյություն ուներ խորհրդային կարգերի ողջ ընթացքում. նոր տիպի մտավորականության «կերտման» գործընթացն ուղեկցվեց նախկինի մեծ մասի ոչնչացմամբ ու արտաքսմամբ: Սրան հաջորդեց 1930-ական թթ. զանգվածային ռեպրեսիաների փուլը: Համատարած վախի մթնոլորտում խոսք չէր կարող լինել մտավորականության բնականոն զարգացման, նոր արժեքների մուտքի, ազգային արժեքների վերաիմաստավորման ու վերարտադրության մասին: Իսկ մտավորականությունը, էլիտան ընդհանրապես չափազանց կարևոր դեր ունեն առողջ արժեքային դաշտի ձևավորման ու վերարտադրության գործընթացում:

Մշակույթը որպես ամբողջություն և վերջինիս առանձին բաղադրատարրերը զարգանում էին «պլանային համակարգի» շրջանակներում: Հայրենական պատերազմն իր հերթին խլեց մի քանի հարյուր հազար հայի կյանք և հերթական անգամ վտանգեց մշակույթի բնականոն զարգացման գործընթացները:

Խորհրդային շրջանի պատմությունը մինչև 1940-ական թթ. կեսերը և այդ շրջանակում՝ նաև ընտանիքի պատմությունը, խոսում են օրինաչափ զարգացման միտումների բացակայության,

¹⁷ Նկատի ունենք նաև արժեքային կողմնորոշումների խնդիրը. Արևելյան Հայաստանի մտավորականության հիմնական հատվածը, կրթվելով ռուսական կենտրոններում, դառնում էր նաև ռուսական քաղաքային մշակույթի հիմնական տարրերի կրող:

վախի մթնոլորտի մասին, որի մշակութային ազդեցությունն ու հետևանքները դրսևորվեցին հաջորդ տասնամյակներում:

Հայկական ընտանիքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ նաև 1930-ական թթ. իրագործված կոլեկտիվացումը: Ցայսօր մասնագիտական գրականությունում սահմանափակ են անդրադարձերը գործընթացի մշակութային հետևանքներին: Մինչդեռ դրանք դրսևորվում էին ոչ միայն խորհրդային շրջանում, այլև մեր օրերում: Կոլեկտիվացումը փոխեց տնտեսավարման հիմնական ձևերի ու եղանակների՝ դարերի ընթացքում ամրագրված ավանդույթները: Հիմնականում ընտանիքի ու մերձավոր ազգականների ջանքերով վարվող գյուղատնտեսական գործունեությունը փոխարինվեց կոլեկտիվիզմի՝ մինչև վերջ չհիմնավորված սկզբունքներով: Հաշվի չառնվեցին առանձին ընտանիքների ունեցվածքային, մասնագիտական կարողությունները, իսկ «կուլակաթափը» գյուղին զրկեց գործունյա, փորձառու և համայնքում մեծ հեղինակություն ունեցող խմբերից: Բնական է, որ ավանդական տարրի արմատական փոփոխությունը նույնպես ազդեց ընտանիքի զարգացման վրա: Փոխվեցին ներընտանեկան, ազգակցական ու դրացիական հարաբերությունների համակարգերը, դուստրմոլվեցին ու մոռացվեցին գյուղատնտեսական գործունեության կազմակերպման ավանդական մեխանիզմները:

Բրեժնևյան շրջանի լճացումը կարելի է համարել խորհրդային հասարակարգում հայկական ընտանիքի համեմատաբար կայուն զարգացման շրջան: Քաղաքային միջավայրում երաշխավորված էին խորհրդային չափանիշներով միջին կենսամակարդակն ու աշխատանքային առաջընթացը, բնակարանային իրավունքը, անվճար բուժօգնությունն ու միջնակարգ և բարձրագույն կրթությունը, գրեթե յուրաքանչյուր

ընտանիք ուներ խնայողություններ, թռչակառուները մեկնում էին հանգստյան տներ ու սանատորիաներ, միջին կենսամակարդակ ունեցող ընտանիքները երկու-երեք տարին մեկ հանգստանում էին սևծովյան առողջարանային քաղաքներում:

Նման իրավիճակը կարելի է բնութագրել որպես *«կայուն լճացում»*. կային հանգիստ գոյության պայմաններ, պետությունն ապահովում էր աշխատանքով ու նույնիսկ վճարում ոչ այնքան որակյալ աշխատանքի դիմաց, իսկ ընտանիքն ու վերջինիս առանձին անդամները չեն առաջադրում համակարգի համար բարդ ու անլուծելի խնդիրներ: Չկային ցույցեր, միտինգներ, ոչ ոք հրապարակավ չէր բողոքում, բոլորը հերթ կանգնելով ու կտրոններով հայթայթում էին Ամանորի համար անհրաժեշտ սննդամթերքի տեսականին:

Պասարակական հանգստությունն ապահովվում էր զինադադարի սկզբունքներին համաձայն. իշխանությունները տալիս են ապրելու հնարավորություններ, իսկ հասարակությունն իր հերթին չի միջամտում պետական կարևորության ոչ մի խնդրի լուծմանը:

Գյուղական միջավայրում նույն վիճակն էր: Արդեն վտանգավոր չափերի հասած արտահոսքը մեղմելու նպատակով հիմնվում էին նաև վնասով աշխատող ձեռնարկություններ, փորձ էր արվում գյուղական կենցաղը հնարավորինս մոտեցնել քաղաքայինին, խորհունտեսություններն ապահովում էին կայուն աշխատավարձ, հատկացնում հողամասեր նոր բնակարանների շինարարության համար, գյուղական երիտասարդությունը կրթություն էր ստանում բուհերում և այլն: Այսինքն, գյուղում ևս գործում էր «հասարակական դաշինքը»:

Ուրբանիզացիոն գործընթացները, գյուղից քաղաք զանգվածային արտահոսքը ձևավորում էին նաև ոչ բացահայտ,

բայց այնուամենայնիվ՝ «մշակութային» որոշակի խզումներ ինչպես տարբեր սերունդների ու սոցիալ-մասնագիտական խմբերի, այնպես էլ հանրապետության առանձին վարչատարածքային միավորների միջև: Մշակութային համահարթեցման քաղաքականությունն ընդգրկում էր բոլոր միջավայրերը (ընտանիք, ներընտանեկան հարաբերություններ, համայնք) և սոցիալ-մասնագիտական խմբերը: Լեւինյան գիտական ժառանգությունը սկսում էր ուսումնասիրվել դեռևս մանկապարտեզից, իսկ մանուկ ԻՍԽԶի պատկերով պիոներական կրծքանշաններն ու կարմիր վզկապները յուրաքանչյուր դպրոցականի համար պարտադիր էին: Բարձր դասարաններում արդեն առաջադրվում էին ավելի լուրջ խնդիրներ. ոչ միայն սերտել լեւինյան կենսագրությունը բանաստեղծությունների ու պատմվածքների օգնությամբ, այլ նաև խորացնել քաղաքական գիտելիքներն ու իմանալ քաղբյուրոյի, վերջինիս անդամների ու անդամության թեկնածուների, տարբեր պլենումների որոշումների մասին: Արդեն դպրոցական տարիքից պատրաստվում էր կոմունիստական հերթափոխ, որը կկարողանար արժանի հակահարված հասցնել իմպերիալիզմին ու տարածել սոցիալիզմի գաղափարներն ամբողջ աշխարհում:

Այս ամենի կողքին խորհրդային բազմազգ պետության ժողովուրդներն ունեին նաև իրենց ազգային մշակույթին ծանոթանալու իրական հնարավորություններ: Ազգային պոեզիան, երգն ու երաժշտությունը, մշակութային ժառանգությունը հասարակությանը ներկայացվում ու պրոպագանդվում էին հնարավորին պատշաճ մակարդակով: Այլ խնդիր է, որ համահարթեցման պայմաններում բանվորն ու կոլտնտեսականը երբեմն ունեին կամ ցանկանում էին ունենալ այնպիսի գրադարաններ, ինչպիսիք ունեին գրականագետներն ու

գրաքննադատները, կամ որոշ գրադարաններ ավելի շուտ կահույքի բաղկացուցիչ էին: Այնուամենայնիվ, ստեղծված էին իրական հնարավորություններ գրեթե բոլոր բնակավայրերում¹⁸:

Միաժամանակ, նշված իրողությունների արդյունքն ու հետևանքը «նշակութային ընտրության» խիստ սահմանափակ հնարավորություններն էին:

Ընտանիքը, որպես կանոն ոչ թե ընտրություն էր կատարում մի քանի տարբերակից, այլ պարզապես վերցնում այն, ինչ առաջարկվում էր: Մշակութային տեղեկատվությունը խիստ ուղղորդված էր, վերահսկվող: Այսինքն, ինչպես այլ ոլորտներում, մշակութային ընտրության հարցում ևս ինքնուրույնությունը հասցված էր նվազագույնի և գործ ունեինք *սպառող հասարակությանը* բնորոշ դրսևորումների հետ: Չկար ռացիոնալ ընտրություն, նախաձեռնություններ, նաև՝ վերջիններս զարգացնելու հնարավորություններ: Այս ամենում ոչ երկրորդական դեր էր խաղում այն, որ ինչպես ցանկացած փակ համակարգ, խորհրդային համակարգը ևս ստեղծել էր վերահսկվող էլիտա: Կուսակցական էլիտայի մասին խոսեցինք: Տնտեսական էլիտայի ներկայացուցիչները նույն վիճակում էին, որովհետև խախտված էին էլիտայի ձևավորման սկզբունքները: Մարդիկ ոչ թե դառնում էին այս կամ այն էլիտար խմբի ներկայացուցիչ, այլ նշանակվում էին «այդ պաշտոնում», բնականաբար, ոչ թե յուրացնելով, այլ ընդամենը պաշտոնի հետ ձեռք բերելով էլիտար այս կամ այն խմբին բնորոշ որակները, հնարավորություններն ու իրավունքները: 1970-80-ական թթ. սկսել էին վաճառվել նաև կուսակցական տոմսերը, քանի որ վերջիններս «էլիտայի անդամություն» գնելու կարևոր նախապայման էին: Իհարկե, նույն

¹⁸Տավուշի մարզի համայնքների գրադարաններում պահպանվել են գրքեր, որոնք այսօր դժվարությամբ կարելի է գտնել նույնիսկ մասնագետների մոտ:

էլիտան հասարակական, համայնքային հարաբերություններում գոնե արտաքին տեսքով դեռևս չէր տարբերվում այնպես, ինչպես այսօր: Դատախազի ու շրջկոմի քարտուղարի տղան հազնում էին նույն գույնի, բայց ավելի որակյալ համազգեստ, կուսկազմակերպությունների քարտուղարները շարունակում էին նույն կոստյումից գնել երկու-երեք հատ, առանձնատներն ու մեքենաները ձևակերպվում էին բարեկամների անունով, այսինքն արտաքուստ ամեն ինչ արվում էր կուսակցական գծին ու գաղափարախոսությանը համապատասխան:

Ազգագրական նյութերը, ինչպես նաև վերջին մեկուկես տասնամյակում հրատարակված գրականությունը թույլ են տալիս պնդելու, որ էլիտայի ձևավորման ու համալրման այս սկզբունքները գործում էին վերևից ներքև՝ նույն մեխանիզմներով էր ձևավորվում և բարձրագույն քաղաքական և հանրապետական և տեղական ղեկավարությունը¹⁹: Միաժամանակ, խորհրդային էլիտան, ի տարբերություն այսօրվա էլիտայի, որին դեռ կանդորադառնանք, դեռևս ամբողջովին փակ ու ինքնավերարտադրվող չէր: Կուսակցական ղեկավարությունը մշակել էր կադրերի համալրման յուրօրինակ մոդել, ըստ որի թեկնածուն պետք է ապացուցեր հավատարմությունը կուսակցությանն ու մինչև կարևոր պաշտոնի նշանակվելն անցներ որոշակի դպրոց: Պարտադիր էր դարձել բարձրագույն կուսակցական դպրոցներում սովորելը:

¹⁹Մարմաշենում անհատական հարցազրույցի ժամանակ բանասացներից մեկը ներկայացրեց դիտարկում, որ աշխատում էին երիտասարդներին բարձր պաշտոնների չնշանակել: Փոփոխություններ կատարվեցին միայն 1980-ական թթ., երբ տարբեր պաշտոններում նշանակվեցին երիտասարդներ:

Ընտանիքը, բնականաբար, նույնպես իր գործունեությունը պլանավորում էր ընդունված չափանիշներից ու սկզբունքներից ելնելով:

Սոցիալական հիերարխիայում բարձր դիրքի հասնելու կարևոր պայմաններից մեկը բարձրագույն կրթությունն էր: Տարբեր ուսումնական հաստատություններում սովորում էին բոլոր սոցիալ-մասնագիտական խմբերի ներկայացուցիչները: Հաջորդ քայլը սոցիալական շարժունության ապահովման տեսանկյունից կարիերայի համար հարմար միջավայրում հայտնվելն էր: Գյուղն ու գյուղական հիմնարկ-ձեռնարկություններն այս տեսանկյունից կորցրել էին իրենց գրավչությունը, սակայն համակարգը կադրերի պակասի խնդիրը լուծում էր պարտադիր գործուղումների միջոցով. բուհն ավարտած երիտասարդ մասնագետը մի քանի տարով գործուղվում էր որևէ գյուղ և հետո միայն տեղափոխվում ավելի հարմար վայր: Գործուղվում էին ոչ միայն գյուղեր, այլև բավականին արագ տեմպերով զարգացող արդյունաբերական կենտրոններ:

Չնայած պարտադիր նշանակումներին, Հայաստանում գյուղական ու քաղաքային բնակավայրերը, ինչպես և ընդունված է աշխարհում, ունեին տարբեր գրավչություն և երիտասարդությանը տեղում պահելու տարբեր հնարավորություններ: Գյուղերը (այս շրջանից կարող ենք հանել Արարատյան դաշտի ու խոշոր կենտրոնների հարևանությամբ գտնվող որոշ բնակավայրեր) քաղաքներին էապես զիջում էին այս տեսանկյունից, քանի որ, չնայած ղեկավարության հայտարարություններին, դեռևս շարունակում էին արտահայտված մնալ գյուղի ու քաղաքի տարբերությունները, քաղաքում ավելի մեծ էին սոցիալական շարժունության հնարավորությունները: Գրավչությունը կորցնում էին նաև գյուղատնտեսական զբաղմունքները, հատկապես

բարձրագույն կրթությամբ մասնագետների համար: Փոքր գյուղերում սահմանափակ էին նաև ոչ գյուղատնտեսական աշխատանք գտնելու հնարավորությունները, ուստի պատահական չէր արդյունաբերական ձեռնարկությունների հիմնումը²⁰: Սա ևս արվում էր գյուղական կենցաղը քաղաքայինին մոտեցնելու ակնկալիքով, քանի որ երիտասարդին տրվում էր ձեռնարկությունում աշխատելու, կայուն աշխատավարձի, միաժամանակ նաև գյուղատնտեսական զբաղմունքներից կտրվելու հնարավորություն: Չնայած սրան, Հայաստանի գյուղերի մեծ մասը խորհրդային շրջանում շարունակում էր ծերանալ ու դատարկվել, ինչը չէր թաքցնում նաև խորհրդային տարիների վիճակագրությունը:

Փաստորեն, խորհրդային շրջանի հայկական ընտանիքը, եթե նայենք մշակույթի զարգացման տեսանկյունից, հայտնվել էր որոշակի երկվության մեջ: Եվ գյուղում և քաղաքում ապահովված էին կենսական նվազագույնը բոլոր սոցիալական ու մասնագիտական խմբերի համար: Ցածր աշխատավարձը ինչ-որ ձևով փոխհատուցելու հնարավորությունները նույնպես շատ էին: Հիշենք ցայսօր շարունակվող կենսաթոշակառուների դժգոհությունը, որը հիմնավորվում է խորհրդային շրջանի պարզ վիճակագրական տվյալներով. 70-130 ռուբլի կենսաթոշակը ցանկացած մեծահասակի տալիս էր ոչ միայն առանց լուրջ բարդությունների գոյատևելու, այլ նաև որոշ խնայողություններ անելու հնարավորություններ: Ապահովված էին նաև երիտասարդ ընտանիքները: Քաղաքային միջավայրում երիտասարդության համար գրավիչ էր հատկապես բնակարանային խնդրի լուծման

²⁰ Հաճախ ձեռնարկությունում աշխատանքի ընդունելիս հաշվի չէին առնում նաև մասնագիտության համապատասխանությունը կամ կրթությունը: Կարևորն աշխատատեղեր ստեղծելն ու երիտասարդությանը գյուղում պահելն էր:

հնարավորությունը: Հիմնարկ-ձեռնարկությունում մի քանի տարի աշխատելը երաշխիք էր բնակարան ունենալու, իսկ բնակարանի առկայությունը հայոց մշակույթում ոչ միայն ընտանիքի կայացվածության, այլև ապահովվածության կարևոր նախապայման է: Միաժամանակ, ապահովվածությունը սահմանափակում էր բազմաթիվ ընտանիքների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունները: Ավելին, ինչպես ցույց են տալիս ազգագրական նյութերը, շատ հաճախ ընդհանրապես չէր առաջադրվում ակտիվության ու նախաձեռնությունների խնդիր, քանի որ բոլոր հիմնական ռազմավարական որոշումները կայացվում էին ընտանիքից դուրս, առանց վերջինիս համաձայնության: Առանց հանրային քննարկումների էր զարգանում խորհրդային արդյունաբերությունը, հիմնվում տարբեր արդյունաբերական ձեռնարկություններ, գյուղերում առանց գյուղացիների կարծիքը հաշվի առնելու, հիմնականում շրջումից եկած հրահանգներով էր վարվում գյուղատնտեսությունը:

Նույնն էր նաև մշակութային քաղաքականության ոլորտում:

Միաժամանակ, եթե անդրադառնանք ազգագրական նյութերին, կարող ենք արձանագրել, որ հասարակության մեծ մասը գոհ էր իր վիճակից: Ապահովված նվազագույնը, երեխաների ապագան պլանավորելու հնարավորությունները, խնայողությունները, որոշ դեպքերում նաև հանրային բարիքի յուրացման հաշվին ընտանիքի բարեկեցությունն ապահովելու տարբերակները դրական վերաբերմունք էին ձևավորում համակարգի հանդեպ:

Եվ քաղաքային և գյուղական ընտանիքներում քննարկվող ժամանակահատվածում լուրջ փոփոխություններ էին կատարվում նաև ներընտանեկան, ազգակցական ու դրացիական

հարաբերություններում: Գերդաստանը, որը բնութագրվում էր ուղղահայաց կապերի գերակշռությամբ, ընտանիքի գլխավորի անառարկելի հեղինակությամբ, Արևելյան Հայաստանում սկսեց քայքայվել բավականին վաղ, ինչն իր հերթին հանգեցրեց նաև դերային գործառույթների, ընտանիքում գործառույթների բաշխման, դաստիարակության նորմերի էական փոփոխությունների:

Խորհրդային շրջանին վերաբերող գրականությունում ցույց են տրված այն փոփոխությունները, որոնք կատարվեցին հատկապես 1950-60-ական թթ.. ընտանիքներում. դրանք կնոջ կարգավիճակի աճի, ընտանեկան բյուջեի պլանավորմանը ընտանիքի բոլոր անդամների մասնակից դառնալու և այլ իրողությունների հետ են կապված: Միաժամանակ, կրթական ցենզի աճը բնականորեն հանգեցնում է պահանջմունքների աստիճանական աճի, թեկուզ համակարգի ընձեռած հնարավորությունների շրջանակներում: Խոսքը վերաբերում է և կենցաղի կազմակերպմանը, և հանգստին ու ժամանցին, և երեխաների դաստիարակության ու կրթության խնդիրներին: Գյուղական միջավայրում այդ ամենն արտահայտվում էր գյուղական կենցաղի որոշ ատրիբուտներից հրաժարվելով: Այսինքն, խզումը, որի մասին խոսեցինք վերը, սկսել էր աստիճանաբար արտահայտվել: Մեծահասակների «եթե գյուղում ես ապրում, պետք է անասուն էլ պահես, հող էլ մշակես» կարգախոսին փոխարինելու էր գալիս այլ մտայնություն, ըստ որի կարելի է գյուղում ապրել նաև առանց անասուն պահելու ու հող մշակելու: Այսինքն, տեղի էր ունենում նաև կողմնորոշումների, մոտեցումների ու սկզբունքների փոփոխություն, որը որոշ դեպքերում էլ ավելի էր խորացնում կամ արտահայտված դարձնում սեռատարիքային տարբեր խմբերի հակասությունները:

Մեծահասակների մեծ մասը ցավագին էր տանում ոչ միայն գյուղերի ծերացումն ու դատարկվելը, այլև այն, որ քաղաքն արագորեն ազդում էր երիտասարդների կողմնորոշումների ու մոտեցումների վրա:

Էական փոփոխությունների էր ենթարկվել նաև ազգակցական համակարգը: Գյուղերում, ի տարբերություն քաղաքային միջավայրի, ազգակցական շփումները, օգնությունն ու փոխօգնությունը համեմատաբար ավելի արտահայտված էին: Սակայն դրանք աստիճանաբար մղվում էին տոնածիսական համակարգ՝ հարսանիք, թաղման ծեսեր, տարբեր տոներ ու արարողություններ, առտնին կյանքում ստանալով ավելի շատ սիմվոլիկ նշանակություն: Այս իրողությունն արտահայտված էր նաև ներընտանեկան հարաբերություններում: 1970-80-ական թթ. գյուղական միջավայրին վերաբերող հետազոտություններում բազմաթիվ են օրինակները, երբ որպես ընտանիքի գլխավոր, մեծահասակների առկայության դեպքում, հանդես են գալիս երիտասարդները, որոնք ունեն ավելի բարձր կրթական ցենզ, ակտիվ են ու ներկայացնում են ընտանիքի շահերը նաև հասարակական հարաբերություններում: Բացառություն չեն դեպքերը, երբ որպես ընտանիքի փաստացի գլխավոր հանդես են գալիս կանայք: Այսինքն, գործ ունենք ներընտանեկան և ազգակցական հարաբերություններում փոխապայմանավորված գործընթացների հետ, որոնք իրենց հերթին ազդված են արդեն ընդհանուր փոփոխություններից:

Որպես ազգակցական հարաբերությունների բնույթի վրա ազդող գործոն պետք է դիտարկել նաև ընտանիքների բաժանման գործընթացը. երկսերունդ երիտասարդ ընտանիքներում արդեն ավելի ազատ են ներընտանեկան հարաբերությունները:

Քաղաքային միջավայրում գործ ունենք ավելի ինտենսիվ փոփոխությունների հետ, չնայած հատկապես քաղաք տեղափոխվելու առաջին տարիներին ընտանիքները շարունակում են ակտիվ կապեր պահպանել գյուղաբնակ ազգականների հետ, եթե հնարավոր է, դրանք ծառայեցնել որոշ խնդիրների լուծմանը՝ կրթություն, աշխատանք, բնակարանային հիմնախնդիր:

Ժամանակի ընթացքում արդեն ազգակցական հարաբերությունները ձեռք են բերում առտնին շփումների, փոխայցելությունների, անհրաժեշտության դեպքում նաև փոխօգնության կամ օգնության բնույթ, սակայն քաղաքում դրանք չունեն նույն ինտենսիվությունը, ինչ գյուղում: Խզվում կամ ավելի հազվադեպ են դառնում կապերը գյուղաբնակ ազգականների հետ, սահմանափակվելով կարճատև այցելություններով, երեխաներին գյուղ ուղարկելով, գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանում մերձավոր ազգականներին օգնելով: Քաղաքային միջավայրում աստիճանաբար ավելի կարևոր են դառնում, իսկ 1970-80-ական թթ. կարելի է ասել առաջնային են համարվում ընկերային, միջխմբային շփումները, հիմնված սոցիալական ու մասնագիտական ընդհանրությունների ու շահերի վրա: Քաղաքում դրանք վերելքի, դիրքի ու ապահովվածության ավելի լուրջ երաշխիքներ են, քան ազգակցական համակարգերը:

Եթե այս ամենը գնահատենք ազգաբանական, հասարակագիտական տեսանկյունից, ապա կարելի է արձանագրել, որ նման միտումը դրական է, քանի որ ընտանիքին ու վերջինիս առանձին անդամներին ընծեռում է իրական ընտրության, սոցիալական կապերի ու հարաբերությունների օգտագործման ճանապարհով սոցիալական սանդղակում ավելի բարձր դիրք գրավելու հնարավորություններ, միաժամանակ թույլ

տալով պահպանել ու ավելի խորացնել քաղաքային միջավայրում,
հատկապես խոշոր քաղաքներում ձևավորված սոցիալական ու
մասնագիտական բազմազանությունը:

Գլուխ երկրորդ
Քաղաքական ու տնտեսական
վերափոխումների ազդեցությունը
հայկական ընտանիքի վրա

1980-ական թթ. երկրորդ կեսը-1990-ական թթ. սկիզբը դարձան հայաստանյան հասարակությունում ու հայկական ընտանիքում կատարվող փոփոխությունների կարևորագույն փուլերից մեկը:

Գորբաչովյան վերակառուցումը խորհրդային համակարգն առողջացնելու ու փրկելու ընդամենն անհաջող փորձ էր: Սակայն այն ավելի կարևոր էր հասարակական, մշակութային տեսանկյունից:

Ազգաբանության մեջ վաղուց ապացուցված է, որ տարբեր արգելանքները (թափուներ), չնայած դրանց մի մասի՝ առաջին հայացքից իռացիոնալ լինելուն, կատարում են հասարակական ներդաշնակության և կայունության ապահովման ու վերարտադրության կարևոր գործառույթ: Դրանց ազդեցությունը էական է հատկապես այն հասարակություններում, որոնցում առաջնային են ուղղահայաց, հիերարխիկ կապերը: Խորհրդային միությունը, որպես փակ քաղաքական, տնտեսական ու մշակութային համակարգ, բնութագրվում էր հենց նման կապերի գերակշռությամբ:

Վերակառուցումը հասարակությանն «ազատագրեց» բազմաթիվ թաբուների ազդեցությունից. 1980-ական թթ. երկրորդ կեսերից արդեն կարելի էր քննադատել և՛ կենտրոնական ղեկավարությանն ու տեղական նոմենկլատուրայի ներկայացուցիչներին և՛ բարձրացնել ազգային բովանդակությամբ հարցեր:

Միաժամանակ, եթե դարձյալ դիմենք ազգաբանությանը, կարող ենք փաստել, որ թաբուներից ազատագրվելը որոշ դեպքերում անսպասելի է տարբեր հասարակությունների համար: 20-րդ դարում բազմաթիվ նախադեպեր գրանցվել են աֆրիկյան ու ասիական երկրներում ու հասարակություններում: Գաղութային լծից ազատագրվելուն ուղղված ազգային ազատագրական պայքարն անկախություն ձեռք բերելուց հետո շատ դեպքերում սկիզբ է դնում քաղաքացիական պատերազմների ու բախումների, զանգվածային օտարման պետությունների ու հասարակությունների ներսում: Բազմէթնիկ կազմ ունեցող պետություններում այս իրավիճակում օրինաչափ են դառնում նաև անհամաձայնություններն ու հակասությունները նույն պետությունում բնակվող էթնոսների ու ենթաէթնիկ խմբերի միջև²¹:

Թաբուներից ազատվելն անսպասելի էր նաև հայկական ընտանիքի համար²²: 1980-ական թթ. երկրորդ կեսերին «ազատագրման գործընթացն» սկսվել ու շարունակվում էր հիմնականում հրապարակներում: Սկզբնական շրջանում ակտիվ էր հատկապես քաղաքային միջավայրը: Գուցե նման կարծիքը վիճարկելի է, բայց այս իրավիճակը կարելի է բնութագրել որպես

²¹Նման իրավիճակների վերլուծությունը տես՝ Кл. Гирц, Интерпретация культуры, М., 2004, էջ 225-293:

²²Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ շարժման առաջին շրջանում շատերը վախենալով էին հակադրվում համակարգին ու ղեկավարությանը. դեռևս թարմ էին 1930-ական թթ. ռեպրեսիաները:

զանգվածային էյֆորիա, երբ կար նաև **Նմանակման ու կողքինից ետ չմնալու ձգտում**: Բազմաթիվ մարդիկ միտինգներին մասնակցում էր, որովհետև այդպես վարվում էին բոլորը: Նմանակման, կողքինից ետ չմնալու ցանկությունը, անհատական ու խմբային մակարդակներից զատ, դրսևորվում էր նաև ռեգիոնալ մակարդակում: Հանրապետության խոշոր կենտրոններ Գյումրիում ու Վանաձորում ձգտում էին հավաքել տասնյակ հազարավոր մասնակից ունեցող միտինգներ, քանի որ Երևանում ցուցանիշն արդեն գերազանցել էր հարյուր հազարը, գյուղերում բողոքի ակցիաներ էին կազմակերպվում կամ պատվիրակներ ուղարկվում քաղաքներ, որովհետև այդպես էին վարվում հարևան նաև գյուղերը: Թվարկումը կարելի է շարունակել: Միաժամանակ, ցույցերի զանգվածային լինելն **ապահովության ու կոլեկտիվ պաշտպանվածության** մթնոլորտ էր ստեղծում: Ոչ երկրորդական էր նաև, որ բողոքի զանգվածային ակցիաները դեռևս անմիջական վտանգ չէին ներկայացնում անհատի ու ընտանիքի համար, քանի որ դրված չէր անկախության ու ընտանիքի «նյութական բազայի» հիմքերի փոփոխության խնդիր:

Շարժման առաջին ամիսներին վերաբերող նյութերն ու մամուլի հրապարակումները թույլ են տալիս կատարել ազգագրական տեսանկյունից ուշագրավ ևս մեկ դիտարկում: Շարժման զանգվածային, համազգային բնույթը հաճախ երկրորդ պլան էր մղում համակողմանի տեղեկացվածության խնդիրը: Վիճակագրական կամ սոցիոլոգիական հարցումների տվյալների բացակայությունն այսօր թույլ չի տալիս պարզել, թե շարժման սկզբում ինչ գիտեր հասարակությունն արցախյան հիմնախնդրի և Արցախի վիճակի մասին: Շատերը, խորհրդային համակարգի տոտալ հարկադրանքի հետևանքով նույնիսկ տեղյակ չէին հիմնախնդրի էությանը: Կարծում ենք, որ տեղեկացվածության

բարձր մակարդակ չէր արձանագրվի, քանի որ խորհրդային շրջանում ընդունված չէր բարձրաձայնել ազգային խնդիրների մասին. Ժողովուրդների եղբայրական ընտանիքում լուծված էին կնճռոտ ազգային հարցերը²³: Հիմնական տեղեկատվությունն այսպիսի պայմաններում ապահովվում էր միտինգներում, հավաքներում, «Ղարաբաղ» կոմիտեի անդամների, մտավորականների հրապարակային ելույթների միջոցով:

Բնական է, որ այս ամենն ուղղակի ազդեցություն ունեցավ հայկական ընտանիքի վրա: Ընտանիքն արագորեն ներգրավվեց այնպիսի գործընթացների ոլորտ, որոնց հակազդելուն կամ որոնցում որպես *սուբյեկտ* հանդես գալուն դեռևս պատրաստ չէր:

Կատարվեց ազգաբանական տեսանկյունից ուշագրավ ձևափոխում: Թաբուների պայմաններում գործառնող հասարակությունը, կարծես միանգամից ստանալով բացարձակ ազատություն, հաճախ չգիտեր, թե ինչպես պետք է վարվել նույն այդ ազատության հետ և ինչին պետք է ծառայեցնել ստեղծված հնարավորությունները, հատկապես քաղաքական ու տնտեսական նոր համակարգեր ձևավորելու խնդրում²⁴: Թաբուների

²³Ետխորհրդային կոնֆլիկտներին վերաբերող նյութերը ցույց են տալիս, որ խորհրդային շրջանում դրանցով զբաղվելը հանդիսացել է մտավորականության առանձին խմբերի ու այլախոհների «մենաշնորհը»: Հայաստանն այս առումով բացառություն չէր. 1980-ական թթ. ստորագրահավաքները կազմակերպվում էին գաղտնի, քանի որ կար դատապարտվելու վտանգ:

²⁴Շարժման կարգախոսները նույնպես ասվածի ապացույցն են: Դրանք դեռևս հիմնականում զգացմունքային են. կարևորվում են իդեալականացված ազգայինն ու պատմական արդարության վերականգնումը, հասարակական, ընտանեկան ու անհատական ռեսուրսն ուղղված է ազգային գերխնդրի լուծմանը: Արցախյան շարժման և հայ ինքնության ձևափոխման հիմնախնդիրների ազգաբանական վերլուծությունը մանրամասն տես՝ Հ. Մարության, Հայ ինքնության ձևափոխման հիմնական ուղղությունները Ղարաբաղյան շարժման տարիներին.- «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման

բացակայությունը նպաստում է նաև գերնպատակի՝ Արցախյան հիմնախնդրի լուծման եղանակների պարզունակացմանը: Հայկական հանքային ջուրը, Նաիրիտ գործարանի արտադրանքը դառնում են տնտեսական, ազգային համախմբվածությունը՝ քաղաքական, հայրենասիրական երգերն ու պարերը, ֆիդայական շարժման ականավոր հերոսների հիշատակի վկայակոչումը՝ մշակութային անվտանգության ապահովման ու վերարտադրության կարևորագույն երաշխիքներ: Ժողովրդի պատմական հիշողությունից «պեղվում», կարևորվում ու շրջանառության մեջ են դրվում արժեքներ, որոնք հասարակության կամ վերջինիս առաջնորդների կարծիքով կարող են տևական դարձնել ազգային համախմբվածությունն ու այդ ճանապարհով՝ ազգային խնդիրների լուծումը: Հասարակությունը, նաև՝ հայկական ընտանիքը դեռևս պատրաստ չէ նոր պայմաններին հարմարվելու, արագ լուծումներ ընդունելու ու վճիռներ կայացնելու: Ավելին, բազմաթիվ դեպքերում նույնիսկ մոտ ապագայի հնարավոր վտանգներն ու բարդությունները չեն հաշվարկվում ու կանխատեսվում: Հայկական ընտանիքը չկարողացավ ոչ միայն ակտիվորեն մասնակցել իրականացվող փոփոխություններին, այլ, ինչպես ցույց են տալիս ազգագրական նյութերը, մինչև վերջ հասկանալ դրանց էությունն ու իմաստը:

Նույն տրամաբանությամբ կատարվեցին իշխանության փոխանցումն ու նորանկախ Հայաստանի քաղաքական համակարգերի ձևավորումը: 1990-ական թթ. սկզբներին քաղաքական իշխանությունը «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին և Շարժման աչքի ընկած գործիչներին փոխանցվեց առանց

հեռանկարները», Հայագիտական միջազգային առաջին համաժողով, զեկուցումների դրույթներ, Եր., 2003, էջ 55-56; *Մույնի*՝ Սունգաիթեան ջարդեր, իրողութիւն եւ պատմական յիշողութիւն.-«Հանդէս Ամսօրեայ» հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա, 2002, էջ 158-206:

կոնկրետ նախապայմանների: Արցախյան շարժման միջոցով, բարդության իշխանությունը վերցրած քաղաքական ուժը հասարակությանը չներկայացրեց պետություն կառուցելու, ռազմավարական ու մարտավարական գործողությունների ծրագրեր:

Կատարվեց իշխանության արագ փոփոխություն: Որակապես նոր իրավիճակում իշխանությունները հընթացս ձեռնամուխ եղան անկախ պետականության կերտման գործին²⁵, ինչն ընթանում էր բարդ արտաքին քաղաքական իրավիճակում. շրջափակում Ադրբեյջանի ու Թուրքիայի կողմից, էներգետիկ ճգնաժամ, մինչև 1994թ. շարունակված պատերազմ, երկրաշարժի չհաղթահարված հետևանքներ:

Այս իրողությունները, զուգակցվելով քաղաքական համակարգի ու իշխանության ձևավորման սկզբունքների հետ, ինչպես ցույց տվեց հաջորդող տարիների փորձը, դարձան պետականության կայացմանը խոչընդոտող բարդություններ: Արդյունքում ունեցանք այնպիսի համակարգ, որը չի տեղավորվում առողջ, կենսունակ համակարգերի ձևավորման տրամաբանության շրջանակներում: Նախկին քաղաքական էլիտայի մի մասը, որը, ինչպես նշեցինք, չունեի իրական էլիտայի որակներ, սերտաճեց նոր էլիտայի հետ: Նոր էլիտան իր հերթին դեռևս կայացման փուլում էր: Այսինքն, քաղաքական իշխանություն Չայաստանում ձևավորեցին ուժեր, որոնք չունեին էլիտայի որակներ, պետական շինարարության հստակ մեխանիզմներ ու բավարար փորձառություն. Չայաստանում քաղաքական իշխանությունն անցավ քաղաքական էլիտայի որակներ ու քաղաքական

²⁵Արագ կատարվեց նաև նախկին համակարգի որոշ ներկայացուցիչների սերտաճումը նոր համակարգ: Պատգամավորներ ու ակտիվ հիշ-ականներ դարձան նախկին կուսակցական գործիչները, որոնց մի մասը նոր իրավիճակում կարողացավ պահպանել նաև նախկին ազդեցությունը:

գործունեության փորձառություն չունեցող ուժերին՝ «Ղարաբաղ» կոմիտե, ՀՀԸ: Այս իրավիճակում նոր իշխանության համար առաջնային համարվեցին ոչ այնքան մասնագիտական կարողությունները, փորձը, հմտությունը, որքան անձնական կապերը, ծանոթությունները, համատեղ անցած ճանապարհը²⁶:

Նույն տրամաբանությունն էր ընկած տնտեսական վերափոխումների հիմքում. ձեռնարկությունների ղեկավարներ դարձան կամ ՀՀԸ-ին հավատարմություն հայտնած նախկին ղեկավարները, կամ տարբեր «տրամաչափի հիշականները»²⁷, որոնք և հետագայում սեփականաշնորհեցին դրանք:

Քաղաքական համակարգի ձևավորման տրամաբանությունը, որն ըստ էության «հակատրամաբանություն» էր, փաստորեն փոխանցվեց նաև տնտեսական հարաբերությունների դաշտ, իսկ շոկային թերապիայի՝ Հայաստանում ընդամենը մի քանի տնտեսագետի հայտնի մեթոդը, զուգակցվելով նշված գործոնների հետ, թույլ տվեց հիմնավորել ցանկացած բացթողում, մինչև վերջ չնշակված ծրագիր ու վերափոխում:

Համակարգի ձևավորման ու բացասական իրողությունների վերարտադրության տեսանկյունից կարևոր էր նաև, որ 1990-ական թթ. սկզբների Հայաստանում դեռևս չկար ընդդիմություն: Կոմկուսը սպառել էր վարչական ռեսուրսն ու փորձում էր ընդամենը հարմարվել նոր իրավիճակին²⁸, իշխանական վերնախավը դեռևս

²⁶ Հիշենք առաջին նշանակումները, կամ այն թե ովքեր էին ստանձնում նախարարական ու այլ պաշտոններ:

²⁷ Այս առումով ամենահիշարժանը թերևս ՆԳ նախկին նախարար Վանո Սիրադեղյանի անեկդոտանման նշանակումներն էին, երբ այս կամ այն շրջանի միլիտետ էին դառնում նկարիչներ, գրողներ, լավ ծանոթներ:

²⁸ ՀԽՍՀ կոմունիստական առաջնորդ Կարեն Դեմիրճյանը, մինչև 1998թ. ընտրությունները, բավարարված էր ձեռնարկության տնօրենի պաշտոնով այն դեպքում, երբ Ադրբեջանի ու Վրաստանի իր նախկին գործընկերներն

այնքան պառակտված չէր, որ վերջինիս բեկորները զբաղեցնեն ընդդիմադիր քաղաքական դաշտը, հասարակության անբավարարվածությունն էլ չէր հասել 1990-ական թթ. կեսերի կուլմինացիային: Նույնն էր նաև նոր իշխանությունների գիտակրթական ու մշակութային քաղաքականությունը²⁹: Այսինքն, հետևելով մեր ազգագրագետ գործընկերների օրինակին³⁰, կարող ենք արձանագրել, որ հայաստանյան նոր ձևավորվող էլիտան չուներ իրական էլիտային բնորոշ որակներ, «կեղծ էլիտա» էր և հետագա տարիներին ամեն ինչ արեց միայն իր վերարտադրությունն ապահովելու համար:

Ի՞նչ տվեց այս ամենը հայկական ընտանիքին:

Քաղաքական գործընթացներին ու արցախյան շարժմանը ընտանիքի մասնակցության հետ կապված որոշ հարցերի անդրադարձանք:

Հանրապետության տարբեր բնակավայրերում գրառված ազգագրական նյութերը թույլ են տալիս արձանագրել, որ շատ դեպքերում հասարակությունը, այդ թվում՝ ընտանիքը, չգիտեին թե ինչ է լինելու հետո և ինչ քայլեր պետք է արվեն կյանքի բնականոն ընթացքն ապահովելու համար: 1980-ականների երկրորդ կեսին դրված չէր քաղաքական անկախության խնդիր և փորձ էր արվում լուծել դարաբաղյան հիմնահարցը: Ընտանիքը դեռևս պատրաստ չէր արմատական քաղաքական, տնտեսական, արժեքային-մշակութային փոփոխությունների: Պատրաստ չէր մի քանի առումներով. ա/ ***որպես օբյեկտ տարբեր գործընթացներում***

արդեն վերադարձել էին մեծ քաղաքականություն ու իրենց ձեռքը վերցրել կառավարման լծակները:

²⁹Հիշենք վերափոխումների «տեսաբան» Յ. Բագրատյանի հայտնի հայտարարությունները գիտնականների մասին:

³⁰Ա. Թադևոսյան, Քաղաքացիական հասարակության հիմքերն ու հնարավորությունները Հայաստանում, ՌԱՀՀԿ, Եր., 2000:

հանդես գալու, քանի որ չունեն քաղաքական մշակույթի բարձր մակարդակ ու խորհրդային շրջանում հանդես էր եկել ընդամենը որպես կատարող, բ/ *որպես անմիջական իրագործող*, քանի որ բավարար պատկերացումներ չունեն ոչ նախատեսվող վերափոխումների, ոչ տնտեսավարման նոր ձևերի և ոչ էլ նոր արժեքային համակարգերի մասին:

Ստեղծված իրավիճակում, երբ բնակչության հիմնական մասը պատրաստ չէր արմատական վերափոխումների, չափազանց բարդ էր դրանց արդյունավետության ապահովումը:

Ասվածի լավագույն օրինակը 1991թ., անկախացումից անմիջապես հետո իրագործված «Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման» գործընթացն էր, որը դարձավ շուկայական տնտեսության ու մասնավոր սեփականության ինստիտուտների ամրագրման առաջին քայլը, ազդելով գյուղացիության բոլոր սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական խմբերի, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտների վրա³¹:

Դիտարկենք հողային վերափոխումների հետ կապված որոշ հարցեր, ցույց տալու համար, որ ցանկացած վերափոխման համար, ի թիվս տնտեսական ու քաղաքական գործոնների, կարևոր են նաև նախընթաց զարգացմամբ ու փորձով պայմանավորված սոցիալ-մշակութային գործոնները:

Հայաստանի դեպքում դրանք առավել կարևորվում են, եթե հաշվի առնենք 20-րդ դարում գյուղացիության թռիչքաձև զարգացումն ու այն, որ 1960-ական թթ.-ից գյուղական միջավայրում նոր արձանագրվում էին կայունացման միտումներ:

Հանրապետության ողջ տարածքում սեփականաշնորհման արդեն առաջին փուլում կարևոր նշանակություն են ունեցել ոչ

³¹ Մանրամասն տես՝ Մ. Գաբրիելյան, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001:

միայն *տնտեսական գործոնները*՝ գյուղատնտեսության զարգացման մակարդակ, ճյուղային կառուցվածք, մասնագիտացում, այլև սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական, ունեցվածքային խմբերի վերաբերմունքի և մոտեցումների հետ կապված հարցերը, որոնք, վերջին հաշվով, պայմանավորել են նաև առանձին տարածաշրջանների, բնակավայրերի ու ընտանիքների *մեկնարկային հնարավորությունները*³²:

Սեփականաշնորհմանը գյուղացիության մասնակցությունը պայմանավորող գործոնները բազմաթիվ են: *Տնտեսական* հարթությունում դրանք կապված են գյուղատնտեսական գործունեության արդյունավետության, եկամուտների, մասնագիտացման, համայնքների հնարավորությունների հետ: *Ընտանեկան* մակարդակում արդեն կարևորվում են վերջինիս սոցիալական ու մասնագիտական կազմը, ունեցվածքային հնարավորությունները, զբաղվածության ոլորտները, ընտանեկան բյուջեում գյուղատնտեսական ու ոչ գյուղատնտեսական զբաղմունքներից ստացվող եկամուտների հարաբերակցությունը: Գրառված ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ 1991թ. սեփականաշնորհման ինտենսիվ քարոզչության պայմաններում³³ գյուղացիության որոշ մասի մոտ արտահայտված էր հողի

³²Մեկնարկային հնարավորություններ ասելով նկատի ունենք սեփականաշնորհմանը ընտանիքի մասնակցությունը պայմանավորող գործոնների ամբողջությունը:

³³Բազմաթիվ գյուղերում արձանագրվել են «վերևից» միջամտության դեպքեր: Այսպես, եթե կոլեկտիվի անդամների ժողովն ընդունել է կոլեկտիվ տնտեսության պահպանման որոշում, գյուղ կամ շրջան է գործուղվել ՀՀԸ ակտիվիստներից մեկը, որի նպատակը եղել է սեփականաշնորհումն ապահովելը: Այս փաստը նշում էին ինչպես գյուղացիները, այնպես էլ նախկին և ներկայիս պաշտոնյաները, որոնք խոստովանում էին, որ եղել է

սեփականատեր դառնալու ցանկությունը: Այն որպես գերակա ընդունելով հանդերձ, նշենք, որ եղել են նաև տարբերակումներ:

Դրանք կարելի է ընդհանրացված ձևով խմբավորել հետևյալ կերպ՝ *ա) վերափոխումների փուլայնությունն ապահովելու և բ) դրանք գյուղատնտեսության բոլոր ճյուղերում միաժամանակ իրականացնելու կողմնակիցներ/ընտանիքներ:*

Առաջին մոտեցման կողմնակիցները, ինչպես ցույց են տալիս գրառված նյութերը, եղել են հիմնականում խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում ընդգրկված մեծահասակները: Նրանց մեծ մասը, կողմ լինելով վերափոխումներին, առաջարկել է տարբերակներ, որոնք կընձեռեին տնտեսավարման նոր ձևերի աստիճանական ամրագրման հնարավորություններ: Դրանք հանգում էին հետևյալին՝ ընտրվում են առանձին շրջաններ ու գյուղեր, որտեղ իրագործվում են վերափոխումներ և որոշ ժամանակ անց տարածվում հանրապետությունում, կամ վերափոխումներն իրականացվում են առանձին ճյուղերում: Առաջին հերթին սեփականաշնորհվում են այն տարածքները, որոնք հնարավոր է մշակել մեկ ընտանիքի ուժերով: Հետագայում, երբ ապացուցվում է տնտեսավարման նոր եղանակների արդյունավետությունը, վերափոխումներն ընդունում են զանգվածային բնույթ և իրականացվում գյուղատնտեսության բոլոր ճյուղերում: Այս մոտեցման կողմնակիցների մեջ եղել են նաև պետական պաշտոնյաներ, տնտեսությունների ղեկավարներ, որոնք շահագրգռված են եղել ունեցած հնարավորությունները պահպանելու խնդրում:

Երկրորդ մոտեցման կողմնակիցները եղել են հիմնականում երիտասարդները, որոնց շրջանում գերիշխել է արմատական

զանգվածային սեփականաշնորհման հրահանգ: Տես՝ Մ. Գաբրիելյան, ԴԱՆ, Վայոց ձորի, Շիրակի, Տավուշի, Արարատի, Սյունիքի մարզեր:

վերափոխումներ իրականացնելու ձգտումը³⁴: Նյութի ներկայացման միակողմանիությունից խուսափելու համար փաստենք, որ խմբերի ներսում ևս դրսևորվել են տարբերություններ: Այսպես, մեծահասակների մի մասը, որն ունեցել է անբավարարվածություն կոլեկտիվ կամ պետական տնտեսությունում աշխատանքի արդյունքից, նույնպես կողմ է եղել արագ սեփականաշնորհմանը, իսկ երիտասարդների մի մասն առաջարկել է պահպանել խորհրդային տնտեսավարումը³⁵:

Մտտեցումների նման բազմազանությունն արտացոլում է երկու կարևոր իրողություն: Առաջինն այն է, որ վերափոխումներն անսպասելի էին գյուղացիության մի մասի համար և վերջիններս փուլային տարբերակներն առաջարկում էին իրենց վերաբերմունքը վերջնականապես հստակեցնելու համար: Եվ երկրորդը, չնայած հողի սեփականատեր դառնալու փաստի հանդեպ դրական վերաբերմունքին, այնուամենայնիվ կար որոշակի մտավախություն կապված գործընթացի հաջողության հետ: Այս դեպքում կարևոր է այն, որ խորհրդային համակարգի արմատական վերափոխումների գաղափարը դեռևս հասունացած

³⁴ Երիտասարդների ակտիվությունը պայմանավորված է եղել նաև Արցախյան շարժման հետ կապված ոգևորության և հակադրության «օտար-յուրային» առանցքում օտար-խորհրդայինին բացասական որակներ վերագրելու հետ: Որպես արագ և արմատական վերափոխումների կողմնակիցներ, գյուղերի մեծ մասում նշվում էր նաև կոմունիստական նոմենկլատուրան կամ դրա մի մասը (կոմունիստական վերնախավը երկփեղկված էր և չունեի միասնական դիրքորոշում), որն ուներ առավելագույն օգուտ ստանալու շահագրգռվածություն: Այս դեպքում երկու խմբերի շահերի համընկնելն ունի տարբեր հիմնավորում. երիտասարդության ակտիվ հատվածի համար՝ իշխանության հաստատում, կոմունիստական վերնախավի համար՝ տնտեսական հնարավորությունների ամրապնդում:

³⁵ Շատ գյուղերում նշվում էր, որ «աշխատող մարդու համար ըստ էության տարբերություն չկա, թե ում համար է աշխատում: Պետության համար աշխատելու փոխարեն շատերը, այդ թվում նաև մեծահասակները, նախընտրում էին աշխատել իրենց համար»:

չէր, չնայած գյուղական բնակչության մի մասի անբավարարվածությանը: Այս երկվությունը կարևոր է նաև *մշակութային* տեսանկյունից և խորհրդային շրջանում ընտանիքի հակասական զարգացման միտումների արտացոլումն է:

Փաստորեն, գյուղական միջավայրում կային հակասական ու իրարամերժ մոտեցումներ: Սակայն ի վերջո հաղթեց վերափոխումները բոլոր ճյուղերում միաժամանակ իրագործելու քաղաքականությունը և ընտանիքը ձեռնամուխ եղավ գործընթացին իր մասնակցությունը կարգավորելուն:

Հանրապետության գյուղերի ճնշող մեծամասնությունում արդեն 1991թ. ձևավորվեցին անհատական գյուղացիական տնտեսություններ³⁶, որոնք դարձան տնտեսական գործունեության կազմակերպման հիմնական միավորները:

Տարբերակված մոտեցման բացակայությունը, ինչպես նաև սեփականաշնորհումը հնարավորինս արագ իրականացնելու ձգտումը, բնականաբար, ազդեցին գործընթացի ողջ ընթացքի վրա:

Հայաստանի հողային ֆոնդն ու հողօգտագործման հնարավորություններն էական կախվածության մեջ են բնական պայմաններից³⁷: 1970-80-ական թթ. գյուղատնտեսության զարգացումն ապահովվում էր հսկայական կապիտալ ներդրումներով, ոռոգման համակարգերի կատարելագործմամբ և ոռոգվող հողատարածքների անընդհատ ավելացմամբ³⁸, սակայն

³⁶ Արդեն 1991թ. հուլիսին հանրապետությունում ստեղծվել էր 148.3 հազար գյուղացիական և 24204 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն:

³⁷Գ. Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1975; նույնի՝ Հայաստանը 1920-1990 թթ.; Լ. Վալեսյան, Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրություն, Եր., 1981; Ա. Ի ի աի նյի, Նաեւոեի օի ԿյեոՇաաի Ի այ Ի օաի եա Ի ծեծի աի սօ ծաոծոոի ա ՇածծեՇի ծեե Ածի րի ոեի Ե ՌՆԾ, Ած., 1986:

³⁸Լ. Մանասերեան, Հայաստանի գիւղատնտեսութիւնը յետ-սեփականաշնորհման փուլում-Դրօշակ, 1997, թիվ 11, էջ 27-28; Ա.

դեռևս վերջնականապես հաղթահարված չէր տարբեր շրջանների զարգացման անհամամասնությունը³⁹:

Հողի սեփականաշնորհումը ոչ թե նպաստեց անհամամասնության հաղթահարմանը, այլ ավելի խորացրեց այն:

Բնական է, որ հողային ֆոնդի առանձնահատկությունները պետք է դառնային տարբեր գյուղերում մեկ ժխին հասած հողաբաժնի տարբերությունների պատճառ: Տարբերություններ արձանագրվել են ոչ միայն առանձին մարզերի, այլ հաճախ հարևան գյուղերի շրջանակներում⁴⁰, ընդ որում նույն պատկերն է բոլոր մարզերում, որտեղից կարելի է բերել հարյուրավոր օրինակներ: Միջին հանրապետական ցուցանիշները նույնպես հավաստում են նշվածը. 1991թ. մեկ տնտեսությանը միջին հաշվով բաժին էր ընկնում 1.22 հա գյուղատնտեսական

Օւ ăæăăăéýí, Á. Áñàòðýí, Áđì î ãðãòë-ãñêëá ãñí ãêòó òđãáí èçãòëë á Áđì ýí ñéí é ÑÑĐ, Áđ., 1990:

³⁹ Á. Օւ ăæăăăéýí, Á. Áñàòðýí, նշվ. աշխ., էջ 25-54:

⁴⁰ Վայոց ձորի մարզում սեփականաշնորհված հողատարածքները տարբերվում են և ըստ առանձին տարածաշրջանների՝ Վայք և Եղեգնաձոր, և առանձին գյուղերի: Արեմիում մեկ փայաբաժինը կազմել է 1160քմ վարելահող, 1040քմ խաղողի այգի, 1100քմ պտղատու այգի, 400քմ խոտհարք, Շատինում՝ ընդամենը 1450քմ, Եղեգիսում մեկ ծուխը ստացել է 2500քմ, իսկ Յերմոնում՝ մոտավորապես 4100քմ հողատարածք: Բացի հողաբաժինների չափերից, արտահայտված են հողերի որակական տարբերությունները: Վայքի տարածաշրջանում պատկերն այսպիսին է. Բարձրունիում մեկ փայաբաժինը կազմել է 1.7հա վարելահող և 0.22 հա այգի, Սերսում՝ 3 հա, Կեչուտում՝ 1հա վարելահող, Ջառիթափում՝ 0.48հա վարելահող, 0.17հա ջրովի հող և 0.13հա խոտհարք: Ջառիթափում բարդությունները կապված են սակավահողության ու գյուղում գործած արտադրական ձեռնարկության հարկադիր պարապուրդի, իսկ Կեչուտում՝ Ջերմուկի առողջարանային համալիրի հնարավորությունների կրճատման հետ (նախկինում բնակչության 70%-ն աշխատել է առողջարաններում):

հողատեսք, 1997թ.՝ 1.30 հա⁴¹: Տնտեսությունների գերակշռող մասի հողերը բաժանված են երկուսից չորս հողակտորի⁴²:

Անասունների վաճառք-սեփականաշնորհման ոլորտում տարբերություններն ավելի ընդգծված են: Ի տարբերություն հողի սեփականաշնորհման, գրեթե բոլոր գյուղերում բավականին մեծ է անասուններից հրաժարված ընտանիքների տոկոսը⁴³: Անասունների սեփականաշնորհման ժամանակ անհավասար մեկնարկային հնարավորությունները պայմանավորել են տարբեր գործոններ:

Դրանցից կարևորագույնը կապված է պետական մթերումների՝ օրենքով սահմանված կարգի և չափերի, ինչպես նաև օրենքի այս դրույթի ներկայացման հետ: Ըստ սահմանված կարգի, մթերում կատարվելու էր օրենքի ընդունմանը նախորդող հինգ տարիների միջին ցուցանիշները հաշվի առնելով: Եթե նկատի ունենանք, որ դրանք հաճախ ուռճացված էին, հասկանալի կդառնա այն մտայնությունը, որ պետական մթերում կատարելու դեպքում գյուղացիներին եկամուտ գրեթե չէր մնալու: Նորի կողմնակիցների, անասուններ վերցնելու շահագրգռվածություն ունեցող անձանց կողմից օրենքի այս դրույթն անընդհատ

⁴¹ Ն. Մանասերյան, նշվ. աշխ., էջ 23-24:

⁴² Նույն տեղում:

⁴³ Արեմիում անասուն ստանալու դիմում տվել է ընդամենը 18 ընտանիք: Արդյունքում 600 գլուխ խոշոր եղջերավոր անասունից մոտ 400-ը կենտրոնացել է մեկ հոգու ձեռքում: 170 տնտեսություն ունեցող Եղեգիսում մանր եղջերավոր անասուն ստանալու համար եղել է 50, իսկ խոշորի համար՝ 32 դիմում: 103 տնտեսություն ունեցող Ախարածորում անասուն վերցրել է 17 ընտանիք, Ջառիթափում՝ ընտանիքների 40-45%-ը: Անասնազլխաքանակի բաժանման ուշագրավ տարբերակ է կիրառվել Ազատան գյուղում, որտեղ անասունների սեփականաշնորհումը սկսվել է 1992թ.: Անասնազլխաքանակը բաժանվել է տնտեսությունների ընդհանուր թվի վրա և արդյունքում յուրաքանչյուր ընտանիքի հասել է մեկ կով և մեկ հորթ:

շեշտվում էր և դարձավ անասնազխաքանակից հրաժարվելու հիմնական պատճառ: Ոչ երկրորդական էր այն, որ նոր իշխանությունը շարունակում էր նույնացվել խորհրդայինի հետ և բնակչության մեծ մասի կարծիքով պետական մթերումներն անպայման կատարվելու էին, որովհետև այդպես էր սահմանել պետությունը⁴⁴: Հաջորդ պատճառը կապված է անասնազխաքանակի՝ օրենքով սահմանված նվազագույն քանակության հետ: Միանգամից 5 գլուխ խոշոր և 20 գլուխ մանր եղջերավոր անասուն վերցնելու հնարավորություն ունեցել են ոչ բոլոր ընտանիքները: Ավելին, հաճախ գյուղերում այդքան անասուն չի եղել և ըստ էության, օրենքի այդ դրույթն արդեն կանխորոշել է այն, որ բազմաթիվ ընտանիքներ չէին կարողանալու իրացնել անասուն վերցնելու իրենց իրավունքը⁴⁵:

Հանրապետությունում անասնապահության զարգացման առանձնահատկությունները հաշվի չառնելը նույնպես դարձել է անասնազխաքանակի անարդարացի բաշխման պատճառ: Հարթավայրային գոտու բազմաթիվ ընտանիքներ չեն ունեցել անասնապահական շինություններ և նաև այդ պատճառով են հրաժարվել անասուն վերցնելուց: Նման բարդություններ արձանագրվել են նաև նախալեռնային ու լեռնային գոտիներում: Կարևոր է նաև, որ անասնապահական շինությունների մեծ մասը

⁴⁴Պատահական չէ, որ 1994-2005թթ. գրառված նյութերում բազմաթիվ բանասացներ շեշտում էին, որ եթե իմանային, որ պետությունն ամեն ինչ բարձիթողի է մատնելու, անպայման անասուններ կվերցնեին: Նրանք, ովքեր անասուններ վերցրեցին, հետագայում չկատարեցին իրենց պարտավորությունները, իսկ անասունների մեծ մասը վաճառվեց:

⁴⁵Ազգագրական տեսանկյունից ուշագրավ է, որ որոշ գյուղերում այնուամենայնիվ մշակվել են սահմանվածից պակաս քանակի անասունների ձեռքբերման «այլընտրանքային» տարբերակներ: Հաճախ, ներքին համաձայնությամբ, անասուն վերցրել է մեկ ընտանիք, հետագայում դրանք բաժանվել են ըստ պայմանավորվածության:

վաճառվեց մեկ կամ մի քանի հոգու և գյուղացիները չունեցան այս ճանապարհով անասնապահական կառույցներն ընդարձակելու հնարավորություն: Այս և շատ այլ առանձնահատկություններ հաշվի չառնելու արդյունքում կատարվեց անասնազխաքանակի մեծ մասի կենտրոնացում մի քանի հոգու ձեռքում:

Հողային վերափոխումների և սեփականաշնորհման գործընթացին գյուղացիական տնտեսության/ընտանիքի մասնակցությունը պայմանավորող գործոնների դիտարկումը թույլ է տալիս ընդհանրացնելու անհավասար մեկնարկային հնարավորությունները ձևավորող տարբեր պատճառները:

Դրանցից **առաջինը** կապված է գյուղերի զարգացման անհամանասնության, տարբեր տնտեսական հնարավորությունների հետ: Արարատյան դաշտում, որտեղ կենտրոնացած է հանրապետության գյուղական բնակչության նշանակալից հատվածը, հողատարածքներն ավելի փոքր են, քան նախալեռնային ու լեռնային գոտիներում: Այս իրողությունը հաշվի չառնելը ունեցավ կարևոր ազդեցություն և արդեն 1991թ. սահմանափակեց բազմաթիվ ընտանիքների հնարավորությունները: Արարատյան դաշտի գյուղերում, որտեղ ավելի բարձր էր նաև երիտասարդության տեսակարար կշիռը, ընտանիքն ստացավ մի քանի անգամ քիչ հող, քան այլ գոտիներում: Եթե ավելացնենք նաև տարբեր տարիքային խմբերի՝ գյուղատնտեսություն վարելու հնարավորությունները, ակնհայտ կդառնա, որ սեփականաշնորհման օրենսդրորեն ձևակերպված սկզբունքներն ի սկզբանե հաշվի չէին առնում շատ առանձնահատկություններ: Լեռնային գոտում, երկու-երեք շնչից բաղկացած ընտանիքը ստացավ երեք-չորս և ավելի հեկտար հող, մինչդեռ Արարատյան դաշտում յոթից-ինը անձից բաղկացած

ընտանիքը՝ չորս-հինգ անգամ ավելի պակաս: Փաստորեն, հողի սեփականաշնորհման օրենսդրորեն ամրագրված սկզբունքները հաշվի չէին առնում գյուղատնտեսության զարգացման ու գյուղական բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունները:

Այդ պատճառով էլ սեփականաշնորհման հենց սկզբում գյուղերը, նաև՝ առանձին ընտանիքներ հայտնվեցին անհավասար մեկնարկային պայմաններում: Գյուղերի հնարավորությունների վրա ազդում էին նաև մասնագիտացման գործոնները: Նյութերը ցույց են տալիս, որ հատկապես 1991թ. բարվոք վիճակում էին հայտնվում այն գյուղերը, որտեղ սեփականաշնորհված հողատարածքներում բարձր էր այգիների տեսակարար կշիռը:

Երկրորդ գործոնն ընդհանուր է և կապված է տնտեսական վերափոխումների հետ: Գյուղատնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպումը պայմանավորված է նաև գյուղմթերքների իրացման հնարավորություններով: Խորհրդային պետությունում կար մշակված համակարգ, որի շրջանակներում կազմակերպվում էր իրացումն ու ապահովվում գյուղատնտեսության բնականոն զարգացումը: 1991թ. սկսված փոփոխությունները նախորդեցին տնտեսության այլ ճյուղերի վերափոխումներին, խախտելով շուկայական տնտեսությանն համալիր անցման տրամաբանությունը: Հողի մասնավոր սեփականության պայմաններում ենթակառուցվածքները, վերամշակող ձեռնարկությունները մինչև 1995թ. հիմնականում մնում էին պետական, իսկ պետությունը սահմանափակում էր մասնակցությունը տնտեսության ոլորտում, ինչը չէր կարող բացասական ազդեցություն չունենալ գյուղատնտեսության զարգացման ընդհանուր ընթացքի վրա: Որպես շուկայական հարաբերություններին անցման «առաջնեկ» հանդես եկած գյուղն

ու գյուղական ընտանիքը միանգամից զրկվեցին պետական աջակցությունից, համապատասխան օգնություն չստանալով նաև տնտեսության այլ ճյուղերից:

Երրորդ գործոնն արդեն կապված է գործընթացի իրագործման հետ, որը «քաղաքականացված» էր: Օրենքի ընդունումից մեկ-երկու ամիս անց ողջ հանրապետությունում սկսվեց զանգվածային սեփականաշնորհում: Այս հապճեպությունը գյուղացուն չտվեց վերափոխումների հանդեպ համապատասխան վերաբերմունք ձևավորելու հնարավորություն: Մեկ-երկու ամսում պետական կառույցները չէին կարող ապահովել գյուղացուն սեփականաշնորհման մեխանիզմներին ծանոթացնելու գործընթացը:

Արդյունքում գյուղը (գյուղացին) միանգամից բախվեց սեփականաշնորհման անխուսափելիության փաստին և հաճախ հարկադրված դարձավ հողի սեփականատեր, քանի որ, ըստ գրառված նյութերի, պետական մարմինները բազմիցս հաշվի չեն նստել համայնքի կարծիքի հետ:

Գյուղատնտեսության զարգացման վրա բացասական ազդեցություն ունեցավ նաև այն, որ սեփականաշնորհումը բոլոր ոլորտներում իրագործվեց միաժամանակ: Այն, որ գյուղացու մոտ անհատական սեփականատիրական ձգտումները արտահայտված էին (տնամերձ տնտեսություններից ստացվող եկամտի բարձր տեսակարար կշիռն ասվածի ապացույցներից է), միանշանակ է: Սակայն տնամերձ հողամասերը կազմում էին լավագույն դեպքում 2-2.5 հազար քմ: Սեփականաշնորհումից անմիջապես հետո հողատարածքներն ավելացան մի քանի անգամ և առանց տեխնիկայի հնարավոր չէր ապահովել դրանց մշակումը:

Բնական է, որ մեկնարկային հնարավորությունների անհավասարությունը գյուղական միջավայրում պետք է ձևավորեր

նաև դրանք մեղմելու, սահմանափակելու տարբերակներ: Կարելի է առանձնացնել մի քանի հիմնական տարբերակ՝ *համայնքային, ազգակցական, խմբային, թիմային*⁴⁶:

Առաջինի հիմքում ընկած էր ամբողջ համայնքի կամ նրա անդամների մեծ մասի կարծիքը հաշվի առնելով որոշումներ ընդունելու սկզբունքը: Այն կիրառվում էր հիմնականում ընդհանուր բնույթի խնդիրներ ձևակերպելիս և լուծելիս:

Երկրորդ տարբերակի դեպքում կարևորվում էր ազգակցական հարաբերությունների միջոցով սեփականաշնորհման արդարացիությունն ապահովելու սկզբունքը⁴⁷: Ուշագրավ է, որ տարբեր ազգատոհմերի՝ որպես սեփականաշնորհման արդարացիության երաշխավոր ընտրված ներկայացուցիչները հաճախ գործել են միայն իրենց ազգատոհմին պատկանողների համար առավելությունն ապահովելու սկզբունքով⁴⁸:

⁴⁶ Տարբերակներին անվանումներ տրվել են ձևավորման սկզբունքները հաշվի առնելով:

⁴⁷ Նման օրինակներ գրառվել են տարբեր գյուղերում: Շատինում «Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման» հանձնաժողովի կազմն ընտրվել է երկու անգամ: Առաջին հանձնաժողովից գյուղացիները դժգոհել են տնամերձները վատ չափելու համար, ինչից հետո ստեղծվել է նոր հանձնաժողով՝ «ամեն մեծ ազգատոհմից մեկ ներկայացուցիչ սկզբունքով»: Փոքր ազգատոհմերից հանձնաժողովում ներկայացուցիչներ չեն ընդգրկվել: Շինուհայր գյուղում լարված է եղել «պայքարն» այգիները «պապենական» սկզբունքով բաժանելու համար, յուրաքանչյուրը պահանջել է իր «պապի հիմնած այգուց իրեն հանձնել իր հասանելիքը»: Վեճերը երբեմն վեր են ածվել ծեծկռտուքի տարբեր ազգատոհմերի ներկայացուցիչների միջև, «այս կամ այն ազգատոհմի պապենական այգու սահմանները ճշգրտելու ժամանակ»: Արփենիում նույնպես հանձնաժողովի ընտրության ժամանակ կարևոր դեր է խաղացել «ըստ ազգությունների» սկզբունքը, իսկ մեծ ազգատոհմերին չպատկանողները ձգտել են կանխել այդ ազգատոհմերից երկու-երեք հոգու ընտրվելը հանձնաժողովում:

⁴⁸ Վայոց ձորում շատ բանասացներ նշում էին, որ լավագույն հողերը բաժին են հասել գյուղխորհրդի նախագահի ազգականներին: Երազգավորսում

Երրորդ տարբերակը խմբայինն է: Այս տարբերակի հիմքում ընկած է մասնագիտական շահերի ու հետաքրքրությունների ընդհանրության սկզբունքը: Սա կարելի է դիտարկել նաև որպես խորհրդային շրջանում ձևավորված ավանդույթի շարունակություն, երբ կարևորվում էին սոցիալ-մասնագիտական ընդհանրությունները: Նյութերը ցույց են տալիս, որ այս տարբերակը ևս լայն տարածում ուներ, ընդ որում, հաճախ ավելի արտահայտված կարող էին լինել մեկ խմբի շահերը⁴⁹: Խմբային շահերը դրսևորվել են նաև տեղացիներով և փախստականներով բնակեցված գյուղերում, իսկ այս դեպքում և՛ փախստականները, և՛ տեղացիները հանդես են եկել որպես ամբողջական խմբեր⁵⁰:

գյուղի գրեթե կեսին անասուն չի հասել, բայց գյուղխորհրդի քարտուղարի գրեթե բոլոր ազգականները ստացել են: Շատերի կարծիքով, սեփականաշնորհումն այնքան հապճեպ իրագործվեց, որ պարզապես չկային այլընտրանքի հնարավորություններ:

⁴⁹Մեխանիզատորները, օրինակ, գրեթե բոլոր գյուղերում համակարծիք են եղել տեխնիկայի վաճառքի հարցում, պահանջելով, որ այն հանձնվի շահագործողներին: Ջառիթափ, Բռնակոթ, Արենի, բազմաթիվ այլ գյուղերում վարձակալական հիմունքներով այգիները մշակող ընտանիքները պահանջել են, որ դրանք հատկացվեն իրենց, կամ իրենց բաժինն ավելի մեծ լինի: Բազմաթիվ գյուղերում հիմնականում անասնապահներն ու հովիվներն են գնել անասնապահական շինությունները: Խմբային շահերի դրսևորումներ արձանագրվել են նաև անասունների սեփականաշնորհման ժամանակ: Բռնակոթում, օրինակ, կոլեկտիվի անդամների ժողովը ընդունել է անասունները միայն կոլեկտիվի անդամներին սեփականաշնորհելու որոշում: Ուսուցիչները, գյուղում բնակվող բազմաթիվ այլ ընտանիքներ զրկվել են անասուններ ձեռք բերելու հնարավորությունից:

⁵⁰Տեղացի-փախստական հակասությունները կապված են եղել հիմնականում սեփականաշնորհմանը մասնակցության հետ: Տեղացիները, հատկապես եթե մեծամասնություն են կազմել, ձգտել են սահմանափակել փախստականների մասնակցությունը սեփականաշնորհմանը:

Տարբեր գյուղերում արձանագրվել են նաև խմբային շահերի՝ ազգագրական տեսանկյունից ուշագրավ բախումներ⁵¹:

Հաջորդ տարբերակը *թիմայինն է*, որն ընդգրկում է մասնակիցների ավելի նեղ շրջանակ և որի հիմքում ընկած է մի քանի հոգու համար առավել շահ ապահովելու սկզբունքը: Մի դեպքում «թիմ» կարող է լինել կոմունիստական նոմենկլատուրան, որն օգտվեց ստեղծված խառը կացությունից, մեկ այլ դեպքում՝ նորի կողմնակիցները, որոնք հասան սեփականաշնորհումը իրենց ձեռնտու պայմաններով իրագործելուն:

Ամփոփելով, կարելի է փաստել, որ մեկնարկային հնարավորությունների անհավասարության իրողությունն ուներ դրսևորման մի քանի մակարդակ՝ գյուղային (համայնքային), սոցիալ-մասնագիտական, ընտանեկան և այլն:

Գյուղերում որպես մեկնարկային հնարավորությունները պայմանավորող գործոններ հանդես են եկել բնական

⁵¹ Մարմաշենում դեռևս հանձնաժողովի ընտրության ժամանակ ընդգծված է եղել «կոլտնտեսական»-«խոպանչի» հակասությունը, ուստի, աշխատել են պահպանել կողմերի համամասնությունը: «Կոլտնտեսության ժամանակ էլ հակասությունը մեծ էր: Կոլտնտեսությունը լավն էր, կոլտնտեսականն առավելություն ուներ: Պետք է ճակնդեղ մշակելիր, կոլտնտեսությունում աշխատելիր, որ տան տեղ տային: Խոպանչին, եթե տասը տղա էլ ունենար, տան տեղ չէին տա: Սեփականաշնորհման ժամանակ էլ կոլտնտեսականն ուզում էր նախկին առավելությունը պահպանել. «ուզենամ հող կտամ, ուզենամ՝ չէ»: Կոլտնտեսականները նույնիսկ ուզեցել են լավ հողերի վրա կոլեկտիվ տնտեսություն ստեղծել, իսկ չաշխատողներին տալ ոչ բերրի հողերը: Նրանց մեծ մասը դեմ էր նաև սեփականաշնորհմանը, սկսեցին դիմումներ հավաքել, բայց կարճ տևեց: Կոլտնտեսությանը կողմ էր այն զանգվածը, ով շահ ուներ, աշխատել էր, ով որ թույլ էր: Դրանց հետևից տանելը հեշտ է»: Մարմաշենում, Աղետի գոտու այլ գյուղերում, դրսևորվել է հակասությունների ևս մեկ օղակ. օրենքով, երկրաշարժից հետո գյուղ վերադարձածներն ունեին առանց գրանցվելու հող ստանալու իրավունք: Կոլտնտեսականները դեմ են եղել նաև սրան: Վերադարձածների շահերը պաշտպանել են խոպանչիները, գյուղաբնակ հարազատները:

պայմանները, հողատարածքների չափերը, հողօգտագործման հնարավորությունները, ոռոգման համակարգի առկայությունը, սեփականաշնորհված տարածքում ջրովի-անջրդի հողեր, խոտհարք-վարելահող-այգի հարաբերակցությունը:

Մեկնարկային հնարավորությունները պայմանավորող որոշ գործոններ հանդես են գալիս «որպես տեղային» և բնորոշ են միայն այս կամ այն գյուղին, մի քանի գյուղերի կամ մեկ տարածաշրջանի:

Հանրապետական արտահայտվածության որոշ գործոններ, այլոց հետ անբարենպաստ զուգակցման պայմաններում նույնպես ձեռք են բերում ընդգծված «տեղային» նշանակություն: Փախստականաբնակ, հատկապես խառը բնակչություն ունեցող (տեղացի, գյուղաբնակ ու քաղաքաբնակ փախստականներ) գյուղերում «տեղային» նշանակություն են ստանում աղապտացիայի հարցերը. փոխհարաբերություններ, գյուղատնտեսական նոր զբաղմունքներին հարմարվել և այլն: Սահմանամերձ գոտում «տեղային» է հենց այն, որ սահմանի հարևանությամբ գտնվող հողերն անօգտագործելի են արդեն մեկ տասնամյակից ավելի:

Ազգագրական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև մեկնարկային հնարավորությունների անհավասարությունը մեղմելուն ուղղված փորձերի բազմազանությունը: 1991թ. գյուղացին չունեցավ տնտեսավարման ձևերի՝ օրենքով նախատեսված տարբերակներից ընտրություն կատարելու հնարավորություն: Պատճառը ոչ միայն կարճ ժամանակն էր, այլ մասնավոր սեփականության իրավունքի ամրագրման և անհատական գյուղացիական տնտեսությունների ստեղծման հարկադրական եղանակները: Այսպիսի իրավիճակում գյուղացին փորձում էր վերջին տասնամյակներին կայունացած (սոցիալ-

մասնագիտական խմբեր) և ավանդական (ազգակցական, դրացիական) համակարգերի կարևորման միջոցով ապահովել սեփականաշնորհման արդարացիությունը: Այս մոտեցումները ձևավորեցին «ազգակցական և խմբային տարբերակներ»: «Թիմային» տարբերակը նույնպես նոր չէր գյուղում: Սակայն 1991թ. «թիմերն» ստացան անձնական շահերի բավարարման առավելագույն հնարավորություններ, քանի որ գյուղը նախապատրաստված չէր արմատական վերափոխումների: Նշենք, որ դիտարկված տարբերակները կարող էին հանդես գալ նաև մեկ գյուղի շրջանակներում: Բերված նյութերում արդեն ցույց տրվեց, որ հաճախակի են եղել նաև տարբեր խմբերի բախումները, կապված շահերի հետ:

Արդյունաբերական ձեռնարկությունների, ինչպես նաև անավարտ շինարարության օբյեկտների զանգվածային սեփականաշնորհումը հանրապետությունում սկսվեց 1994թ.: Այն ևս, ինչպես գյուղատնտեսության վերափոխումները, ուներ սեփականության բազմաձևության և շուկայական տնտեսության ձևավորման նպատակ: Շուկայական հարաբերությունների զարգացման գործում սեփականության ապապետականացումը և սեփականաշնորհումը դիտվեցին որպես տնտեսության առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի խնդիրներ⁵²: 1994թ. հունվարի 12-ին և 1995թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ կողմից հաստատվեցին համապատասխանաբար «ՀՀ պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման» 1994 և 1995թթ.

⁵²Ա. Մարկոսյան, Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման քաղաքականությունը ՀՀ-ում.-Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, գիրք առաջին, Եր., 1997, էջ 129:

ծրագրերը⁵³: Հաջորդ տարիներին ևս ընդունվեցին սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացները կարգավորող բազմաթիվ օրենքներ ու որոշումներ: Սեփականաշնորհման հիմնական ձև դարձավ պետական և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների բաց բաժնետիրական ընկերությունների (բաժանորդագրություն) ձևով սեփականաշնորհումը: Սեփականաշնորհման գործընթացներին բնակչության մասնակցությունն ապահովելու նպատակով, հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու տրվեց 20.000 դրամ անվանական արժեքով հավաստագիր (սկզբնական արժեքը որոշված էր 10.000 դրամ)՝ «սեփականաշնորհման սերտիֆիկատ»: Միաժամանակ, դարձյալ նույն նպատակով, կիրառվեց ևս մեկ տարբերակ՝ «20% մասնակի անհատույց սեփականաշնորհումը», որով մասնավորեցվող ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվների անդամները, ձեռնարկությունում ունեցած աշխատանքային ստաժին ու աշխատավարձին համապատասխան, ձեռնարկության գույքի գնահատված արժեքի 20%-ի սահմաններում ստանում էին բաժնեմաս: Չնայած այս սկզբունքների կիրառմանը, և՛ «սեփականաշնորհման սերտիֆիկատները» և «20% անհատույց սեփականաշնորհումը», ըստ էության, չժառայեցին նպատակին: Բնակչության զանգվածային աղքատացման պայմաններում հավաստագրերը «սև շուկայում» վաճառվեցին անվանական արժեքից մի քանի անգամ ցածր գներով, իսկ 20% անհատույց սեփականաշնորհման բաժնեմասերը, դարձյալ անվանական արժեքից մի քանի անգամ ցածր գներով գնեցին հիմնականում ձեռնարկությունների նախկին ղեկավարները կամ նոր բաժնետերերը: ***Չկայացավ մանր ու միջին սեփականատիրոջ ինստիտուտը:*** Ձեռնարկությունների մեծ

⁵³Ա. Մարկոսյան, նույն տեղում:

մասուն աշխատավորական կոլեկտիվների անդամները, որոնք դարձան նաև բաժնետերեր, զրկվեցին որոշումների ընդունման ու ձեռնարկության տնտեսական գործունեության վերահսկողությանը մասնակցելուց: Պատճառները տարբեր են. բազմաթիվ ձեռնարկություններ այսօր չեն գործում, կամ աշխատում են ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ, հետևաբար նաև՝ սահմանափակ աշխատակազմով: Շատ ձեռնարկությունների ղեկավարներ գնել են նաև մանր բաժնետերերի փայաբաժինները և բաժնետոմսերի «հսկիչ փաթեթը» գտնվում է մեկ կամ մի քանի հոգու ձեռքում: Կարևոր է նաև, որ ձեռնարկությունների մեծ մասի մանր բաժնետերերը տեղյակ չեն իրենց իրավունքներին:

Բնակչության մեծ մասի տնտեսական հնարավորությունների, հետևաբար նաև տնտեսական ակտիվության վրա անմիջական ազդեցություն ունեցավ նաև բանկային խնայողությունների փաստացի փոշիացումը: Փաստորեն, բնակչության մի ստվար հատվածը, նույնիսկ օրենքների առկայության պայմաններում, սահմանափակ հնարավորությունների, ձեռնարկությունների ղեկավարների կամայականությունների, սեփականաշնորհման ընթացքի վերաբերյալ անբավարար տեղեկատվության պատճառով, չկարողացավ գործունե մասնակցություն ունենալ սեփականաշնորհմանը: Քաղաքացիական հասարակության կայացման գործընթացների տեսանկյունից կարևոր է հատկապես այն, որ վերափոխումները չուղեկցվեցին տեղեկատվական օբյեկտիվ դաշտի ձևավորմամբ, չներկայացվեցին իրավունքների ու պարտականությունների շրջանակները և իրավական գիտելիքների պակասի պայմաններում մարդիկ չկարողացան օգտվել իրենց ամենատարրական իրավունքներից:

Ցանկացած վերափոխման համար կարևոր է նաև հետևյալ հարցը. որքանով են տարբեր ոլորտների վերափոխումները նպաստում բնակչության տարբեր խմբերի նյութական հնարավորությունների, տնտեսական ակտիվության աճին, ինչպիսի՞ն են տնտեսական գործունեությանը մասնակցելու հիմնական ձևերն ու եղանակները, որքանով են մատչելի տարբեր ծառայությունները հատկապես սոցիալապես անապահով խավերի համար և այլն:

Այս հարցերի պատասխանները միայն տնտեսական հարաբերությունների ոլորտում չեն և ենթադրում են հասարակական հարաբերությունների, բարոյահոգեբանական մթնոլորտի, քաղաքացիական հասարակության հիմնական տարրերի ձևավորման ու կայացման ներկայիս մակարդակի ամբողջական ու համալիր դիտարկում:

Արմատական և կտրուկ վերափոխումները, ինչպես բազմիցս նշեցինք, անսպասելի էին բնակչության մի մասի համար: Սեփականաշնորհման ընթացքում տեղ գտած բազմաթիվ թերություններն ու բացթողումները, հանրային (համաժողովրդական) սեփականության կենտրոնացումը ոչ մեծ թվով անձանց կամ խմբերի ձեռքում, սեփականաշնորհմանը մասնակցելու հաճախ արհեստական արգելքները, ներմուծման, արտահանման, ծառայությունների ոլորտներում ձևավորված մենաշնորհները, օրենսդրական դաշտի անկատարությունը, աննախադեպ տարածում ստացած կոռուպցիան ու հովանավորչությունը, շուկայական տնտեսության ու քաղաքացիական հասարակության սկզբունքներին հակասող բազմաթիվ այլ իրողություններ դարձան պետական ու հասարակական կարևորության գործընթացներից բնակչության մի ստվար հատվածի օտարման պատճառ:

Սոցիալական, մասնագիտական աստիճանակարգման ու շարժունության գործընթացները, որոնք բնորոշում էին հայ հասարակության զարգացումը նախորդ տասնամյակներում, փոխարինվեցին ունեցվածքային շերտավորմամբ ու աննախադեպ բեռնացմամբ: Շատ արագ Հայաստանի՝ ունեցվածքային տեսանկյունից համեմատաբար համասեռ բնակչությունը բաժանվեց երկու շերտի՝ հարուստների ու համեմատաբար ունևորների և մեծամասնություն կազմող աղքատների⁵⁴: Բնակչության եկամուտների բաշխման անհավասարության մակարդակը բնութագրող Ջինի գործակիցը ՀՀ-ում ամենաբարձրերից է անցումային տնտեսություն ունեցող երկրների մեջ: Բեռնացվածության նման մեծ աստիճանը հետևանք է նաև սովետային տնտեսության աննախադեպ մեծ ծավալների⁵⁵:

Ազգային վիճակագրական ծառայության կողմից, Համաշխարհային Բանկի օժանդակությամբ, կատարված կենսամակարդակի ամբողջացված ուսումնասիրության տվյալներով, աղքատ բնակչությունը (որոնց մեկ շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը ցածր են եղել աղքատության

⁵⁴Աղքատության պատճառների, հետևանքների ու ազդեցությունների մասին մանրամասն տես՝ Հ. Խառատյան, Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 16; Է. Օրդյան, Հ. Մանուկյան, Աղքատության նվազեցման հիմնախնդիրները ՀՀ համայնքներում, Եր., 2001; Ա. Թադևոսյան, Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Եր., 2001; Ն. Մարգարյան, Մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդավարական արժեքների դերը աղքատության հաղթահարման գործում, Եր., 2001; Մ. Գաբրիելյան, Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001; Աղքատության հաղթահարման իմ/մեր տեսլականը (հողվածներ, քաղվածքներ ՄԻԺ-ի կողմից կազմակերպված մրցույթից), Եր., 2001; Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003 :

⁵⁵Աղքատության նվազեցման միջանկյալ ռազմավարական ծրագիր.-Հայացք տնտեսությանը, թիվ 3, էջ 3:

ընդհանուր գծից) հանրապետությունում կազմում է ազգաբնակչության 55%-ը, շատ աղքատները՝ 23%-ը: Աղքատության վտանգին ենթակա անձինք (որոնք մեկ շնչի հաշվով սպառումով գտնվում են աղքատության գծից փոքր-ինչ բարձր), ևս կազմում են բնակչության զգալի մասը (շուրջ 13.5%), որով պայմանավորված, սոցիալական պաշտպանության ենթակա բնակչությունն, ըստ էության, կազմում է ողջ բնակչության ավելի քան 2/3-ը: Այս ցուցանիշն անհամեմատելի է անցումային տնտեսությամբ երկրներում աղքատության միջին մակարդակի հետ: Աղքատությունն առավել տարածված է քաղաքային բնակչության, նաև գյուղերում բնակվող հողագուրկ բնակչության, գործազուրկ, հաշմանդամ և բազմազավակ ընտանիքների շրջանում: Աղքատության մակարդակը տատանվում է նաև ըստ տարածաշրջանների: Չքավոր բնակչության մեծ մասն ապրում է երկրաշարժից տուժած շրջաններում⁵⁶:

Որպես տնտեսության զարգացման, հանրապետությունում ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտի, աղքատության աննախադեպ աճի անմիջական հետևանք հանդես է գալիս զանգվածային արտագաղթը: Չդիտարկելով արտագաղթի ծավալների, ուղղությունների հետ կապված խնդիրները, նշենք, որ այն ոչ միայն վտանգում է ժողովրդագրական իրավիճակը, այլև

⁵⁶ ԱՅՈԾ ընդունումից հետո, ըստ ոլորտի պատասխանատուների, արձանագրվել է աղքատության ծավալների նվազում ամբողջ հանրապետությունում ու առանձին մարզերում: Նշենք սակայն, որ այսօր էլ անկախ փորձագետների ու հետազոտողների մի մասը շարունակում է կարևորել աղքատության ձևակերպման փոփոխությունը, առաջարկելով դրանում ավելացնել որոշ նոր գործոններ, ինչը հնարավորություն կտա աղքատության հաղթահարումը դարձնել իրական ու տևական, իսկ վերջինիս հիմքում դնել անձի ինքնաիրացման ու ընդլայնված վերարտադրության խնդիրները.-**մանրամասն տես**՝ Աղքատության ու գոյատևման պատկերը.

արգելակում ժողովրդավարական, սոցիալական պետության, քաղաքացիական հասարակության կայացման գործընթացները: Հանրապետությունից հեռանում է տնտեսապես ակտիվ բնակչությունը, հիմնականում երիտասարդներ ու միջահասակներ, որոնց որոշ մասը, չնայած բավականին լուրջ դժվարություններով, տարբեր երկրներում կարողանում է հարմարվել, ապահովել տանելի կենսամակարդակ, հնարավորության դեպքում տեղափոխել ընտանիքները, նաև՝ դպրոցահասակ երեխաներին: Սա արդեն անվերադարձ միգրացիա է ձևավորում և բնորոշ է ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերին⁵⁷:

Այս ամենի արդյունքում փոխվում է նաև բնակչության սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական կառուցվածքը: Մարզերում անցկացված ազգագրական ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստել բնակչության՝ սոցիալ-մասնագիտական տեսանկյունից համեմատական միատարրության իրողությունը: Խորհրդային շրջանում տնտեսական, հասարակական հարաբերություններում կարևոր դեր խաղացող սոցիալ-մասնագիտական խմբերի մեծ մասը, ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում, այսօր գոյություն չունի:

Գյուղական բնակչության մեծամասնությունը կարելի է առանձնացնել որպես գյուղատնտեսական գործունեության տարբեր ոլորտներում ընդգրկված, հիմնականում անհատական գործունեություն վարող մասնագիտական խումբ: Գյուղատնտեսական գործունեության ցածր արդյունավետությունը,

հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, ՄԻԺԻ, Եր., 2003:

⁵⁷Մանրամասն տես՝ Վ. Խոջաբեկյան, նշվ. աշխ., նույնի՝ ՀՀ բնակչության գաղթի միտումները.- Դրօշակ, 2001, թիվ 2, էջ 204-216; Ս. Գալստյան, Հայաստանի Հանրապետության բնակչության աշխատանքային

հողատարածքների որակական հատկանիշների անկումը, զբաղվածության այլընտրանքային տարբերակների բացակայությունը, իրացման սահմանափակ հնարավորությունները, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքների վերամշակման ձեռնարկությունների զարգացման անբավարար մակարդակը դառնում են բնատնտեսական համակարգի ձևավորման պատճառ, որի պայմաններում գոյության համար անհրաժեշտ մթերքների մեծ մասն արտադրվում է սեփական տնտեսությունում, իսկ մնացածը ձեռք է բերվում հիմնականում ապրանքափոխանակության ճանապարհով: Բնական է, որ սահմանափակվում են նաև տնտեսական ակտիվության, արգելակվում՝ ինքնակազմակերպման, ինքնակարգավորման համայնքային տարբերակների զարգացման հնարավորությունները: Կենսական նվազագույնի ապահովման խնդիրների առաջնայնության պայմաններում գործում են հիմնականում տնտեսական գործունեության ընտանեկան, երբեմն նաև՝ դրացիական ու ազգակցական տարբերակներ, որոնք, օգնելով տնտեսական բնույթի խնդիրների լուծմանը, այնուամենայնիվ, չեն նպաստում իրավական պետության ու քաղաքացիական հասարակության կայացմանը, քանի որ կարևորվում է հիմնականում ազգականների կամ դրացիների կոլեկտիվների շահը, որը կարող է հակասել համայնքի զարգացման պահանջներին:

Քաղաքային բնակչությունը նույնպես բնութագրվում է նման իրողություններով: Բացառություն է Երևանը, որտեղ արդյունաբերական ձեռնարկությունների, սպասարկման ու ծառայությունների ոլորտի, գիտակրթական հիմնարկությունների

միջպետական տեղաշարժերը, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (այսու՝ ՌԱՀՀԿ), Եր., 1998:

գործունեության հետ կապված, դիտվում է սոցիալ-մասնագիտական խմբերի որոշ բազմազանություն: Այստեղ ավելի ինտենսիվ են նաև նոր սոցիալ-մասնագիտական խմբերի ու ենթախմբերի ձևավորման գործընթացները: Խոշոր քաղաքների, նախկին արդյունաբերական կենտրոնների սոցիալ-մասնագիտական կառուցվածքը նույնպես ունի միատարրության աստիճանական աճի միտումներ: Այստեղ բարձր է նաև գործազրկության մակարդակը և բնակչության մի մասի հիմնական զբաղմունքը առևտուրն է, որը, սակայն, երբեմն չի ապահովում նույնիսկ կենսական նվազագույնը: Որպես որոշ քաղաքների համար նոր իրողություն կարելի է առանձնացնել այն, որ շատ ընտանիքներ, գործազրկության ու կենսամակարդակի կտրուկ անկման պայմաններում, զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ փոքր հողակտորներ վերցնելով ինչպես քաղաքների մերձակայքում, այնպես էլ հայրենի գյուղերում: Այս երևույթը կարելի է որակել որպես քաղաքային բնակչության մի մասի կողմից գյուղատնտեսական զբաղմունքների թեկուզ ժամանակավոր կիրառման գործընթաց: Աղետի գոտում, որտեղ դեռևս ամբողջովին հաղթահարված չեն երկրաշարժի հետևանքները, բնակչության տնտեսական ակտիվության, քաղաքացիական նախաձեռնությունների վրա ազդում է նաև ծանր բարոյահոգեբանական մթնոլորտը: Դեռևս լուծված չէ բնակարանային խնդիրը, բազմաթիվ ընտանիքներ մեկուկես տասնամյակ ապրում են տնակային պայմաններում, բնականաբար, կարևորելով միայն կենսական նվազագույնի ապահովման հարցերը: Այս տեսանկյունից, ծանր վիճակում են հատկապես քաղաքները:

Ե՛վ գյուղերում, և՛ քաղաքներում, տնտեսական ծանր պայմանները դառնում են նաև սոցիալական դերերի ու

գործառույթների լուրջ փոփոխությունների պատճառ: Այսօր, ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, սոցիալական դերերի, գործառույթների աստիճանակարգումը կատարվում է ըստ ունեցվածքային սկզբունքի, ըստ այդմ. հասարակական հարաբերություններում. կարևոր դերեր ստանձնելու տեսանկյունից առաջնային են համարվում հիմնականում անձի կամ խմբի նյութական հնարավորությունները: Գործազրկությունը հանդես է գալիս որպես քաղաքային, որոշ դեպքերում նաև գյուղական միջավայրը բնորոշող կարևոր իրողություն և ունի ոչ միայն տնտեսական, այլև բարոյահոգեբանական հետևանքներ ու ազդեցություն: Ունեցվածքային աստիճանակարգման և արտահայտված սոցիալական բևեռացման պայմաններում կարևորվում են ոչ այնքան մասնագիտական իմացություններն ու պատրաստվածությունը, որքան անձնական ժանոթությունները, միջնորդությունների ճանապարհով խնդիրներ լուծելու հնարավորությունները: Նման իրողությունը, ըստ գրառված ազգագրական նյութերի, դրսևորվում է պետական կառավարման տարբեր մակարդակներում, ստորին օղակներից մինչև վերինը:

Քաղաքացիական հասարակության կայացման տեսանկյունից կարևոր են նաև պետության գործառույթների հստակեցումը, ինչպես նաև շուկայական տնտեսության պայմաններում այդ գործառույթների մի մասի սահմանափակմանը բնակչության կողմից տրվող գնահատականները: Բնակչության մի մասի շրջանում շարունակում է պահպանվել այն մոտեցումը, որը ժառանգվել է խորհրդային շրջանից: Ըստ այդ մոտեցման, պետությունը պարտավոր է ստանձնել կարգավորիչ գործառույթներ, կարգավորել աշխատաշուկան, լուծել բնակչության սոցիալական նվազագույնի ապահովման խնդիրները, անհրաժեշտության դեպքում միջամտելով նաև

տնտեսության որոշ ոլորտների գործունեությանը: Առաջին հայացքից կարող է թվալ, որ նման մոտեցումը հակասում է շուկայական տնտեսության սկզբունքներին: Իրականում գործունենք այնպիսի իրողության հետ, երբ բնակչությունը պահանջում է պետական համակարգված քաղաքականություն, որի պայմաններում ապահովված են բոլոր քաղաքացիների հավասար իրավունքները, ազատ մրցակցային դաշտը: Բնակչության մեծ մասի կարծիքով, օրենքի առջև բոլորի հավասարության ապահովումը կիսբանի տնտեսական նախաձեռնությունները, նպաստելով միջին խավի ձևավորմանն ու վերջինիս դիրքերի ամրապնդմանը, հետևաբար նաև՝ ավելի ակտիվ մասնակցության քաղաքացիական հասարակության ու սոցիալական, իրավական պետության կայացման գործընթացներում:

Պետության վերը նշված գործառույթների բացակայության, կենսամակարդակի կտրուկ անկման, զանգվածային արտագաղթի ու արտագնացության, կենսական նվազագույն կարիքների բավարարման սահմանափակ հնարավորությունների պայմաններում սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական ու ունեցվածքային խմբերին բնորոշ է կրավորականությունը (պասիվությունը): Քաղաքացիական նախաձեռնությունները, հասարակական-քաղաքական գործընթացներին ակտիվ մասնակցությունը, այսօր, ըստ էության, նվազագույնի են հասցված: Որպես օրինակ բերենք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մեխանիզմները: Որոշ գյուղերում, համայնքների ավագանիների ու գյուղապետերի ընտրության ժամանակ կարևորվում են ոչ այնքան թեկնածուների փորձը, հմտություններն ու մասնագիտական կարողությունները, որքան մեծ ազդատոհմերին պատկանելը: Նման ընտրությունը հաճախ դառնում է նաև ուղղակի կախվածության պատճառ: Համայնքի

ղեկավարը, որն իր ընտրությամբ պարտական է ազգականներին կամ ընկերներին, չի կարող օբյեկտիվ լինել պարտականությունների կատարման ժամանակ: Միաժամանակ, գյուղացիները, հաշվի առնելով դարձյալ այս իրողությունը, հրաժարվում են իրենց պարտականությունների կատարումից, քանի որ չի ապահովվում բոլորի հավասարությունը:

Քաղաքներում արդեն կարևոր են «թիմային կամ կլանային» մեխանիզմները: Հաջողության են հասնում այն թեկնածուները, որոնք ունեն տնտեսական, ֆինանսական ազդեցության լծակներ կամ վայելում են հանրապետության քաղաքական վերնախավի աջակցությունը:

Ինչպես տեսնում ենք, ազգակցական, խմբային կամ թիմային տարբերակները, որոնք որոշ դեպքերում դրական դեր են խաղում տնտեսական գործունեության տեսանկյունից, հասարակական, համայնքային հարաբերություններում արդեն բացասական ազդեցություն են ունենում, արգելակելով ինքնակարգավորման ու ինքնակազմակերպման համայնքային տարբերակների զարգացումը: Որպես այս իրողության վրա ազդող գործոն հանդես է գալիս նաև աղքատությունը: Աղքատ ընտանիքների շրջանում նկատվում է ինքնամեկուսացման, համայնքային կյանքին չմասնակցելու ձգտում: Նրանց համար ավելի կարևոր է գոյության նվազագույն պայմանների ապահովումը, որը դարձյալ կապվում է կան սեփական ջանքերի, կան ազգականների օգնության, բայց ոչ համայնքի ուժերով կարևորագույն խնդիրների լուծման հետ:

Տնտեսական զարգացման, քաղաքացիական հասարակության կայացման համար չափազանց կարևոր է միջին նյութական հնարավորություններ ունեցող խավի ձևավորումը: Սակայն այս գործընթացը և՛ գյուղական, և՛ քաղաքային

բնակավայրերում դեռևս չունի անհրաժեշտ արագություն ու ընդգրկում: Աղքատության գծից բարձր ապրող ընտանիքների որոշ մասի համար իրական է «աղքատանալու» վտանգը, չկան տևական միջին կենսամակարդակի երաշխիքներ, ինչը դարձյալ սահմանափակում է ակտիվության ու նախաձեռնությունների հնարավորությունները: Մինչդեռ միջին կարողություններ ունեցող խավի ձևավորումը կնպաստի ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման համայնքային կամ կոոպերատիվ շահերի ձևավորմանն ու պաշտպանությանը: Կոոպերատիվ ասելով, նկատի ունենք ոչ թե կամ ոչ միայն ազգակցական սկզբունքով կազմակերպված, այլ մասնագիտական, նյութական պահանջներով գիտակցված ընդհանրություններ, դրանց պարբերական վերարտադրության ու պահպանման շահագրգռվածություն ունեցող խմբերը: Համախմբման, շահերի պաշտպանության մեխանիզմները, ձևավորվելով այսպիսի միջավայրում, աստիճանաբար կարող են տարածվել նաև մյուս կոլեկտիվներում, նպաստելով տնտեսական, քաղաքական ու հասարակական հարաբերություններում առկա բազմաթիվ բացասական իրողությունների հաղթահարմանը:

«Հարուստների» խումբը, որը կազմում է հանրապետության բնակչության չնչին տոկոսը, նույնպես ակտիվ դեր չի կատարում հասարակական ու համայնքային հարաբերություններում: Այս խումբը ձևավորել է որոշակի ենթամշակույթ, արժեքային ու ներխմբային հարաբերությունների համակարգ, և հիմնականում այդ շրջանակում է կատարում նաև դրանց վերարտադրությունը:

Ամփոփելով, ներկայացնենք որոշ դիտարկումներ՝ կապված տնտեսական վերափոխումների ընթացքի, ունեցվածքային բեռնացման, ընտանիքների ու ներընտանեկան հարաբերությունների վրա դրանց ունեցած ազդեցության հետ:

Տնտեսական վերափոխումները, որոնց նպատակը շուկայական հարաբերությունների ձևավորումն էր, մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված արդյունավետ տնտեսական գործունեության խթանումը, մանր ու միջին սեփականատերերի խավի կայացումը, անցած տարիների ընթացքում հանդիպել են լուրջ դժվարությունների: Չնայած վերջին տարիների համեմատական կայունությանն ու տնտեսական աճին, այնուամենայնիվ, և՛ տնտեսական զարգացման, և՛ բնակչության կենսամակարդակի ցուցանիշները դեռևս զիջում են 1990թ. ցուցանիշներին: Նույնը կարելի է ասել նաև քաղաքացիական հասարակության, իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործընթացների մասին: Միջին հնարավորություններ ունեցող խավի բացակայությունը կամ ցածր տեսակարար կշիռը սահմանափակում է նաև հասարակության ներդաշնակ զարգացման հնարավորությունները, քանի որ չկան նախաձեռնություններ, անբավարար է քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման մակարդակը, կարևորվում են հիմնականում անձնական կամ նեղ խմբային շահերը, որոնք բազմաթիվ դեպքերում ստորադասվում են պետական ու հասարակական շահին: Աղքատությունը, որը հանդես է գալիս որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի տարբեր գործոնների (աշխարհաքաղաքական իրավիճակ, Արցախյան չկարգավորված հակամարտություն, երկրաշարժի դեռևս չհաղթահարված հետևանքներ, տնտեսական վերափոխումների բացասական ազդեցություն) զուգակցում, իր հերթին խոչընդոտում է տնտեսական զարգացումը, քանի որ հիմնական ուշադրություն է դարձվում ոչ թե զարգացման ռազմավարական, այլ աղքատության հաղթահարման ծրագրերի մշակմանը:

Ինքնակարգավորման ու ինքնակազմակերպման տարբերակները, որոնք կարևոր նշանակություն ունեն, այսօր արդյունավետ են հիմնականում ազգականների ու դրացիների կոլեկտիվների, խմբերի ու թիմերի շրջանակում՝ որոշակիորեն նպաստելով տնտեսական տարբեր խնդիրների լուծմանը, այնուամենայնիվ, խոչընդոտում են հասարակական ու համայնքային զարգացումը: Ուստի էական է համայնքային տարբերակների մշակման ու խրախուսման խնդիրը, ինչը հնարավորություն կտա ապահովել սոցիալական, ունեցվածքային, սեռատարիքային տարբեր խմբերի, համայնքների բոլոր ընտանիքների մասնակցությունը հասարակական գործընթացներին, դրանով իսկ հիմքեր նախապատրաստելով քաղաքացիական հասարակության հիմնական ինստիտուտների ձևավորման, կայունացման ու զարգացման համար:

Կարևոր է նաև տնտեսական, հասարակական ու մշակութային զարգացման ծրագրերում հանրապետության առանձնահատկությունները հաշվի առնելը: Չնայած թվացյալ միատարրությանը, և՛ գյուղական և՛ քաղաքային ընտանիքներում դիտվում են առանձնահատկություններ՝ կապված շուկայական հարաբերություններին հարմարվելու աստիճանի, նորի արժեքային ընկալման և բազմաթիվ այլ իրողությունների հետ:

Գլուխ երրորդ
Մշակութային փոփոխությունների
ազդեցությունն անցումային շրջանի
ընտանիքի վրա

Հասարակագիտական գրականությունում ապացուցված է, որ ցանկացած վերափոխման հաջողությունը կամ անհաջողությունը պայմանավորված է նաև հասարակական ու մշակութային տարաբնույթ գործոններով:

Անցումային շրջանը, արմատական փոփոխություններով ու աննախադեպ ազդեցությամբ, նույնպես ենթակա է այս տրամաբանությանը: Այս կամ այն երևույթի հանդեպ վերաբերմունքը ձևակերպվում ու արտահայտվում է ելնելով նախընթաց փորձից, հասարակական հարաբերությունների բնույթից, նորույթների հանդեպ ընկալունակությունից կամ պահպանված ավանդական տարրերից:

Ընտանիքը, որպես հասարակության կարևորագույն բջիջ, նաև մշակութային միավոր է: Անհատի վարքը, արժեքային կողմնորոշումներն ու տրամադրությունները հիմքում ունեն հստակ մշակութային կոդեր, որոնց մի մասը ժառանգվել է սեփական մշակութային միջավայրից և որոշ դեպքերում վերարտադրվում է առանց էական փոփոխությունների: Բազմաթիվ դեպքերում

անհաջողությունները, ձախորդությունները նույնպես փորձ է արվում բացատրել մշակույթով, այնպիսի մշակութային արժեքների առկայությամբ, որոնք ուղղակի հակասության մեջ են ներմուծվող կամ պարտադրվող նոր արժեքների ու արժեքային համակարգերի հետ:

Հայաստանյան ընտանիքն անկախության փուլ թևակոխեց զարգացման տարաբնույթ, երբեմն հակասական միտումներով: Բազմիցս նշեցինք, որ այդ ճանապարհին կարևոր նշանակություն ունեցավ արցախյան շարժումը, որին բազմաթիվ անհատներ ու ընտանիքներ մասնակցեցին համազգային ոգևորության ալիքի վրա:

Ազգաբանական, մշակութային տեսանկյունից ինչպես շարժման, այնպես էլ անկախության ազդեցությունը հայկական ընտանիքի վրա չափազանց մեծ է: Շուրջ մեկուկես տասնամյակ է, ինչ ընտանիքն ու հասարակությունը գործառնում են մի շրջափուլում, որը ստացել է **անցումային շրջան** անվանումը: Սա որակապես նոր իրավիճակ է ընտանիքի համար:

Այս իրավիճակի տնտեսական առումներին մասամբ անդրադարձանք. *իրաժարում հին պլանային տնտեսությունից, ազատ շուկայական տնտեսության հռչակումը որպես տնտեսական զարգացման գերակայություն ու այդ ճանապարհին հաջող կամ անհաջող բազմաթիվ միջոցառումներ:*

Ժողովրդավարություն, իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն հասկացությունները մասամբ ամրագրվել ու վերարտադրվում են հասարակության տարբեր շերտերում, տարբեր սոցիալական ու ունեցվածքային խմբերում ընկալվելով ու իմաստավորվելով յուրովի:

Շարունակվում են էական արժեքային փոփոխությունները:

Արևմտյան *արժեքային համակարգը*, որը հասցրեց դառնալ մեր բառաֆոնդի բաղկացուցիչը, հասարակությունում անրագրվելու փորձեր է անում, չնայած բախվում է լուրջ բարդությունների: Ընտանիքը, ենթարկվելով փոփոխությունների, հայտնվելով դրանց կիզակետում, բնականաբար, հերթական անգամ կանգնած է *լուրջ արժեքային, որոշ առումներով նաև քաղաքակրթական ընտրանքի առաջ*: Նույնիսկ ԽՍՀՄ հավատարիմ կողմնակիցները կարծես համակերպվել են այն մտքին, որ նախկին հզոր կայսրությունն այլևս չի կարող վերականգնվել: Միաժամանակ, շատ ընտանիքներ այսօր աղոտ պատկերացում ունեն քաղաքական ու էթնոնշակութային քարտեզի վրա մեր տեղի մասին: Արևմուտքը շարքային հայաստանցու համար նոտավորապես նույնն է, ինչ խորհրդային քաղաքացու համար: Նրա մասին «բոլորը լսում են, սակայն տեսել և տեսնում են քչերը»: Ընդ որում, տեսածը միշտ չէ, որ դրական վերաբերմունք է ձևավորում:

Քննարկենք ինտեգրացիայի ու արժեքային փոփոխությունների ընկալման տեսանկյունից կարևոր որոշ ժողովրդական ընկալումներ, որոնք գրառվել են դաշտային հետազոտությունների ընթացքում: Այսօր ամենախոշոր հայկական համայնքը ՌԴ-ում է, որի թիվը գերազանցում է երկու միլիոնը: Հայկական ընտանիքների բավականին մեծ մասը գոյատևում, որոշները նաև բարգավաճում են ՌԴ-ում բնակվող կամ արտագնա աշխատանքի մեկնած հարազատների ուղարկած գումարներով⁵⁸: Մեծ է վերջին տարիներին ՌԴ քաղաքացիություն ստացած և ընտանիքները տեղափոխած անհատների թիվը: Այսինքն,

⁵⁸Ոչ պաշտոնական տվյալները հայրենիք ուղարկվող տրանսֆերները գնահատում են 600-800 միլիոն ԱՄՆ դոլարի շրջանակներում, որի մեծ մասը բաժին է ընկնում ՌԴ-ին:

ձևավորվում է նոր հիմնականում երիտասարդ, գործարար համայնք, որը հնարավորության դեպքում չի հրաժարվում նաև հայրենիքում բիզնես զարգացնելուց և չի խզում կապերը: Անխուսափելի է այս իրողության արժեքային ազդեցությունը: Արտագնա աշխատանքներով զբաղվողները, հատկապես դրսում երկար գտնվելու պարագայում, պահպանելով հայկական մշակույթը, միաժամանակ յուրացնում են այլէթնիկ միջավայրում քաղաքական, տնտեսական ու մշակութային գերիշխանություն ունեցող էթնոսի մշակույթի որոշ գծեր: ՌԴ-ում դա ռուսական էթնոսն է: Բնական է նաև, որ հատկապես հաջողակ գործարարների, ձեռներեցների համար ընդունելի են դառնում այն քաղաքական, տնտեսական ու մշակութային համակարգերը, որոնք գործում են բնակության նոր վայրում: Եթե այս ամենը փորձենք դիտարկել Հայաստանում մնացած ընտանիքների ու հարազատների վրա ազդեցության տեսանկյունից, կարող ենք արձանագրել, որ նախասիրությունների ու կողմնորոշումների մի մասը թեկուզ դանդաղորեն փոխանցվում է նաև հայկական միջավայր: Այժմ դիտարկենք այն գործընթացները, որոնք, ըստ փորձագետների, բնութագրում են վերջին տարիների Ռուսաստանը. 1990-ական թթ. քառսային վիճակի հաղթահարում, կենսամակարդակի աճ և զուգահեռ՝ աստիճանական նահանջ ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության չափանիշներից, իշխանության կենտրոնացում, դաշնության սուբյեկտների իրավունքների սահմանափակում, վերահսկվող խորհրդարան, այնպիսի արտաքին քաղաքականություն, որի հիմքում ընկած է եթե ոչ կայսրության վերականգնման, ապա զոնե կայսրության նախկին տարածքները վերահսկելի դարձնելու ցանկությունը, աղքատության բարձր մակարդակ, առայժմ ոչ բացահայտ սոցիալական լարվածություն, ֆինանսների ու

մարդկային ներուժի գերկենտրոնացում հիմնականում Մոսկվայում ու Ռուսաստանի եվրոպական մասի որոշ այլ քաղաքներում: Հասարակության արժեքային կողմնորոշումներում նույնպես առկա է որոշակի երկվություն. բնակչության մի ստվար հատվածը, որը դժգոհ է սեփականաշնորհման արդյունքներից, արդարացում է պուտինյան վերջին նախաձեռնությունները ուժեղ Ռուսաստան ստեղծելու ճանապարհին: Եվ վերջապես բավականին բարձր վարկանիշ ունեցող նախագահ:

Դառնանք հայաստանյան հասարակությանը: Վերը բերված որոշ չափանիշներ ու սկզբունքներ միանշանակ կարելի է տարածել մեր իրականության վրա: Քաղաքացիական հասարակություն, ժողովրդավարություն չափանիշները բավականին լուրջ բարդություններով են ամրագրվում Հայաստանում, ինչը չեն թաքցնում նաև իշխանության ներկայացուցիչները: Աստիճանաբար ավելի ու ավելի հիբրիդի մանվող Երևան, որտեղ կենտրոնացված են հանրապետության ֆինանսական, նյութական ու մարդկային հիմնական ռեսուրսները և մնացած մարզեր, որտեղ կա արտահայտված դժգոհություն Երևանի այսօրվա վիճակից ու հնարավորություններից, քանի որ շատերի կարծիքով դա արվում է ի վնաս մնացած տարածքների: Ռազմավարական դաշնակցություն ՌԴ հետ, որից հասարակության մի մասի դժգոհությունն արդեն ուվագծվում է, հատկապես «Գուլջ պարտքի դիմաց» ծրագրի իրագործումից հետո: Միաժամանակ, քաղաքական տեսանկյունից, որը բնականաբար ազդում է նաև մշակութային դաշտի վրա, կարևոր են ռուսաստանյան համայնքի որոշ հավակնությունները հանրապետությունում քաղաքական ազդեցություն ապահովելու առումով. ակտիվ գործում է Ռուսաստանի հայերի միությունը, որի հետ համագործակցում են հանրապետությունում դեռևս

բավականին բարձր համարում ունեցող խորհրդային տարիների որոշ գործիչներ: Այսինքն, Ռուսաստանն ավելի հասանելի է ինչպես տնտեսական ու քաղաքական, այնպես էլ մշակութային տեսանկյունից ու նաև այն պատճառով, որ հայ հեռուստադիտողը հնարավորություն ունի դիտել ռուսական հեռուստաալիքներ:

Բնակա՞ն է այս իրավիճակում մշակութային ազդեցության իրողությունը: Կարծում ենք այո և որ այն կպահպանվի մոտ ապագայում ևս: Միաժամանակ, չնայած որոշ դժգոհությանը, հասարակությունում բավականին մեծ է մարդկանց թիվը, որոնք ստեղծված իրավիճակում անխուսափելի ու պարտադիր են համարում գործակցությունը Ռուսաստանի հետ: Հաճախ այդ ամենը դիտվում է որպես նախընթաց քաղաքական զարգացումների արդյունք հանդիսացող հավատարմություն մեծ եղբորը: Այսինքն, մշակութային ազդակներն այս դեպքում երկկողմանի են. ՌԴ-ում բնակվող և պարբերաբար Հայաստանում լինող, ինչպես նաև արտագնա աշխատանքով զբաղվող մեր հայրենակիցները «ներմուծում» և «արտահանում են» մշակութային որոշ արժեքներ: Կարևոր է նաև տեղեկատվության մատչելիությունը:

Մեծահասակների մեծ մասը, նաև երիտասարդները լուրջ խնդիրներ չունեն ռուսալեզու տեղեկատվության հետ կապված: Ռուսական լրատվամիջոցներն իրենց հերթին մեծ ոգևորությամբ են ներկայացնում վերջին տարիների լուրջ առաջընթացը, դրանք կապելով երկրի նախագահի անվան հետ: Պատահական չէ, որ գրառված նյութերում բազմաթիվ են համեմատությունները հենց այդ քաղաքականության հետ: Սա, ըստ ազգագրական նյութերի, հասարակության մի մասի մոտ ձևավորում է ռուսական-պուտինյան մոդելը Հայաստանում ևս կիրառելու ցանկություն: Բավականին ուշագրավ փոփոխություններ են կատարվում նաև

նման ցանկությունն ունեցողների խմբերում: 1990-ական թթ. սկզբներին, երբ մեծ էին մանր ու միջին բիզնես զարգացնելու, արտադրամասեր հիմնելու հնարավորությունները, որպես «ուժեղ ձեռքի» քաղաքականության կողմնակիցներ հանդես էին գալիս հիմնականում մեծահասակները, այն սերունդը, որը կրթվել ու դաստիարակություն էր ստացել ԽՍՀՄ-ում և որի համար ուժեղ դեկավարը նաև ապահովվածության երաշխիքներ ստեղծող էր: Այսօր, հատկապես գյուղական միջավայրում, որտեղ լուրջ են երիտասարդության զբաղվածության խնդիրները, մեծահասակներին միացել է գործազուրկ ու ծանր սոցիալական վիճակում հայտնված երիտասարդության մի մասը, որը պետությունից պահանջում է աշխատանք ու երաշխիքներ գյուղում մնալու համար: Հակառակ դեպքում ապագան կապվում է դրսի, հիմնականում ՌԴ հետ, որտեղ, չնայած շուկայական հարաբերությունների զարգացմանը, կա ուժեղ, հասարակության աղքատ խավերի մասին մտածող իշխանություն: Բնական է, որ այս մտայնությունը ևս ազդում է որոշակի մշակութային ենթամոդելների ձևավորման վրա, հատկապես եթե հաշվի առնենք, որ գրեթե բոլոր գյուղերում կան բավականին հաջողակ գործարարների օրինակներ, որոնք ընդամենը մի քանի տարի առաջ եղել են բնակվել են գյուղում, կրել նույն դժվարությունները, իսկ այսօր արդեն ապահովված են և կարողանում են օգնել համագյուղացիներին ու բարեկամներին:

Այսինքն, հիասթափությունը սեփական միջավայրից ու առկա բարդություններից, որն ընդունել է զանգվածային բնույթ, ստիպում է մտածել այլընտրանքի մասին: Հայաստանում նման այլընտրանք կարծես թե չկա, կամ որպես հիմնական այլընտրանք հանդես է գալիս Երևանը, որտեղ աշխատանք գտնելու դեպքում կարելի է պարզապես մի քիչ ավելի լավ «յուլա գնալ», քան այլ

բնակավայրերում: Ուստի որպես հիմնական այլընտրանք հանդես է գալիս Ռուսաստանը: Պատահական չէ, որ տարբեր սոցիոլոգիական հարցումներն արձանագրում են միգրացիոն ակտիվության ու արտագաղթի տրամադրությունների բավականին բարձր տեսակարար կշիռ գրեթե բոլոր բնակավայրերում:

Գրառված ազգագրական նյութերը թույլ են տալիս արձանագրել հայկական ընտանիքի համար մշակութաբանական-ազգաբանական տեսանկյունից խիստ կարևոր մի իրողություն՝ Նա: Տարբեր մշակութային համակարգերում, այդ թվում նաև հայկականում, հնուց անտի խիստ կարևոր ուշադրություն է դարձվել երեխաների դաստիարակության, ապագայի խնդիրներին: Նախախորհրդային շրջանում դպրոցների սակավության, կրթության սահմանափակ հնարավորությունների պայմաններում առաջին պլան էին մղվում աշխատանքային դաստիարակությունն ու ընտանեկան, համայնքային ավանդական նորմերի յուրացումը: Երիտասարդները նախապատրաստվում էին ծնողների գործը շարունակելու, իսկ աղջիկները՝ ամուսնության ու մայրության համար, դեռևս վաղ հասակից ստանալով անհրաժեշտ փորձն ու հմտությունները: Շեղումներն այս մոդելից գրեթե բացակայում էին, քանի որ ավանդական մշակութային միջավայրում, ի թիվս բազմաթիվ այլ իրողությունների, գրեթե նույնականորեն վերարտադրվում էին նաև կյանքի պլանավորման մոդելները: Խորհրդային շրջանում փոխվեցին սոցիալական շարժունության հնարավորությունները: Այժմ հնարավոր էին ոչ միայն «շեղումներ», այլ նաև լուրջ ձեռքբերումներ այդ շեղումների արդյունքում: Հայաստանյան մտավորականությունը ասվածի լավագույն օրինակն է: Առանձին ուսումնասիրություններ հարկավոր չեն ապացուցելու համար, որ գիտության, արվեստի բնագավառի ներկայացուցիչների մեծ մասը սերում է սոցիալական

հիերարխիայում ոչ այնքան բարձր դիրքեր զբաղեցրած ընտանիքներից: Իհարկե, արդեն 1960-70-ական թթ. մտավորականությունը սկսեց վերարտադրել ինքն իրեն, սակայն կարևորվում էր «վերարտադրության որակը»: Այս պայմաններում և քաղաքային և գյուղական բնակավայրերում խիստ կարևորվեց կրթությունը, հատկապես բարձրագույնը: Հարգի մասնագիտությունների սանդղակում բարձր դիրքեր էին զբաղեցնում մտավորականության ներկայացուցիչները, իսկ դասախոս կամ գիտնական դառնալը շատ ընտանիքների ցանկության վերին շեմն էր: Բարձրագույն կրթություն ստացած երիտասարդությունն անելիք ուներ և քաղաքներում և գյուղերում, չնայած որպես կանոն նախապատվությունը տրվում էր քաղաքին: Ապահովվածությունը երաշխավորված էր նաև այս տեսանկյունից, քանի որ շատ քչերը կարող էին ենթադրել Խորհրդային Միության հնարավոր փլուզման, ճգնաժամերի, բարդությունների մասին: Կար կայուն վիճակը վերարտադրելու հնարավորություն, ինչը կարևոր էր հատկապես երիտասարդ ընտանիքների համար:

ԽՍՀՄ փլուզումը միանգամից փոխեց կամ դուրս մղեց այս մեխանիզմների մեծ մասը: Մշակութային վակուումում, հետագայում արդեն մշակութային բազմազանության մեջ հայտնված ընտանիքը, կորցնելով ապահովվածության ու վերջիններիս վերարտադրության կայուն մեխանիզմները, բնականաբար, սկսում է մտածել այլընտրանքների մասին: Հայաստանում, ցավոք սրտի, այդ այլընտրանքը չկա, քանի որ գիտելիքը, գիտելիքի օգնությամբ բարձր սոցիալական դիրք, առավել ևս ունեցվածքային վիճակ ապահովելու հնարավորությունները սահմանափակ են: Որպես այլընտրանք հանդես են գալիս արդեն ներմուծվող մոդելները՝ ռուսական, արևմտյան, ամերիկյան: Սակայն դրանց մի մասը հասկանալի չէ

հասարակության համար: Ուստի հիմնական մոդելի դերը բնակչության մի մասի համար կատարում է ռուսականը, որտեղ հնարավոր է կարճ ժամկետում էապես բարելավել կենսամակարդակը, լուծել երեխաների ապագայի հարցերը թեկուզ երեխաներին ռուսական կրթության տալու ճանապարհով: Այսինքն, սկսած 1990-ական թթ. կեսերից, հատկապես երիտասարդ ընտանիքների մի մասը սկսել է իրեն «նախապատրաստել» ՌԴ և ԱՊՀ այլ երկրներ տեղափոխվելուն: Այս իրավիճակում, եթե դարձյալ դիմենք ազգաբանական տերմինաբանությանը, ընտանիքն ավելի «բաց» է դառնում նոր արժեքների յուրացման համար, իսկ որոշ դեպքերում դա վերածվում է ազգային ավանդական ընտանեկան ու միջընտանեկան նորմերի ոտնահարման: Սկսած 1990-ական թթ., ինչպես մեր, այնպես էլ մեր գործընկերների կողմից գրառվել են բազմաթիվ օրինակներ, երբ արտագնացությամբ զբաղվող ընտանիքներում կինը հանդուրժում է «դրսում երկրորդ կնոջ գոյությունը», որպեսզի չվտանգի երեխաների ապագան ու դրամական աջակցություն ստանա: Այս վիճակի հանդեպ հանդուրժող են դառնում նաև ազգական-բարեկամներն ու հասարակությունը⁵⁹: Սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամը, փաստորեն, առաջին պլան է մղել նյութական ապահովվածության խնդիրը, հաճախ նաև ներընտանեկան հարաբերությունները բնութագրող կարևոր իրողություններից հրաժարվելու հաշվին: Հայաստանից հեռանալու ցանկություն կամ հնարավորություն չունեցող ընտանիքների միջավայրում նույնպես երեխաների ապագայի հետ կապված խնդիրներն առաջին պլանում են, ընդ

⁵⁹ Շատ դեպքերում բերվում էր հետյալ հիմնավորումը.-«ավելի լավ է հանդուրժել նման իրավիճակն ու երեխաների ապագան ապահովել, քան ամուսնալուծվել, ընկնել սկանդալների մեջ ու երեխաներին սոված թողնել»:

որում, չնայած կրթության ու գիտելիքի վարկի անկմանը, ընտանիքն, այնուամենայնիվ փորձում է հնարավորության սահմաններում լուծել բարձրագույն կրթության հարցը, եթե ոչ այսօրվա, ապա գոնե ապագայի ապահովվածության ակնկալիքով:

Միաժամանակ, անորոշությունն ու վաղվա հանդեպ անվստահությունը դառնում են նաև սոցիալական ու մշակութային միջավայրի քայքայման ու ձևախեղման պատճառ հատկապես գյուղական միջավայրում: Սոցիալական ու մշակութային կայուն իրավիճակի վերարտադրության համար անհրաժեշտ են հասարակական ներդաշնակություն, սեռատարիքային ու ունեցվածքային օպտիմալ բաշխվածություն, ժողովրդագրական բնականոն իրավիճակ: Երիտասարդության ու ընտանիքների արտահոսքը գյուղական բնակավայրերից բերում է նշված պարամետրերի անկման: Անցած մեկուկես տասնամյակում էական փոփոխությունների են ենթարկվել ժողովրդագրական բոլոր հիմնական ցուցանիշները՝ ծնելիություն, մահացություն, բնական ու մեխանիկական աճ, ամուսնությունների ու ամուսնալուծությունների թիվ⁶⁰: Գյուղական միջավայրում էապես նվազել են ամուսնությունների ու ծնունդների թիվը, աճել է ամուսնական տարիքը, մեծացել է տարիքային մեծ տարբերությամբ ամուսնությունների տեսակարար կշիռը: Ազդեցությունների ու հետևանքների շղթան կարելի է շարունակել: Երիտասարդության զանգվածային արտահոսքը վտանգ է ներկայացնում նաև մշակույթի համար: Մեծահասակներն

⁶⁰ Մանրամասն տես 2001թ. մարդահամարի արդյունքները: Փաստենք նաև, որ բավականին լուրջ տարակարծություններ կան պաշտոնական վիճակագրական տվյալների հետ կապված: Որոշ հետազոտողներ ու անկախ փորձագետներ գտնում են, որ իրական վիճակը տարբերվում է պաշտոնական վիճակագրության ներկայացրած տվյալներից:

համեմատաբար ավելի «պահպանողական» են թեկուզ առաջադիմական նորույթների ընկալման ու վերարտադրության հարցերում: Անցումային շրջանի ցանկացած հասարակությունում առողջ, առաջադիմական նորույթները, հատկապես վերջիններիս գիտակցված ներդրման ու բնականոն վերարտադրության պայմաններում կարևոր նշանակություն ունեն հասարակության ներդաշնակության ապահովման տեսանկյունից: Չկա երիտասարդություն, չկան նորույթների նկատմամբ ընկալունակ խմբեր, վտանգված են հասարակական ու ընտանեկան կարևորության բազմաթիվ մեխանիզմներ: Դրանց տևականությունը իր հերթին կարող է հանգեցնել «մշակութային լճացման», երբ հասարակությունը հայտնվում է տևական իներցիայի վիճակում: Հաշվի առնենք, որ արևմտյան արժեքային համակարգը, քաղաքացիական հասարակություն, ժողովրդավարություն հասկացությունները մշակութային իրողություններ են և նորույթ հայաստանյան հասարակության մեծ մասի համար: Այսօր հասարակությունը կանգնած է վերջիններիս ձևի և բովանդակության խորքային ընկալման փաստի առաջ, ուստի ակտիվ երիտասարդության և ընդհանրապես ակտիվ, նախաձեռնող սոցիալական ու մասնագիտական խմբերի առկայությունը չափազանց կարևոր նշանակություն ունի նշված տեսանկյունից:

Այժմ անդրադառնանք ընտանիքի և ժամանակակից հայկական մշակույթի վրա էապես ազդող ևս մեկ, այն է՝ արևմտյան արժեքների ներթափանցման ու ամրագրման խնդիրներին: Պարզ է, որ ռուսական կամ նախկին խորհրդային, արևմտյան կամ ավանդական հայկական արժեքային համակարգերն ու ենթահամակարգերը իրականում փոխկապակցված են, փոխլրացնող ու փոխպայմանավորող:

Դրանց առանձին-առանձին դիտարկումը հետապնդում է յուրաքանչյուր համակարգի ու ենթահամակարգի ազդեցությունը հնարավորինս ամբողջապես ներկայացնելու նպատակ:

Վերջին տարիների հետազոտություններում շատ է գրվել անցումային շրջանի հասարակություններում տարբեր տիպի ազդեցությունների մասին: Մասնագետները տարբեր մեկնակետերից դիտարկել են և՛ հայկական մշակութային համակարգի վերարտադրության և՛ խորհրդային շրջանի տարրերի պահպանվածության և՛ օտար արժեքների ներթափանցման հետ կապված հարցերը: Նախորդ բաժիններում նշվեց, որ խորհրդային համակարգը փակ համակարգ էր և սահմանափակում էր ըստ էության բոլոր «կասկածելի» արժեքների մուտքը հասարակություն, լինի դա տնտեսության, մշակույթի թե քաղաքականության ոլորտում:

Արցախյան շարժումը դարձավ այն շրջափուլը, որը վերացրեց արժեքային սահմանափակումների հիմնական մասը և նպաստեց տնտեսական, քաղաքական ու մշակութային համակարգերի բաց դառնալուն: Սակայն, մինչև 1990-ական թթ. սկզբի՝ հանրապետության անկախության հռչակումն ու խորհրդային կայսրության փլուզումը հասարակության տարբեր սեռատարիքային ու սոցիալ-մասնագիտական խմբերի ուշադրության կենտրոնում հայտնվել էին ազգային արժեքները և դրված էր վերջիններիս վերաիմաստավորման խնդիր, առաջնային էին մշակույթի նորովի ներկայացման հարցերը: Այս շրջանում եթերը, մամուլը հեղեղված էր ազգայինին վերաբերող բազմաթիվ նյութերով, այս շրջանին են վերաբերում տարաբնույթ անվանափոխումները, անցյալի տարբեր նշանավոր գործիչների ոգեկոչումները:

Արևմուտքը 1980-ական թթ. դեռևս շարունակում էր մնալ հեռու, իսկ հիմնական տեղեկատվությունը ստացվում էր սփյուռքում բնակվող մեր հայրենակիցներից: Արցախյան շարժման ծավալումը, սակայն, ընձեռեց արևմուտքը մասնակիորեն հասկանալու ու տեսնելու հնարավորություն, քանի որ տարբեր հեռուստա- ու ռադիոընկերությունները, թերթերը ժամանակ առ ժամանակ անդրադառնում էին շարժմանը, իսկ հասարակությունը մեծ ոգևորությամբ էր վերաբերում արդարացի պայքարի վերաբերյալ ցանկացած դրական անդրադարձի: 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժը արևմուտքն ավելի բաց ու հասանելի դարձրեց հայ հասարակության համար: Համաշխարհային հանրության օգնությունն Ադետի գոտում աննախադեպ էր. տարբեր բնակավայրերում աշխատում էին ոչ միայն խորհրդային հանրապետությունների, այլ տարբեր երկրների ու միջազգային կազմակերպությունների հարյուրավոր ներկայացուցիչներ: Այս շրջանում է, որ Սպիտակում կառուցվեց իտալական թաղամասը, Գյումրիում՝ ավստրիական թաղամասն ու հիվանդանոցը, իտալական ու գերմանական պոլիկլինիկաները, անգլիական ու ֆրանսիական դպրոցները, տասնյակ այլ հաստատություններ⁶¹: Սակայն այս շփումները կենդանի արևմուտքի հետ դեռևս դիպվածային են, քանի որ կա ԽՍՀՄ-ը և օգնությունն ու աշխատանքները կատարվում են համակարգի հսկողության ներքո: Մեր դիտարկումներն ու Ադետի գոտում գրառված նյութերը ցույց են տալիս, որ հասարակության մի մասը զարմանքով էր

⁶¹ Այդ տարիներին Ադետի գոտի այցելեցին նաև որոշ արևմտյան գործիչներ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թետչերը, Տեխասի նահանգապետ, ներկայումս ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը: Գյումրեցիները նույնիսկ կատակում էին, որ եթե նման տեմպով այցելությունները շարունակվեն, ապա քաղաքի փողոցները շատ կարճ ժամանակում կասֆալտապատվեն:

«հայտնագործում» իրական արևմուտքը. շատերը զարմանում էին կատարվող աշխատանքների որակից ու արագությունից: Արևմուտքի դրական ընկալմանը նպաստում էին նաև բուժման, հանգստի ու վերականգնման նպատակով տարբեր երկրներ մեկնածները, որոնց պատմածները արևմտյան կենսամակարդակի, կարգուկանոնի, կազմակերպվածության մասին հաճախ անհրական էին ու դժվար հասկանալի: Սակայն, եթե դիմենք ազգաբանական լեզվին, կարող ենք արձանագրել, որ այդ շրջանում արևմուտքի մշակութային ազդեցությունն ու ազդեցության դաշտն այնքան էլ մեծ չէին, մանավանդ որ շարքային քաղաքացիների մի մասի համար սահմանափակ էին նաև շփումները:

Արևմուտքը, որպես քաղաքական, տնտեսական ու արժեքային ամբողջական համակարգ, Հայաստան մուտք գործեց փոքր-ինչ ավելի ուշ: Անկախացումից անմիջապես հետո նորանկախ հանրապետությունը կանգնեց լուրջ, արմատական համակարգային փոփոխությունների խնդրի առջև: Պարզ էր, որ խորհրդային տնտեսական պլանային համակարգը նոր պայմաններում իրեն սպառել էր և անհրաժեշտ էին այլընտրանքներ:

Հայաստանում, ինչպես գիտության այլ ոլորտները, տնտեսագիտությունը ևս համալրված էր խորհրդային դպրոցի ներկայացուցիչներով, որոնց գիտելիքները շուկայական տնտեսության, վերջինիս ինստիտուտների վերաբերյալ ավելի շատ տեսական էին: Տնտեսագետների երիտասարդ սերունդն այս առումով նույնպես էական առավելություններ չունեին: Սակայն իշխանության եկած երիտասարդ քաղաքական գործիչները հընթացս սովորելով շուկայական տնտեսության այբուբենը, տնտեսության ոլորտում նախապատվությունը տվեցին «շոկային

թերապիայի» մեթոդին, կարճ ժամանակում իրագործելով շուկայական տնտեսության ձևավորմանն ուղղված վերափոխումներ: Հետագայում առաջին սերնդի քաղաքական գործիչների մի մասն արդեն խոստովանում էր, որ 1990-ական թթ. սկզբին իրոք չկային բավարար գիտելիքներ շուկայական տնտեսության վերաբերյալ և որոշ միջոցառումներ իրագործվում էին առանց համապատասխան հիմնավորումների:

Հասարակական կարծիքի ուսումնասիրության, տարբեր խմբերի մոտեցումներն ու տեսակետները հաշվի առնելու մասին խոսք չէր գնում: Ավելին, ընդհանրապես դրված չէր մշակութային ու արժեքային հնարավոր փոփոխությունները հաշվի առնելու կամ որոշ գործընթացներ վերահսկելի դարձնելու խնդիր: Այսինքն, չկար իրագործվող փոփոխությունների խորքային լինելու գիտակցությունը և քաղաքական էլիտայի ներկայացմամբ տնտեսական վերափոխումները իրենց ետևից բերելու էին նաև վերջիններիս ազդեցությունները կրող խավերի մեխանիկական ձևավորման գործընթացներ⁶²:

1990-ական թթ. իրագործված մինչև վերջ չհիմնավորված ու ցայսօր չհաղթահարված հետևանքներ ունեցող վերափոխման լավագույն օրինակը «Հոլային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացն էր»: Տնտեսագիտական պարզունակ բանաձևերը «մասնավոր սեփականության ինստիտուտների արդյունավետության մասին» այս գործընթացում դրսևորվեցին լավագույնս:

⁶² Հիշատակելի են ՀՀԿ-ական որոշ գործիչների այն հայտարարությունները, որ հարուստների խավի ձևավորումը կհանգեցնի նաև միջին խավի ձևավորմանը: Անցած մեկուկես տասնամյակը ցույց տվեց, որ այս «ճշմարտությունը» չափազանց հեռու էր իրականությունից և մենք ունենք միայն սեփական վերարտադրության խնդիրներով մտահոգ, քաղաքական էլիտայի հետ սերտաճած օլիգարխներ:

Հընթացս տնտեսագիտության այբուբենը յուրացնող քաղաքական էլիտան ժամանակ ու ցանկություն չունեցավ դասագրքային առաջին հայացքից պարզունակ բանաձևերի բարդ ու խորքային բովանդակությունը հասկանալու:

Արևմուտքը, որի արժեքների ու տեխնոլոգիաների ներդրման փորձ արվեց արդեն 1991թ., ընկալվեց «սառցաբեկորի մնան՝ ջրից վեր գտնվող մասով»:

Շուկայական համակարգը դիտարկվեց միայն որպես տնտեսական հարաբերությունների համակարգ, առանց ուշադրություն դարձնելու այն խնդրին, որ ցանկացած համակարգի արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է վերջինիս հիմքում ընկած արժեքները կրող խմբերի առկայությամբ: Շուկայական տնտեսության հիմքում ընկած մշակույթը դուրս բերվեց համակարգից ու իրագործվեց վերջինիս միայն տնտեսական բաղկացուցիչը: Մինչդեռ քաղաքական ու տնտեսական էլիտայի ցանկացած ներկայացուցիչ, անկախ նախընթաց փորձից, պարտավոր էր ծանոթ լինել այն իրողությանը, որ 1950-60-ական թթ.-ից արդեն մոդեռնիզացիայի տարբեր տեսությունները և աֆրիկյան, լատինաամերիկյան ու ասիական երկրներում արևմտյան տնտեսական համակարգերը ներդնելու ջանքերի մի մասն անհաջողության էին մատնվել այն պարզ պատճառով, որ հաշվի չէին առնվել այդ արժեքների պոտենցիալ կրող հասարակության, ընտանիքի մշակութային առանձնահատկությունները: Հայկական գյուղում յուրաքանչյուր ոք գիտի, որ գյուղատնտեսությունը ոչ միայն տնտեսական զբաղմունքների համախումբ է, այլ նաև տասնամյակների ու հարյուրամյակների ընթացքում կայացած ու վերարտադրվող արժեքներ ունեցող համակարգ: Դեռևս խորհրդային շրջանում գյուղատնտեսության զարգացման

օպտիմալ տարբերակների մշակման փորձեր էին արվում: Սակայն դրանք բախվում էին բարդությունների, որովհետև զուգահեռ չէին լուծվում մշակութային խնդիրներ: Հողային վերափոխումներն հայկական գյուղում իրագործվեցին կոմունիստական «այս հին աշխարհը կքանդենք մենք մինչև հիմքերը և հետո... կմտածենք» կարգախոսով, հանգեցնելով լուրջ դժգոհությունների արդեն իրագործման փուլում: Այս դեպքում կարևոր է ոչ միայն դժգոհությունը վերափոխումներ իրագործողների, այլ նոր արժեքների հանդեպ: Շուկայական տնտեսության սկզբունքների անբավարար իմացության պայմաններում դժգոհությունն ու անբավարարվածությունը չեն կոնկրետացվում ու անձնավորվում: Դժգոհելով վերափոխում իրագործած պետական պաշտոնյայից կամ գյուղխորհրդի նախագահի պաշտոնում հայտնված երիտասարդից, գյուղացին դժգոհում է նաև համակարգից, որը որոշ դեպքերում պարտադրվեց: Եվ ոչ թե այն պատճառով, որ հայկական գյուղական ընտանիքը չէր ուզում դառնալ սեփականատեր: Ավելի մեծ հողակտորներ ստանալու համար ընտանիքները որոշ դեպքերում գնում էին արհեստական բաժանությունների, գժտվում էին հարևանների ու ազգականների հետ: Մասնավոր սեփականությունը իր առավելություններն ապացուցել էր նաև կոնկրետ օրինակներով: Տնամերձ հողամասերի մշակման արդյունավետությունն ու վերջիններիս բերքատվությունն անհամեմատ ավելի բարձր էին պետական ու խորհրդային տնտեսությունների համապատասխան ցուցանիշներից: Խնդիրն այստեղ վերաբերում է նրան, որ հայկական գյուղական ընտանիքը դեռևս պատրաստ չէր արմատական համակարգային փոփոխությունների: Ընտանիքը բավականին պահպանողական ինստիտուտ է: Արմատական տեղաշարժերը որոշ դեպքերում խախտում են ոչ միայն ընտանիքի

տնտեսական գործունեության մեխանիզմները, այլ նաև ընտանեկան ու ներընտանեկան հարաբերությունները կարգավորող մշակութային տարբեր մոդելները: Խորհրդային շրջանում «բալանսն» ապահովվում էր տարբեր ձևերով՝ աշխատավարձ, պետական սեփականությունից «օգտվելու» հնարավորություններ, պետության կողմից ապահովված նվազագույն կենսամակարդակ: Սրանք ձևավորում էին նաև ներընտանեկան ու հասարակական ներդաշնակության մթնոլորտ, նվազագույնի հասցնելով սոցիալական լարվածությունն ու հնարավոր կոնֆլիկտները⁶³: Արմատական տեղաշարժերը, ինչպես «պահանջում է շոկային թերապիայի» մեթոդը, նվազագույնի հասցրին «բալանսի» տարբեր բաղկացուցիչների կարևորությունը՝ նախկինում էլ նույն հողի վրա աշխատած գյուղացին միանգամից զրկվեց աշխատավարձից, ամեն օր աշխատանքից ինչ-որ բան տուն տանելու հնարավորությունից, երաշխավորված նվազագույնից, փոխարենն ստանալով մինչև վերջ չմշակված այլընտրանք: Նման մոտեցմամբ ընտանիքի աչքում վարկաբեկվեց նաև այն «արևնուտքը», որի արժեքները փորձ էր արվում ներդնել ու ամրագրել: Հետագայում արդեն և՛ գյուղական և՛ քաղաքային միջավայրում դժգոհությունն ավելի խորացավ, որովհետև ընտանիքի կենսամակարդակի հերթական անկում արձանագրվում

⁶³ Հասարակական դժգոհությունը ներկայիս և նախկին իշխանություններից հիմնավորվում է ելնելով ոչ թե այն բանից, որ «սրանք ուտում են», այլ նրանից որ կոմունիստներն «էլ էին ուտում, բայց այնպես, որ ժողովրդին էլ էր ինչ-որ բան հասնում: Սրանք միայն իրենք են ուտում»: Առաջին հայացքից պարզունակ այս ձևակերպումը կարևոր տարրեր է պարունակում և արտահայտում է հասարակական ընկալումների ու չափորոշիչների որոշ առումները: Այս բանաձևը նույն բովանդակությամբ կրկնվում է քաղաքային ու գյուղական բնակավայրերում, տարբեր սեռատարիքային ու սոցիալ-մասնագիտական խմբերի միջավայրում անցկացված տասնյակ անհատական ու խորացված ֆոկլոս-խմբային հարցումներում:

էր շուկայական տնտեսության ամրագրմանն ուղղված ցանկացած վերափոխումից հետո: Գների ազատականացումը բերեց հիպերինֆլացիայի, փոշիացվեցին բանկային խնայողությունները, արդյունաբերության ոլորտի սեփականաշնորհումը հանգեցրեց ձեռնարկությունների մեծ մասի անգործությանը, զանգվածային գործազրկության ու սեփականության գերկենտրոնացման քաղաքական ու տնտեսական էլիտայի կամ վերջինիս հետ կապեր ունեցող խմբերի ձեռքում: Այսինքն, քաղաքային միջավայրում, ինչպես գյուղականում տարածվեցին հիմնականում բացասական պատկերացումներ առաջադրվող համակարգերի և վերջիններիս տանող ճանապարհների մասին:

Միաժամանակ, կարևոր է տարբեր արժեքային համակարգերի ու ենթահամակարգերի «ազդեցության դաշտի» դիտարկման խնդիրը: Սույն ծրագրի շրջանակներում անցկացված հետազոտությունները հերթական անգամ հավաստեցին, որ հատկապես գյուղական միջավայրում սահմանափակ են իրական արևմուտքի մասին պատկերացում կազմելու հնարավորությունները:

Սահմանամերձ գոտու, փախստականաբնակ գյուղական համայնքներում, օրինակ, դրանք կապված են զարգացման ու աջակցության տարբեր ծրագրերի իրագործման հետ, որոնց շրջանակներում պարբերաբար գյուղեր են այցելում նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: Տավուշի մարզում գործում են միջազգային մի քանի կազմակերպությունների գրասենյակներ, որոնք ծրագրեր են իրականացնում գրեթե բոլոր համայնքներում. ենթակառուցվածքների վերականգնում, վարկավորում, բնակարանաշինություն, քաղաքացիական կրթության ծրագրեր և

շփումներն ավելի առարկայական են ու շոշափելի: Սակայն, դարձյալ եթե վկայակոչենք ազգագրական նյութերը, բավականին ցածր է ամբողջ համայնքի ու ընտանիքների տեղեկացվածության աստիճանը: Առանձին ընտանիքներ ընդամենը տեղյակ են, որ իրագործվում են ծրագրեր, սակայն չգիտեն որ կազմակերպության կողմից, ինչ միջոցներով, ինչ նպատակով: Այս իրողությունը գրանցել ենք հետազոտված գրեթե բոլոր համայնքներում: Աղետի գոտում, ինչպես նշեցինք, արևմուտքն ավելի տեսանելի ու մատչելի էր երկրաշարժից անմիջապես հետո: Այսօր արդեն տարբեր համայնքներում իրագործվող ծրագրերի թիվը սահմանափակ է, հետևաբար սահմանափակ են նաև «կենդանի» արևմուտքի հետ շփվելու հնարավորությունները: Նույնը կարելի է ասել նաև հետազոտված քաղաքների մասին. Գյումրիում, Դիլիջանում, Արարատում ընտանիքների մի մասը տեղեկացված է միջազգային կազմակերպությունների ծրագրերին: Սակայն հստակ, կոնկրետ տեղեկատվությունը բացակայում է, ինչը, սահմանափակում է արևմուտքի մասին պատկերացումներ կազմելու հնարավորությունը:

Եթե համեմատենք տարբեր մշակութային ու քաղաքական համակարգերի ազդեցության դաշտերը, ապա կարող ենք արձանագրել, որ ռուսական ազդեցությունն ավելի մեծ է ընդգրկման տեսանկյունից: Սա կապված է նաև նախընթաց զարգացման հետ, քանի որ ԽՍՀՄ գոյության տասնամյակներին, ավել կամ պակաս ինտենսիվությամբ ընթանում էին ռուսիֆիկացիայի գործընթացներ, ինչը բնականաբար ավելի էր մեծացնում ռուսական մշակութային ազդեցությունը: Իհարկե, այսօր չի կարելի խոսել նախկին ծավալների մասին: Դրանք Հայաստանում էապես կրճատվել են: Գրեթե չկան ռուսական դպրոցներ, անգլերենն աստիճանաբար դուրս է մղում ռուսերենը:

Սակայն իներցիան, իսկ որոշ դեպքերում նաև ուղղակի ազդեցությունները դեռևս պահպանվում են:

Ինչ վերաբերում է արևմուտքին ու արևմտյան ազդեցությանը, ապա ազգագրական դիտարկումները թույլ են տալիս արձանագրել բավականին ուշագրավ ազգաբանական ու մշակութաբանական իրողություններ, ինչպես նաև արևմտյանի տարածման ու ազդեցության որոշ ենթափուլեր:

Վերը նշեցինք, որ արևմուտքը որպես տեսանելի իրողություն, հայ հասարակությանը մատչելի դարձավ սկսած 1980-ական թթ.-ից, ընդ որում՝ արտակարգ իրավիճակներում. Արցախյան շարժման և 1988թ. դեկտեմբերի աղետալի երկրաշարժի հետ կապված: Այս փուլում արևմուտքից ստանում էինք բարոյական ու նյութական աջակցություն, իսկ հատկապես արցախյան շարժման հետ կապված, բարոյական աջակցությունն էական էր: Աղետի գոտին, բացի բարոյականից ստացավ նաև հսկայական նյութական աջակցություն: Այսինքն, Արևմուտքը, ի դեմս ԱՄՆ-ի և եվրոպական երկրների, հանդես էր գալիս որպես աջակից: Սրանում, իհարկե, մեծ է սփյուռքահայ գաղթօջախների ազդեցությունը, որոնք կարողանում էին կազմակերպել ու ուղղորդել բազմաթիվ միջոցառումներ: Արևմուտքից եկող ազդակներն այս փուլում դրական էին:

Հաջորդ փուլն արդեն կապվում է անկախության հետ: Հայոց քաղաքական պատմության ընդհանուր գծերով դիտարկումը ցույց է տալիս, որ 20-րդ դարում անկախ պետականության շինարարության հաջող օրինակներ գրեթե չկան: 1918-20թթ. հանրապետությունը կարճ կյանք ունեցավ, իսկ խորհրդայնացումը պարտադրվեց որպես արդյունք ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակի: Անկախության հռչակումից հետո արևմտյան տնտեսական ու քաղաքական համակարգերը

դարձան հիմնական այլընտրանք, մանավանդ որ հանրապետությունը հայտնվեց *կրկնակի ազդեցության դաշտում. ռուսական* պահպանված ազդեցությանն ավելացավ *արևմտյանը*⁶⁴:

Իհարկե, ազդեցությունն ավելի շատ մակերեսային էր, քանի որ ընտանիքն իրականում սահմանափակ պատկերացումներ ուներ ինչպես առաջարկվող փոփոխությունների, այնպես էլ արևմուտքի դրական ու բացասական կողմերի մասին: Արևմտյան ազդեցության կրողն ու տարածողը 1990-ական թթ. սկզբներին ավելի շատ նոր ձևավորված քաղաքական էլիտան էր, որը, ինչպես նշեցինք, որոշ գործողություններ իրականացնում էր նաև հարկադրված: Այսինքն, չնայած արևմուտքի ազդեցության աճին, բացակայում էր իրական ընկալումն ու չկային արևմտյան արժեքներ կրող խմբեր⁶⁵: Արևմուտքի ազդեցությունն ու արևմտյան ժողովրդավարական ու քաղաքացիական արժեքների ներդրումն այս փուլում ավելի շատ մեխանիկական բնույթ ուներ և ընթանում էր նախկին խորհրդայինի համատարած ժխտման պայմաններում. այդ ամենն արվում էր իշխանության անմիջական մասնակցությամբ: Այս փուլի համար կարելի է արձանագրել, որ վերաբերմունքն արևմուտքի ու արևմտյան արժեքային համակարգերի հանդեպ դեռևս հիմնականում դրական է կան

⁶⁴ ԶԶ-ում և նախկին ԽՄ տարածքում վերափոխումներն իրագործվեցին արևմուտքի մասնակցությամբ ու առաջարկած տարբերակներով: Այս շրջանում ԶԶ կառավարության կազմում հայտնվեցին նաև բավականին սփյուռքահայեր՝ Ր. Զովհաննիսյան, Ս. Թաշյան և այլք, որոնք արևմտյան ազդեցությունների կրողն ու տարածողն էին:

⁶⁵ Վերջին մեկուկես տասնամյակում բավականին շատ է գրվում այն մասին, որ մերձբալթյան հանրապետություններն ավելի արագ ու հաջող կարողացան ներգրավվել նոր տնտեսական, քաղաքական ու մշակութային հարաբերությունների դաշտ: Մասնագետների մեծ մասը դա բացատրում է մինչև 1940-ական թթ. անկախ պետությունների գոյությամբ, ինչպես նաև մերձբալթյան հասարակություններում քաղաքական մշակույթի ավելի բարձր մակարդակով:

չեզոք: Սրանում կարևոր են նաև տնտեսական գործոնները: Չնայած էական տեղաշարժերին, դեռևս արձանագրված չէր բնակչության կենսամակարդակի կտրուկ անկում, գործում էին արդյունաբերական ձեռնարկությունները, ընտանիքները պահպանում էին տանելի կենսամակարդակը, իսկ տնտեսական գործունեության ազատականացումը հնարավորություն տվեց հիմնել բարձր եկամտաբերությամբ բազմաթիվ արտադրամասեր ու կոոպերատիվներ⁶⁶:

1990-1994թթ. համար կարևոր է մեկ հանգամանք ևս: Հանրապետությունն ու ԼՂՀ-ն ներքաշվել էին պատերազմի մեջ և առաջնային էին բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրները: Սահմանամերձ գոտուց տեղահանվել էին տասնյակ հազարավոր մարդիկ, ռազմական գործողությունները վտանգ էին ստեղծել հարյուրավոր բնակավայրերի համար, ԼՂՀ-ում ուղղակի վտանգի մեջ էին գրեթե բոլոր բնակավայրերը: Ստեղծված իրավիճակում արժեքային ազդեցությունների գործոնը մղվել էր երկրորդ պլան և իշխանությունները ու հասարակությունը լուծում էին նորանկախ հանրապետության գոյության և բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրներ: Չնայած դրան, արևմուտքի նկատմամբ վերաբերմունքը ենթարկվում էր փոփոխությունների, որովհետև ավելի առարկայական էին արևմտյան տնտեսական համակարգերի ձևավորմանն ուղղված միջոցառումների բացասական հետևանքները: Ինչպես ցույց են տալիս նյութերը, հասարակական գիտակցությունում այս ամենն ընկալվում էր «օտար-յուրային», «լավ-վատ» պարզ երկբևեռ

⁶⁶Այս տարիներին ստեղծված հարյուրավոր կոոպերատիվները զբաղվում էին ՌԴ և ԱՊՀ հանրապետություններ կոչկեղենի, տրիկոտաժեղենի արտահանմամբ, ինչը մեծ եկամուտներ էր ապահովում և արտադրությամբ և իրացմամբ զբաղվողների համար:

հակադրությունների տեսքով: Խորհրդայինը, որից հրաժարվելուն էին ուղղված հանրապետության ղեկավարության ջանքերը, ընդամենը մի քանի տարում ոչ միայն «վերականգնում» էր իր դրական որակները, այլ հակադրվում առաջադրվող նորին: Կենսամակարդակի կտրուկ անկման պայմաններում կարևորվում էին ոչ միայն տնտեսական-նյութական արժեքները, այլ հասարակական համագործակցության խորհրդային ձևերն ու եղանակները, որոնց մի մասը հասարակության կողմից ընկալվում էր արդեն որպես ավանդական: 1994թ.–ից հաստատված զինադադարից հետո արևմտյան արժեքային համակարգերի ներթափանցումը շարունակվեց ավելի ակտիվ:

Իշխանությունները ձեռնամուխ եղան արդյունաբերության ոլորտում վերափոխումների իրագործմանը: Ձևավորվեց սեփականատերերի նոր խումբ. ձեռնարկությունների գործունեության վրա ազդելու էական հնարավորություններ չունեցող մանր բաժնետերեր և «իրական» սեփականատերեր, ինչն էլ ավելի խորացրեց հասարակական տարբեր խմբերի բևեռացումը և ամրապնդեց քաղաքական իշխանությանը սերտաճած օլիգարխիկ խմբերի դիրքերը: Գրառված նյութերը թույլ են տալիս խոսել քաղաքական ու տնտեսական դաշտում ի հայտ եկած ևս մեկ ուժի մասին: Արցախյան պատերազմին մասնակցեցին հազարավոր մարդիկ: Զինադադարից հետո նրանց մի մասը կարողացավ մարտի դաշտում ձեռք բերած հեղինակությունն ու ազդեցությունը տեղափոխել քաղաքական ու տնտեսական հարաբերությունների ոլորտ, ակտիվորեն մասնակցելով պաշտոնների և սեփականության բաշխման ու վերաբաշխման գործընթացներին: Այս ուժերը կարևոր դերակատարություն ունեցան հատկապես 1996թ. ժողովրդական հուզումները ճնշելու գործում: Սակայն, ի տարբերություն քաղաքական վերնախավի,

որը գոնե արտաքուստ հանդես էր գալիս արևմտյան արժեքների կրողի ու քարոզչի դերում, դաշտային հրամանատարների «բանակը» իր հավակնություններն ու մասնակցությունը հանրապետության քաղաքական կյանքին հիմնավորում էր հիմնականում պատերազմի արդյունքներն ամրագրելու ու ազգային արժեքները պաշտպանելու անհրաժեշտությամբ: Սրան զուգահեռ, աճում էր հասարակական դժգոհությունը վերափոխումներից ու վերջիններիս արդյունքներից, քանի որ, ինչպես նշեցինք, ընտանիքներն ու անհատները դրական ոչինչ չստացան դրանցից: Եթե ավելացնենք նաև խորհրդային-ռուսական պահպանված ազդեցությունը, ապա պարզ կդառնա, որ քառասյին իրավիճակում հայտնված ընտանիքը ստիպված էր ընտրություն կատարել տարբեր համակարգերից. *խորհրդային*-որից փորձ էր արվում հրաժարվել, *ազգային* - որը դեռևս հստակեցված ու ձևակերպված չէր, *արևմտյան*–որի տարբեր դրսևորումները դարձյալ երկվության պատճառ էին դառնում. քաղաքացիական հասարակություն, ժողովրդավարություն, իրավական պետություն, քաղաքացու իրավունքների պաշտպանություն լոզունգներն իրական կյանքում բերում էին զանգվածային աղքատացման, կենսամակարդակի անկման, հասարակական բևեռացման, արտագաղթի⁶⁷: Ստեղծվեց

⁶⁷ 1998թ. խորհրդարանական ընտրությունները հասարակությունում առկա տրամադրությունների և մշակութային զարգացումների լավագույն հավաստումն են. Կարեն Դեմիրճյանին ծայր էին տալիս որխես խորհրդային շրջանի ապահովության ու պաշտպանվածության «սինվոլի», Վազգեն Սարգսյանին՝ որպես ազգային-ազատագրական շարժման արդյունքների ամրագրման ու ազգայինի պահպանության ջատագովի: «Կառուցենք և պաշտպանենք» կարգախոսը նույնպես այս տրամաբանության շրջանակներում է. երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է մեխանիկական, պարզունակ գործողությունների: Ինչպես երևում է, արևմտյան արժեքային համակարգը, որի ներդրման փորձ անում էր քաղաքական էլիտան

իրավիճակ, երբ հասարակությանն առաջարկվում էին տարբեր հարթությունների վրա գտնվող արժեքներ ու համակարգեր:

Քաղաքական ուժերի ու իշխանության կողմից որպես զրկանքների փոխհատուցում ներկայացվում էր *Արցախյան հաղթանակը*: Իրոք, 1994թ. ԼՂՀ-ն դե ֆակտո անկախ պետություն էր: ՀՀ սահմանամերձ գոտում ևս իրավիճակը կայունացել էր, բազմաթիվ բնակավայրեր արդեն դադարել էին սահմանամերձ լինելուց: Սակայն, ինչպես ցույց է տրված նման իրավիճակների ուսումնասիրությանը վերաբերող գրականությունում, կարևոր նշանակություն ունի ոչ այնքան բարոյական փոխհատուցումը կրած զրկանքների դիմաց, այլ այն, թե իրականում ինչ են ստանում անհատը, քաղաքացին, հասարակական տարբեր խմբերն ու խավերը: Փաստ է, որ հայկական ընտանիքը և քաղաքային և գյուղական միջավայրում դիմակայեց աներևակայելի զրկանքների: Փաստ է նաև, որ հատկապես 1990-ական թթ. սկզբին որպես զրկանքների հիմնավորում հանդես էր գալիս արցախյան հիմնախնդրի հայանպաստ լուծման անհրաժեշտությունը: Ընտանիքը «զրկանքների փուլից» դուրս եկավ նյութապես խիստ փոխված. հողի սեփականաշնորհումը դեռևս չէր տվել ակնկալվող արդյունքներն ու գյուղատնտեսությունը դարձել էր ընդամենը գոյության նվազագույնն ապահովող զբաղմունք, փոշիացվել էին բանկային խնայողությունները, վաճառվել էր ոսկեդեմի, թանկարժեք իրերի ու առարկաների հիմնական մասը, էական փոփոխությունների էին ենթարկվել ներընտանեկան հարաբերություններում ընտանիքի տարբեր անդամների ունեցած դերային գործառույթները:

բավականին երկար ժամանակ, հասարակության համար կարևորագույն նշանակություն ունեցող խորհրդարանական ընտրություններում մղված էր երկրորդ պլան:

Ավելին, ընտանիքը որպես օրգանական ամբողջություն կորցրել էր իր տեղը սոցիալական հիերարխիայում: Խորհրդային չափանիշներով միջին կենսամակարդակ ունեցող ընտանիքը, որը բնութագրվում էր բարձր կրթական ցենզով, սոցիալական շարժունությամբ, հայտնվել էր այնպիսի իրավիճակում, երբ գոյությունն ապահովելու համար ստիպված էր զբաղվել բոլորովին նոր, նախկին կարգավիճակին ու կրթական հնարավորություններին չհամապատասխանող զբաղմունքներով. փողոցային առևտուր, արտագնա աշխատանքներ, ցածր վարձատրվող դիպվածային աշխատանք և այլն: Այսինքն, հանուն գերնպատակի՝ *Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծման ու անկախ պետականության կայացման* կրած զրկանքները չփոխհատուցվեցին:

Սրան զուգահեռ հանրապետությունում ակտիվորեն շարունակվում էին կասկածելի անցյալ ունեցող օլիգարխիկ խմբերի ձևավորման գործընթացները, որոնք կարճ ժամանակում կուտակելով հսկայական հարստություն, փորձում էին որպես հիմնական ուժ և թելադրող հանդես գալ նաև հասարակական հարաբերություններում՝ իրենց վերարտադրությունն ապահովելու համար: Այսօր, առանց լուրջ մասնագիտական հետազոտությունների բարդ է ասելը, թե ինչն էր ընկած նման քաղաքականության հիմքում: Սակայն փաստ է, որ այս գործընթացներն էական ազդեցություն ունեն անցումային շրջանի բազմաթիվ կարևորագույն իրողությունների վրա և վտանգում են վերջիններիս հասարակական, մշակութային հիմքերը⁶⁸:

⁶⁸Գրեթե բոլոր անհատական խորացված ու ֆոկուս խմբային հարցումներում կարմիր թելի նման անցնում է սոցիալական անարդարության գաղափարը: Բազմաթիվ բանասացներ շեշտում են, որ այսօր ազդեցիկ անհատներն ու խմբերը դրան հասել են ոչ թե գործարար հատկանիշների, մտավոր բարձր կարողությունների օգտագործման, այլ պարզապես ստեղծված իրավիճակից

Անցումային շրջանի հայկական ընտանիքը կորցրել է *հիմնական սոցիալական ու արժեքային կողմնորոշիչները, հայտնվելով քառսային իրավիճակում*⁶⁹: Ընդ որում, այս իրողությունը դիտարկվում է և սինքրոն (համաժամանակյա) և դիաքրոն (տարաժամանակյա) հարթություններում:

Տարաժամանակյա հարթություն- ավելորդ կրկնություններից խուսափելու համար ևս մեկ անգամ թվարկենք այն հիմնական չափորոշիչները, որոնք ձևավորվել էին խորհրդային շրջանում և ապահովում էին հայկական ընտանիքի հասարակական, տնտեսական ու մշակութային կենսագործունեության սկզբունքները.

- *տնտեսական կայուն վիճակ*
- *երաշխավորված աշխատանք ու աշխատավարձ*
- *խորհրդային չափանիշներով միջին կենսամակարդակ,*
- *սոցիալական շարժունության հնարավորություններ,*
- *անվճար կրթություն և բուժօգնություն,*
- *ընտանիքում դերերի ու գործառույթների բավականին հստակ տարանջատում, որն հիմքում ուներ նաև տնտեսական գործոնները,*
- *հավատ ու վստահություն վաղվա օրվա հանդեպ, պլանավորման հնարավորություններ:*

Ի՞նչ էր առաջարկվում ընտանիքին որպես փոխհատուցում հրաժարման դիմաց

լավագույնս օգտվել կարողանալու, համաժողովրդական սեփականության յուրացման, ուրիշների, ընդհանրապես հասարակության զրկանքների հաշվին:

⁶⁹Քանի որ սույն հետազոտությունն ազգաբանական է, հիմնական միտումներն ու դիտարկումները ներկայացնելիս դիմում ենք ազգագրական նյութին:

- *ազատ շուկայական տնտեսություն, որտեղ յուրաքանչյուրը կարող է բարձր կենսամակարդակ ապահովել սեփական կարողությունների ու գործարար հատկանիշների հաշվին,*
- *սոցիալական պաշտպանվածություն, քանի որ ըստ Սահմանադրության 77-ն սոցիալական պետություն է,*
- *ժողովրդավարության սկզբունքների անրագրում,*
- *քաղաքացիական հասարակության կառուցում,*
- *իրավական պետության ձևավորում,*
- *անցումային շրջանի ավարտին խորհրդայինից բարձր կենսամակարդակի ապահովում*
- *ինտեգրացիոն ու գլոբալիզացիոն գործընթացների արդյունքում ավելի բաց ու մատչելի աշխարհ:*

Փաստորեն, առաջարկվում էր ավելի արդյունավետ համակարգ, հետևաբար նաև՝ ավելի մեծ հնարավորություններ ընտանիքի համար:

Այժմ փորձենք տեսնել թե ինչ ունի այսօր միջին հայկական ընտանիքը, առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ ցանկացած վերափոխում պետք է պահպանի գոյություն ունեցող դրականն ու դրան ավելացնի նոր դրական արժեքներ: Ընդ որում, հաշվի առնենք, որ խորհրդային իրական արժեքների փոխարեն առաջարկվում են իդեալական, միջին քաղաքացու ու ընտանիքի համար դժվար ընկալելի արժեքներ, որոնք պետք է փաստարկվեն ու անրագվեն կոնկրետ գործողություններով:

Միացնելով երկու դաշտերը, առանձին-առանձին դիտարկենք դրանց բաղկացուցիչները

- ***տնտեսական կայուն վիճակ***

Այսօր հայկական ընտանիքների մեծ մասի համար տնտեսական կայունությունը բացակայում է,

- **Երաշխավորված աշխատանք ու աշխատավարձ**

Երաշխավորված աշխատանքի ու աշխատավարձի փոխարեն ունենք զանգվածային գործազրկություն, նվազագույն սպառողական զանբյուղ ապահովելու բարդություններ, գործատուի կանայականություններ, աշխատողի անպաշտպանվածություն, ցածր ու անկայուն աշխատավարձ,

- **խորհրդային չափանիշներով միջին կենսամակարդակ,**

ուստեք զանգվածային աղքատություն, կենսամակարդակի ինքնուրույն բարելավման սահմանափակ հնարավորություններ

- **սոցիալական շարժունության հնարավորություններ,**

Այսօր, ըստ գրառված ազգագրական նյութերի, սոցիալական դերերի սանդղակում բարձր դիրք զբաղեցնելու համար կարևոր ու առաջնային են ոչ թե մտավոր կարողությունները, գիտելիքները, այլ ծանոթությունները, հովանավորչությունը, իշխող քաղաքական ու տնտեսական խմբերի հետ շփումներ հաստատելու հնարավորությունները:

- **անվճար կրթություն և բուժօգնություն,**

Կրթական ու առողջապահական համակարգի վերափոխումները բերել են անվճար կրթության ու բուժօգնության անմատչելիության աղքատ ընտանիքների համար: Պրեստիժային շատ բուհեր ու մասնագիտություններ կարելի է ընդհանրապես անմատչելի համարել: Նույնը կարելի է ասել անվճար բուժօգնության մասին. առողջապահական համակարգում այսօր տարածված են տարբեր տիպի ստվերային վճարումները, որոնք հաճախ անմատչելի են ոչ միայն աղքատ, այլև միջին հնարավորություններ ունեցող ընտանիքների համար:

Այսինքն, կարող ենք արձանագրել, որ անցումային շրջանի հայկական ընտանիքը, կորցնելով խորհրդային շրջանի ձեռքբերումների ու չափորոշիչների մեծ մասը, չստացավ

համարժեք փոխհատուցում, հետևաբար, հայտնվեց այնպիսի իրավիճակում, որը կարելի է բնութագրել որպես *արժեքային ու հասարակական վակուում*: Սահմանափակ են նաև ստեղծված ճգնաժամի հաղթահարման հնարավորությունները: Այս իրավիճակում առաջնային նշանակություն են ձեռք բերում պետական կառավարման համակարգերի, քաղաքական տարբեր ուժերի, սոցիալական ու մասնագիտական խմբերի հստակ գործողությունները, որոնք պետք է միտված լինեն հասարակության ու ընտանիքի առողջացմանը: Անհնար է արձանագրել լուրջ հաջողություններ ու առաջընթաց առանց կոնկրետ գործողությունների, հստակ ռազմավարական ծրագրերի ու դրանց իրագործման մեխանիզմների:

Գլուխ չորրորդ
Ներընտանեկան հարաբերությունները
անցումային շրջանի հայկական ընտանիքում

Անցած մեկուկես տասնամյակի իրողությունները, բնականաբար, չէին կարող չազդել ներընտանեկան հարաբերությունների, ընտանիքում դերային գործառույթների, ընտանիքի տարբեր անդամների կարգավիճակի վրա: Ընտանիքում կատարվող փոփոխությունների վրա ազդող գործոնները բազմազան են: Արմատական վերափոխումները կարևորեցին, շատ դեպքերում առաջին պլան մղեցին տնտեսական գործոնները: Անցումային շրջանի հայկական ընտանիքը, սակայն, զերծ չէ այլ ազդեցություններից, որոնց մեջ դեռևս արտահայտված է «խորհրդային ժառանգությունը»:

Խորհրդային շրջանում ընտանիքի զարգացումը պայմանավորող գործոններին անկախությունից հետո ավելացան նորերը: Կայունացած համակարգերում գործառնող ընտանիքը միանգամից կանգնեց դրանց արմատական փոփոխությունների պայմաններում գոյությունն ապահովելու անհրաժեշտության առաջ:

Չնի և նորի անբարենպաստ զուգակցումը հանգեցրեց ընտանիքի կենսագործունեությանն «արտակարգ

իրավիճակում»⁷⁰: Բնականաբար, տարբեր էր նաև ընտանիքի անդրադարձը:

Կենսամակարդակի կտրուկ անկումը դարձավ պատճառ, որ ընտանիքը, բազմաթիվ դեպքերում նաև վերջինիս անչափահաս անդամները կանգնեցին գոյության նվազագույնն ապահովելու անհրաժեշտության առաջ: Քաղաքային միջավայրում, զանգվածային գործազրկության ու աղքատացման պայմաններում նվազագույնի ապահովման հնարավորությունները էապես սահմանափակվեցին: Կարճ ժամանակում որպես սոցիալ-մասնագիտական խմբեր ըստ էության դադարեցին գոյություն ունենալ արդյունաբերական բանվոր-ծառայողները, սպասարկման համակարգերում ընդգրկվածները, իսկ մտավորականության տարբեր խավերը հայտնվեցին այնպիսի վիճակում, որ ստիպված էին հիմնական մասնագիտությունը համատեղել այլ զբաղմունքների հետ: Քաղաքային միջավայրում այս տարիներին որպես հիմնական զբաղմունքներ ձևավորվեցին ու «ամրապնդվեցին» փողոցային մանր առևտուրը, ապրանքափոխանակությունն իր տարբեր դրսևորումներով, դիպվածային վարձու աշխատանքը, և որպես հիմնական այլընտրանք՝ զանգվածային արտագաղթը: Նշված «նոր մասնագիտությունները» յուրացվեցին հասարակության տարբեր սեռատարիքային ու սոցիալ-մասնագիտական խմբերի կողմից, հաճախ վերածվելով «ընտանեկան զբաղմունքի»: Սակայն և Երևանը և հանրապետության այլ, համեմատաբար փոքր

⁷⁰ «Արտակարգ իրավիճակ» ասելով նկատի ունենք ընտանիքի բնականոն կենսագործունեությունն ապահովող համակարգերի փլուզումը և համարժեք այլընտրանքի բացակայությունը: Ընտանիքը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ անհրաժեշտ գոյամիջոցներն ապահովվում են բոլոր անդամների ծանրաբեռնվածության աճի, պատահական, կրթական ցենզին

քաղաքները չէին կարող աշխատանք ապահովել մանր փողոցային առևտրով կամ վարձու աշխատանքով զբաղվել ցանկացող բուրի համար, մանավանդ որ շատ կարճ ժամանակում էապես նվազեց նաև բնակչության հիմնական մասի գնողունակությունը: Այլընտրանքի բացակայությունը բերեց նրան, որ բազմաթիվ ընտանիքներ ստիպված էին վաճառել տարիների ընթացքում կուտակած խնայողություններն ու թանկարժեք իրերը՝ ոսկեդեն, զարդեր, կահույք, կահկարասի, այն ամենը, ինչ հնարավոր էր վերածել դրամի, հացի, սննդամթերքի:

Տարբեր մշակութային համակարգերում, այդ թվում և հայկականում, հարյուրամյակներ շարունակ ընտանիքի բարեկեցության երաշխավորը եղել է տղամարդը: Հայոց մշակույթում այդ ամենը նաև բանաձևվել է «տղամարդը դրսի պատն է, կինը՝ ներսի» ժողովրդական ասացվածքով: Այս բանաձևը, ընտանիքի անդամների պատասխանատվությունը ցուցելուց զատ, ցույց է տալիս նաև ընտանիքում դերերի ու գործառույթների բաժանման շատ մեխանիզմների կենսունակությունը: Խորհրդային շրջանում ևս, ինչպես ցույց է տալիս գրառված ազգագրական նյութը, չնայած արմատական տեղաշարժերին, այս բանաձևը, որոշ փոփոխություններով դեռևս կենսունակ էր: Եվ քաղաքային և գյուղական միջավայրում հասարակական ու համայնքային հարաբերություններում հիմնականում տղամարդն էր ներկայացնում ու պաշտպանում ընտանիքը: Չնայած դրան, կինն էլ բավականին ակտիվ մասնակցություն ուներ ընտանեկան բյուջեի ձևավորմանը:

1990-ական թթ. սկզբին, իրավիճակի կտրուկ փոփոխության պայմաններում, փաստորեն դուրս մղվեց ընտանիքում դերերի ու

ու նախկին կարգավիճակին չհամապատասխանող զբաղմունքների միջոցով:

գործառույթների տարանջատումը պայմանավորող տնտեսական բաղկացուցիչը: Ընտանեկան բյուջեի ձևավորման հիմնական մասնակիցները՝ աշխատունակ կանայք ու տղամարդիկ, եռասերունդ ընտանիքներում՝ նաև կենսաթոշակառուներ, միանգամից հայտնվեցին գործազուրկի ու կենսաթոշակով նույնիսկ հացի խնդիր լուծել չկարողացողի կարգավիճակում: Կարելի է ասել, որ 1990-ական թթ. բազմաթիվ ընտանիքների համար գոյություն չունեցող ընտանեկան բյուջե որպես այդպիսին: Կային պարզապես ընտանիքի գոյության ապահովմանն ուղղված դիպվածային, միանգամյա գործողություններ: Այսինքն, ընտանիքի անդամների հիմնական մասը, զրկվելով ընտանիքում սեփական տեղն ու դերը պայմանավորող տնտեսական բաղկացուցիչից, կանգնեց բավականին բարդ խնդրի առջև: Տարբեր փորձագետական, անհատական խորացված ու ֆոկլուս-խմբային հարցազրույցների ընթացքում գրառված նյութերը ցույց են տալիս, որ այս իրավիճակում, հատկապես միջին ու ավագ սերնդի ներկայացուցիչների համար էական նշանակություն ունեցող նաև հասարակական հեղինակության ու կարգավիճակի կորուստը: Գիտելիքները, փորձը, հմտությունը, հասարակական դիրքն ու զբաղեցրած պաշտոնը միանգամից փոխարինվում էին անկայուն, դիպվածային, նախկին կարգավիճակին չհամապատասխանող, որոշ դեպքերում՝ կասկածելի զբաղմունքներով, որոնք նյութական ապահովություն, առավել ևս՝ հոգևոր բավարարվածություն ապահովել չէին կարող: Սրան զուգահեռ սկսվեց ունեցվածքային արմատական բևեռացման գործընթացը, որի արդյունքում սոցիալական հիերարխիայի վերին աստիճանում հայտնվեցին նախկինում հիմնականում ստորին օղակներում գտնված հաջողակները:

Ստեղծվել էր իրավիճակ երբ հասարակությունում գոյություն ունեւ գուգահեռ, բայց տարբեր ուժի ու հակառակ ուղղվածության երկու շարժում՝ միանգամից հարստացող փոքրաթիվ *«ընտրյալներ»* և արագորեն աղքատացող *հասարակության հիմնական մաս*, որը սկսեց սեփական աղքատության պատճառները փնտրել նաև հարստացած խմբերի ներսում, սկիզբ դնելով ցայսօր շարունակվող օտարվածության ու պետության հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու ցանկության բացակայության գործընթացներին⁷¹: Ինչպես այլ իրողությունները, սա ևս անսպասելի էր ընտանիքի համար: Ազգագրական նյութը ցույց է տալիս այս իրողության կարևոր մշակութային ու ազգաբանական «հիմքերը»: Դարձյալ, եթե դիմենք հայոց ավանդական մշակույթին, կտեսնենք, որ քաղաքական ու տնտեսական անբարենպաստ վիճակը հարյուրամյակներ շարունակ հայկական ընտանիքում ձևավորել էր «նեղ օրվա համար պարտադիր խնայողություններ ունենալու» պրակտիկա, որից ընտանիքը չէր հրաժարվել նաև խորհրդային շրջանում: Ընդամենը մեկ-երկու տարում, որոշ դեպքերում նաև ավելի կարճ ժամկետում բոլոր խնայողությունները զրոյացվեցին, էլ ավելի խորացնելով անվստահությունը նորի ու վաղվա օրվա հանդեպ:

Մեջբերենք ֆոկլուս-խմբային հարցումների ընթացքում գրառված որոշ նյութեր. - «եթե այսօր ես աղքատ եմ ու ոչինչ չեմ կարող անել իմ երեխայի կրթության հարցերը լուծելու ու

⁷¹Շրջկոմի նախկին քարտուղարներից մեկը, որը խորհրդային չափանիշներով շատ արագ կարիերիա էր արել, այդ պաշտոնին հասնելով 32 տարեկանում, «իսկ ինչու՞ դուք էլ ՀՀԾ-ական չդարձաք» հարցին տվեց ուշագրավ պատասխան.-«ՀՀԾ շրջանային կազմակերպությունն այդ տարիներին ղեկավարում էր շրջկոմի վարորդներից մեկը, ով ժամերով կարող էր սպասել իմ բարևին:

ապագան կարգավորելու համար, վաղը նա իմ նման աղքատ է լինելու»:

Տավուշի մարզի համայնքներից մեկում հարցադրումներն ավելի սուր էին ու կտրուկ .-«Մենք էստեղ սահման ենք պահում մեր ընտանիքների ու երեխաների կյանքը վտանգելով, իսկ երևաններում մարդիկ հարստանում են ու միլիոններ վաստակում»:

Դարձյալ Տավուշի մարզում, փորձագիտական հարցման ժամանակ գրառվեց հետևյալ ուշագրավ միտքը.- «Եթե ես հիմա նույնիսկ ունենամ հնարավորություն համակարգիչ գնելու, մեկ է, դա իմ երեխային շատ բան չի տալու, գյուղում ոչ կարգին ուսուցիչներ կան, ոչ համակարգիչ վերանորոգող մասնագետներ: Բացի այդ, այսօր գյուղում իմ երեխան չունի նաև իր գիտելիքները կիրառելու հնարավորություն: Ստացվեց, որ երևանցին ոչինչ չանելով, միանգամից մի քանի տարով առաջ է ընկնում գյուղացի երեխայից»:

Այսինքն, ընտանիքը զանգվածային ունեզրկման ու աղքատացման գործընթացները, որոնց ուղղակի հետևանքն են դերային գործառույթների փոփոխությունները, դիտարկում է ընդհանուր հասարակական ու մշակութային-արժեքային գործընթացների համատեքստում, կարևորելով վերջիններիս խորքային ու ռազմավարական նշանակությունը առաջիկայի համար:

Ուշագրավ փոփոխություններ են կատարվում նաև ընտանիքի տարբեր անդամների դերային գործառույթներում: Նախընթաց շարադրանքում նշեցինք, որ խորհրդային շրջանի գործընթացները բերել էին երիտասարդների, կանանց կարգավիճակի որոշակի փոփոխությունների, որոնք նաև տնտեսական հիմքեր ունեին:

Անկախությունից հետո, ծանր տնտեսական ճգնաժամի տարիներին, նոր զբաղմունքներ «սկսեցին յուրացնել» ոչ միայն տղամարդիկ»: Կանայք ևս ներգրավվեցին ընտանիքի գոյատևման գործընթացներում, զբաղվելով տարբեր աշխատանքներով՝ փողոցային առևտուր, դիպվածային վարձու աշխատանք, ապրանքափոխանակություն: Այս տարիներին ընդարձակվում էր նաև առևտրի աշխարհագրությունը՝ Թուրքիա, որտեղից ներմուծվում էր հիմնականում սննդամթերք, տեքստիլ ու տրիկոտաժեղեն, Սիրիա, այլ արաբական երկրներ, Հնդկաստան, Չինաստան: Այս առևտրում ևս կանանց տեսակարար կշիռը բավականին բարձր է: Միաժամանակ, ինչպես ցույց են տալիս ազգագրական նյութերը, կանանց մի մասն ավելի արագ հարմարվեց նոր իրավիճակին ու ներգրավվեց տարբեր տիպի գործընթացներում, ի տարբերություն տղամարդկանց, որոնք բավականին ծանր էին տանում սոցիալական հիերարխիայում նախկին դիրքի կորուստը: Նույնը կարելի է ասել երիտասարդության, որոշ վերապահումներով՝ նաև դպրոցահասակ երեխաների մասին:

Ազգագրական դիտարկումներն ու գրառումներն օգտագործելով, կարելի է վստահաբար արձանագրել, որ լուրջ փոփոխությունների ենթարկվեց երիտասարդության ու դպրոցահասակ երեխաների ծանրաբեռնվածությունն ու հիմնական գործառույթների շրջանակը, հատկապես 1990-ական թթ. սկզբներին: Արտագնա աշխատանքներում ընդգրկված էին մեծ թվով քաղաքաբնակ ու գյուղաբնակ երիտասարդներ, որոնց մի մասը, բացի սեփական ընտանիքի հոգսերից, հոգում էր նաև մերձավոր ազգականների՝ քույրեր, եղբայրներ, հոգսերը: Այս տարիների բավականին բարձր եկամտաբերությունն ապահովող զբաղմունքները նման հնարավորություն ընձեռում էին: Նույնը

վերաբերում է նաև Հայաստանում մնացածներին. երիտասարդների մի մասը ներգրավվեց փողոցային առևտրում, վարձու աշխատանքներում, այսպես կոչված «կոոպերատիվային շարժման մեջ», ինչը բնական է, եթե հաշվի առնենք այս խմբի ավելի մեծ ակտիվությունն ու շարժունությունը:

Դպրոցահասակ երեխաների դեպքում ծանրաբեռնվածության ու գործառույթների փոփոխությունը փոքր-ինչ այլ բնույթ ունեն. նրանք հիմնականում դառնում էին ընտանիքի չափահաս անդամների «օգնականներ», ներգրավվելով վառելիքի, հացի հայթայթման աշխատանքներում: Դարձյալ նշենք, որ խոսքն այս դեպքում վերաբերում է 1990-ական թթ. քառսային իրավիճակին, երբ, կարելի է ասել, ամեն ինչ գլխիվայր էր շուռ եկել:

Գյուղական միջավայրում ևս փոփոխություններն էական էին. հողի սեփականատեր դարձած գյուղացին միանգամից զրկվեց ընտանեկան բյուջեի ձևավորման խորհրդային տարբերակի ամենակարևոր բաղկացուցիչից՝ աշխատավարձից:

Գյուղատնտեսությունը դարձավ կենսապահովման կարևոր, շատ դեպքերում նաև՝ միակ աղբյուր: Ստեղծված իրավիճակում, ընտանիքը գոյության անհրաժեշտ միջոցներն ապահովում է հիմնականում գյուղատնտեսական զբաղմունքների կարևորման և ընտանիքի անդամների ծանրաբեռնվածության աճի միջոցով: Եկամտի հիմնական աղբյուրից զրկված ընտանիքը հարկադրված է ավելացնել բոլոր չափահաս անդամների ծանրաբեռնվածությունը սեփականաշնորհված հողերը մշակելու համար:

Սոցիալ-մասնագիտական ու սեռատարիքային տարբեր խմբերի ծանրաբեռնվածության փոփոխությունը կատարվում է տարբեր կերպ: Այն պայմանավորող գործոնների շարքում կարևոր

նշանակություն ունեն հատկապես նախկին զբաղմունքների հետ կապվածները: Նախկինում զուտ գյուղատնտեսական զբաղմունքներ ունեցած խմբերի, հատկապես կոլտնտեսականների համար, փոփոխությունները կարող են էական չդիտվել, որովհետև զբաղմունքներն, ըստ էության, չեն փոխվում. կատարվում է միայն տնտեսական գործունեության սկզբունքի փոփոխություն:

Արդյունաբերական բանվորների, մտավորականության համար փոփոխություններն արդեն էական են, քանի որ փոփոխվում է հիմնական մասնագիտությունը/զբաղմունքը: Չկան ըստ մասնագիտության աշխատելու հնարավորություններ և գյուղատնտեսությունը դառնում է գործունեության հիմնական բնագավառ: Նշեցինք, որ անկախ մասնագիտությունից, խորհրդային շրջանում սոցիալ-մասնագիտական գրեթե բոլոր խմբերն այս կամ այն կերպ մասնակցում էին գյուղատնտեսական աշխատանքներին և ունեին որոշակի հմտություն ու փորձ: Անցումային շրջանում, ինչպես ցույց են տալիս նյութերը, կարևորվում է ոչ թե փորձի առկայությունը կամ բացակայությունը, այլ այն, որ նոր՝ գյուղատնտեսական զբաղմունքները պարտադրվում են գյուղական ողջ բնակչությանը, առանց վերջինիս կառուցվածքային առանձնահատկությունները հաշվի առնելու:

Կարևոր է նաև, որ ընտանիքի ծանրաբեռնվածությունն աճում է միանգամից տարբեր ոլորտներում: Գյուղատնտեսական զբաղմունքների զուգակցումը կախված է այս կամ այն ճյուղի առանջնայնությունից: Հետևաբար, գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցությունը ևս պայմանավորված է որևէ ճյուղի տրվող նախապատվության գործոններով: Այսինքն, որպես անցումային շրջանում ընտանիքի տնտեսական գործունեությունը

բնութագրող, պետք է առանձնացնել նաև վերջինիս տարբեր անդամների բազմագործառութայնությունը⁷²: Սակայն այս դեպքում կարևոր նշանակություն ունի բազմագործառութայնության սահմանափակումը հիմնականում գյուղատնտեսական տարբեր զբաղմունքների շրջանակներում: Ի տարբերություն խորհրդային շրջանի, երբ ձևավորվում էին գյուղատնտեսական զբաղմունքներից մասամբ օտարված սոցիալ-մասնագիտական խմբեր, այսօր հենց գյուղատնտեսական տարբեր զբաղմունքներն են պայմանավորում ընտանիքի տնտեսական գործունեությունը:

Գյուղատնտեսական զբաղմունքների (երկրագործություն, այգեգործություն, անասնապահություն) զուգակցումը կատարվում է ընտանիքի անդամների ծանրաբեռնվածության աճի ճանապարհով: Որպես պատճառ պետք է առանձնացնել նաև ձեռքի աշխատանքի տեսակարար կշռի աճը: Տեխնիկայի սակավության և թանկության պայմաններում այսօր ձեռքով են կատարվում աշխատանքներ, որոնք նախկինում մեքենայացված էին:

Գրառված նյութերը թույլ են տալիս արձանագրելու, որ վերջին մեկուկես տասնամյակում փոխվել է ընտանիքի բոլոր անդամների՝ թե՛ մեծահասակների, թե՛ կանանց, թե՛ երեխաների զբաղվածությունը: Տարբեր գոտիներում այդ փոփոխություններն արտահայտվում են տարբեր կերպ, սակայն կան նաև ողջ հանրապետությանը բնորոշ ընդհանրություններ:

⁷² Ընտանիքը բազմագործառութային էր նաև խորհրդային շրջանում, քանի որ համատեղվում էին աշխատանքը պետական կամ կոլեկտիվ ու տնամերձ տնտեսությունում և այլն: Սեփականաշնորհունից հետո արտահայտված է դարձել գյուղատնտեսության կարևորությունը, որը հանդես է գալիս որպես կենսական նվազագույնն ապահովող հիմնական զբաղմունք:

Գրեթե բոլոր տարածաշրջաններում նշվում է, որ մեծահասակների ծանրաբեռնվածությունը հիմնականում աճել է: Ծանրաբեռնվածության աճ դիտվում է ինչպես միայն թոշակառուներից կազմված, այնպես էլ եռասերունդ ընտանիքներում: Ծանրաբեռնվածության աճը, ընդհանուր առմամբ պայմանավորված լինելով տնտեսական դժվարին կացությամբ, այնուամենայնիվ առանձին ընտանիքներում ունի կոնկրետ պատճառներ: Միայն մեծահասակներից կազմված, օգնություն չստացող ընտանիքներում այն ունի հիմնականում կենսական նվազագույնն ապահովելու նպատակ: Եռասերունդ ընտանիքներում արդեն մեծահասակների մասնակցությունը գյուղատնտեսական աշխատանքներին միտված է ընտանիքի հոգսերը թեթևացնելուն: Ընդ որում, կախված ընտանիքի կազմից, մեծահասակների մասնակցությունը աշխատանքներին կարող է լինել ավել կամ պակաս չափով ակտիվ: Բավարար աշխատուժ ունեցող ընտանիքներում մեծահասակների մասնակցությունն ունի հիմնականում խորհրդանշանական բնույթ՝ տնամերձ փոքր հողակտորների, այգիների մշակություն, անասունների խնամք և այլն: Աշխատուժի կարիք ունեցող ընտանիքներում արդեն մասնակցությունը գյուղատնտեսական աշխատանքներին ավելի ակտիվ է. վերջիններս զբաղվում են և՛ այգիների մշակությամբ, և՛ սեփականաշնորհված հողատարածքների խնամքով, և՛ անասնապահությամբ, իսկ տարբեր զբաղմունքների զուգակցումը պահանջում է լրացուցիչ ֆիզիկական լարում և ծանրաբեռնվածություն, քանի որ շատերը ստիպված են մի քանի կիլոմետր անցնել տարբեր հողակտորները մշակելու համար: Մեծահասակների մասնակցությունը մասնագիտական հմտություն պահանջող աշխատանքներին ունի նաև ինացությունների փոխանցման գործառույթ, ինչը կարևոր է, քանի որ 1970-80-ական

թթ. Երիտասարդության մի մասը մասնակիորեն օտարված էր գյուղատնտեսությունից: Այգեգործությամբ զբաղվող համայնքներում, օրինակ, նշվում էր, որ առանց մեծահասակների երիտասարդների համար բավականին դժվար կլիներ տարբեր հմտությունների յուրացումը: Նույնը կարելի է ասել նաև ծխախոտագործության մասին: Չնայած Տավուշի, Վայոց ձորի ծխախոտ մշակող համայնքներում ու ընտանիքներում աշխատանքները կատարում են երիտասարդները, այնուամենայնիվ, խորհրդային տարիներին մեծ փորձ ձեռք բերած մեծահասակները ստանձնում են խորհրդատուի դեր: Փաստորեն, մեծահասակների ծանրաբեռնվածության փոփոխությունը, պայմանավորված լինելով հիմնականում անցումային փուլի դժվարություններով, տարբեր համայնքներում ու ընտանիքներում ունի ազգագրական տեսանկյունից ուշագրավ դրսևորումներ: Մի դեպքում առկա է ավանդույթի ուղղակի վերարտադրություն, երբ մեծահասակը, որը, խորհրդային շրջանում, կենսաթոշակի անցնելուց հետո նույնպես զբաղվում էր տնամերձ հողամասերի մշակությամբ, անասունների խնամքով, այսօր էլ շարունակում է նույնն անել: Մեկ այլ դեպքում արդեն առկա է մեծահասակների ծանրաբեռնվածության էական աճ, հատկապես եթե հարազատների կողմից աջակցություն չի ցուցաբերվում, ինչը գյուղական միջավայրում ընկալվում է որպես նորույթ:

Վերջին տարիներին փոփոխությունների են ենթարկվել նաև գյուղատնտեսական աշխատանքներին դպրոցահասակ երեխաների մասնակցությունը պայմանավորող գործոնները: Հայ իրականությունում ավանդաբար ձգտել են երեխաներին հեռու պահել ծանր ֆիզիկական աշխատանքներից, չնայած լուրջ ուշադրություն է դարձվել նրանց աշխատանքային դաստիարակությանը և վեց-յոթ տարեկանից գյուղերում

երեխաներն արդեն մասնակցել են ֆիզիկական մեծ լարում չպահանջող գործերին⁷³: Այսօր գյուղատնտեսական աշխատանքներին երեխաների մասնակցության աճը պայմանավորված է տնտեսական դժվարություններով, երբ անհրաժեշտ գոյամիջոցներն ապահովվում են գերազանցապես գյուղատնտեսական զբաղմունքների հաշվին: Նյութերը ցույց են տալիս, որ հանրապետությանը բնորոշ ընդհանրություններից զատ, այս ոլորտում ևս դրսևորվում են առանձնահատկություններ՝ կապված ընտանիքի կազմի, հնարավորությունների, տարբեր զբաղմունքների հարաբերակցության հետ: Ըստ այդմ, կարելի է առանձնացնել նաև երեխաների ծանրաբեռնվածությունում կատարված փոփոխությունների երկու հիմնական ուղղություն:

Առաջինն այն է, երբ երեխաների մասնակցությունը գյուղատնտեսական աշխատանքներին խորհրդանշանական է, իսկ ծանրաբեռնվածության աճն ընտանիքների մեծ մասում, հատկապես այնպիսիներում, որտեղ կան բավարար աշխատուժ կամ ֆինանսական միջոցներ, համընկնում է հիմնականում երկրագործական աշխատանքների եռուն շրջանին: Այս դեպքում դարձյալ գործ ունենք ավանդույթի շարունակության հետ, քանի որ խորհրդային շրջանում նույնպես, անկախ ընտանիքի նյութական հնարավորություններից, դպրոցահասակ երեխաները որոշակի մասնակցություն ունեին գյուղատնտեսական աշխատանքներին, իսկ դպրոցական արձակուրդների ժամանակ այն հաճախ զանգվածային բնույթ էր ստանում⁷⁴: *Երկրորդ* դեպքում

⁷³Է. Ածաբյան, Օժնայի շրջանում աշխատանքի մեծ լարումը XIX-ի և XX-ի սկզբին, ՀԱԲ, թիվ 12, Եր, 1981, էջ 94:

⁷⁴Շատ գյուղերում նշվում էր, որ երեխաների ծանրաբեռնվածությունը սեփականաշնորհումից հետո շատ չի փոխվել: «Տասն օր էս գլխից են զբաղված՝ փորել, ցանել, տասն օր էն գլխից՝ բերքը հավաքել, տեղափոխել: Հիմնականը բոստանն է, անասունին խոտ գցելը, ջուր տանելը, ծնողներին

արձանագրվում է երեխաների ծանրաբեռնվածության էական աճ տարբեր պատճառներով: Արարատյան դաշտի, ինչպես նաև նախալեռնային և լեռնային գոտիների այն գյուղերում, որտեղ մեծ հողատարածքներ են հատկացվում բանջարաբուստանային մշակաբույսերին, կարևոր է ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասնակցությունը: Դպրոցահասակ երեխաները, բնականաբար, նույնպես ընդգրկվում են տարբեր աշխատանքներում, հաճախ նաև դասերից բացակայելով: Նրանց մասնակցությունն այս աշխատանքներին հաճախ չափազանց կարևոր է, որովհետև ծնողները միայնակ չեն կարողանում կազմակերպել բոլոր աշխատանքները: Դպրոցահասակների մի մասը պարբերաբար զբաղվում է նաև բերքի իրացմամբ:

Աղքատ ընտանիքների մեծ մասում արդեն երեխաների մասնակցությունը տարբեր աշխատանքների հետապնդում է կենսական նվազագույնի ապահովման նպատակ⁷⁵:

օգնելը»: Այլ տարածաշրջաններում գրառված նյութերը ևս հավաստում են, որ երեխաների զբաղվածությունն ունի հիմնականում օժանդակ բնույթ:

⁷⁵ Կեչուտում աղքատ ընտանիքներից մեկի երեխան զբաղվում էր հովվությամբ, աշխատանքի դիմաց օրական ստանալով 500-1000 դրամ կամ համարժեք բնամթերք: Յերմոնում փախստական ընտանիքներից մեկի գոյությունը նույնպես ապահովվում էր այս կերպ: Արփենիում մշվում էր, որ ոչխարաբուծությամբ զբաղվող ընտանիքներից մեկի երեխաները հաճախ են բացակայում դասերից, քանի որ պահում են անասունները, նույն գյուղում դպրոցահասակ երեխաներից մեկը՝ հոր հետ զբաղվում էր հովվությամբ՝ դարձյալ հաճախ դասերից բացակայելով: Դպրոցահասակ որոշ երեխաներ Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզերում զբաղվում են հատապտուղների վաճառքով: Արտագնա աշխատանքի բարձր տոկոս ունեցող գյուղերում կան ծնողներ, որոնք երեխաներին 8-րդ դասարանից տանում են իրենց հետ՝ «մի կտոր հացի տեր» դարձնելու նպատակով: Կարելի է բերել բազմաթիվ այլ օրինակներ բոլոր մարզերից, սակայն, կարծում ենք, որ այսքանը բավարար է ընդգծելու համար, որ ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների դեպքում գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցությունը կապված է ունեցվածքային հնարավորությունների հետ. որքան աղքատ է ընտանիքը, այնքան ակտիվ է մասնակցությունը:

Փաստորեն, ինչպես երևում է օրինակներից, անցումային շրջանում ընտանիքի գործունեությունը պայմանավորող գործոնների համալիրում ընդգծված կարևորություն են ձեռք բերել կենսական նվազագույնի ապահովման հետ կապվածները: Փոփոխությունները հանգեցրել են նրան, որ գյուղերի ճնշող մեծամասնությունում որպես գոյության անհրաժեշտ միջոցների ապահովման հիմնական տարբերակ հանդես են գալիս տարբեր գյուղատնտեսական զբաղմունքները:

Ցանքաշրջանառության, քիմիկատների, բուժանյութերի, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման հետ կապված բազմաթիվ բարդություններն իրենց հերթին դառնում են ընտանիքի բոլոր անդամների ծանրաբեռնվածության աճի պատճառ:

Որպես փոփոխությունների ևս մեկ հետևանք պետք է առանձնացվի նաև ձեռքի աշխատանքի տեսակարար կշռի աճը, որը տարբեր զբաղմունքներում արտահայտվում է տարբեր կերպ:

Ազգագրական տեսանկյունից կարևոր է ևս մեկ հանգամանք. չնայած որոշակի մասնագիտացմանը, ընտանիքների մեծ մասը զուգակցում է տարբեր զբաղմունքներ՝ երկրագործություն, անասնապահություն, այգեգործություն և այլն: Այս դեպքում արդեն փոխվում է խորհրդային շրջանում ձևավորված ավանդույթը: Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ հաճախ կատարվում է այս կամ այն բույսի կամայական ընտրություն. առանց տնտեսական հիմնավորվածություն: Ընտանիքը, այս կամ այն մշակաբույսն ընտրելիս հաշվի է առնում ոչ այնքան տեղային պայմանների առաձևահատկությունները, որքան իրացման հնարավորությունները: Այդ տրամաբանությամբ Արարատյան դաշտում բավականին ընդարձակվեցին

հացահատիկի ցանքերը, մինչդեռ խորհրդային տարիներին միտումները հակառակն էին: Կերային մշակաբույսերին հատկացվող ցանքատարածությունների կրճատումը նույնպես հիմնավորվում է նույն կերպ: Նույնը կարելի է ասել նաև այգիների կրճատման մասին: Փաստորեն, այս դեպքում նույնպես գործում է բազմիցս շեշտված այն սկզբունքը, ըստ որի արտակարգ իրավիճակում հայտնված ընտանիքը հիմնականում ինքնուրույն, առանց պետական աջակցության ու միջամտության է կարգավորում տնտեսական գործունեությունը, բնականաբար, հիմքում դնելով սեփական շահը:

Տնտեսական զարգացման հայեցակարգի բացակայությունը խոչընդոտում է գործունեության կազմակերպման երկարատև սկզբունքների մշակմանը: Տարբեր գյուղատնտեսական զբաղմունքների հաճախ հարկադրական զուգակցումը նույնպես ունի տնտեսական հիմնավորվածություն:

Հիմնականում մեկ մշակաբույսի նախապատվություն տվող ընտանիքները չունեն ստացված ամբողջ բերքի իրացման երաշխիքներ: Հաճախ, ինչի ականատեսն ենք վերջին մի քանի տարիներին, միջնորդ-առևտրականների կողմից առաջարկվում են գներ, որոնք ավելի ցածր են, քան արված ծախսերը: Բնակչության զանգվածային աղքատացման, փոխադրումների թանկության պայմաններում քաղաքները նույնպես չեն կարող իրացնել արտադրված ամբողջ ծավալները, կարգավորված չէ նաև պետական ու մասնավոր մթերումների համակարգը: Այդ պատճառով էլ ընտանիքների մեծամասնությունը ձգտում է մշակել մի քանի մշակաբույս, որպեսզի կարողանա որևէ ճյուղում անհաջողության դեպքում անհրաժեշտ գոյամիջոցներն ապահովել այլ ճյուղի հաշվին: Տնտեսական նպատակահարմարության միայն ընտանիքի մակարդակում գործող սկզբունքը, կենսական

նվազագույնի ապահովմանը նպաստելով հանդերձ, այնուամենայնիվ խոչընդոտում է գյուղատնտեսության հեռանկարային զարգացումը, քանի որ հաշվի չեն առնվում ընդհանուր տնտեսական բնույթի բազմաթիվ գործոններ:

Կատարված փոփոխությունները, ինչպես նշվեց, ազդում են նաև ներընտանեկան հարաբերությունների վրա: Դրանցում, ինչպես բազմաթիվ այլ համակարգերում, դարձյալ շարունակում են կարևոր դեր խաղալ խորհրդային շրջանում ձևավորված իրողությունները, որոնք նորի հետ փոխազդեցության պայմաններում կարգավորում ու կանոնակարգում են ներընտանեկան հարաբերությունների ողջ համալիրը:

Ազգագրական ուսումնասիրություններում համակողմանի վերլուծված է խորհրդային շրջանում տնտեսական քաղաքականության, սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ու ենթախմբերի ձևավորման գործընթացների ազդեցությունը ներընտանեկան հարաբերությունների վրա: Տարբեր գործընթացները արդեն 1950-60-ական թթ. հանգեցրել էին հայոց ավանդական կենցաղը բնորոշող որոշ տարրերի փոփոխությունների: Այսպես, նշված շրջանում որպես հայոց կենցաղը բնորոշող նոր իրողություն, որոշ գյուղերում առանձնացնում էին այնպիսի ընտանիքներ, որոնք, մեծահասակների առկայության դեպքում, ավանդական չափանիշներին հակառակ, գլխավորում էին երիտասարդները⁷⁶: Պնդել, որ այս փոփոխությունները պայմանավորված էին միայն տնտեսական քաղաքականությամբ, սխալ կլինի: Սակայն տնտեսական բնույթի փոփոխությունները, որոնց արդյունքում աճում էր երիտասարդների ինքնուրույնությունը, մասնակցությունը

⁷⁶ A. Ծաճ-Նաժեճյի օ, Աժի յի ա: եճօ՛ւ ծեյ է յօ՛ւ ի՛նթսնծօ՛ւ սձ ժձաճեճեճ, Լ ., 1998, էջ 150:

հասարակական, համայնքային կյանքին, բնականաբար իրենց ազդեցությունն ունենում էին: Չնայած տեղաշարժերին, միջանձնային հարաբերությունների ավանդական մոդելի հիմնական բնութագրիչները հայկական ընտանիքում շարունակում էին մնալ ընտանեկան աշխատանքի բաժանումը, ընտանիքի տարբեր անդամների պարտականությունների ու իրավունքների հստակեցումը, որոնք պահպանվում էին նաև 1970-80-ական թթ.⁷⁷:

Արմատական վերափոխումները գյուղի համար շրջադարձային հանդիսացան ոչ միայն տնտեսական գործունեության կազմակերպման հիմնական ձևերի ու եղանակների, այլև համայնքային, ներընտանեկան հարաբերությունները կանոնակարգող հիմնական մեխանիզմների փոփոխության տեսանկյունից:

Գրառված նյութերը թույլ են տալիս փաստելու, որ սեփականաշնորհումից հետո նույնպես առանձնացված միտումները շարունակում են արտահայտված մնալ: Դրանք, որպես սեփականաշնորհման ու դրա իրագործման սկզբունքների հանդեպ վերաբերմունքը պայմանավորող, դրսևորվել են նաև 1991թ.:

Վերափոխումներն իրագործվում էին այնպիսի մթնոլորտում, երբ վերաբերմունքը պետք է ձևակերպվեր ու ներկայացվեր ամենակարճ ժամկետում: Եթե հաշվի առնենք, որ դրանք նաև քաղաքականացված էին, պարզ է դառնում, որ ղեկավարության համար կարևոր նշանակություն ունեին ոչ այնքան ընդունված որոշումները, որքան դրանց համապատասխանությունը վերևից տրված ցուցումների պահանջներին: Այսպիսի իրավիճակում բավականին դժվար էր

⁷⁷ A. ԾձԾ-ՆձԾե՞նյի օ, նույն տեղում:

միասնական կարծիքի ձևավորումը ոչ միայն համայնքի, այլ նույնիսկ առանձին ընտանիքների մակարդակում: Պատահական չէ, որ սոցիալ-մասնագիտական տարբեր խմբերի մոտեցումների հակասականությունը տեղափոխվել է նաև ներընտանեկան հարաբերությունների ոլորտ: Ազգագրական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի այն, որ ներընտանեկան հարաբերությունների ավանդական մոդելը հանդես է եկել որպես մոտեցումների հստակեցման ու ձևակերպման հիմնական տարբերակ: Այսպես, բազմաթիվ գյուղերում, ինչպես լեռնային, այնպես էլ նախալեռնային ու հարթավայրային գոտիներում, նշվում էր, որ ընտանիքի անունից սեփականաշնորհմանը մասնակցելու դիմումներ ներկայացրել են գլխավորները, մեծահասակները, արտահայտելով նաև երիտասարդների համաձայնությունը: Ընդհանուր զբաղմունքներն ու շահերը նույնպես նպաստել են մոտեցումների միասնականությանը: Պատահական չէ, որ այն դրսևորվել է հիմնականում այն ընտանիքներում, որոնց անդամների մեծ մասը ընդգրկված է եղել գյուղատնտեսությունում և ունեցել է նույն կրթական մակարդակը: Բավականին լայն տարածում է ունեցել նաև հակառակ իրողությունը՝ երիտասարդության առավել ակտիվ հատվածը, սեփականաշնորհման իրագործման հետ կապված քննարկումների ժամանակ, փորձել է պարտադրել իր տեսակետներն ու մոտեցումները: Այս առանցքում արդեն դրսևորվել է մեծահասակներ-երիտասարդներ բախումը, որն արտահայտվել է ոչ միայն հասարակական, այլև ներընտանեկան հարաբերություններում: Հանրապետության գյուղերում գրառվել են օրինակներ, երբ երկու եղբայրներից մեկը մասնակցել է սեփականաշնորհմանն ու հողամաս ստացել, իսկ մյուսն ընդգրկվել է կոլեկտիվ տնտեսությունում: Նման օրինակներ,

չնայած սակավաթիվ, գրառվել են նաև ծնողների ու զավակների հետ կապված: Այս դեպքում արդեն հակասությունների պատճառը մոտեցումների սկզբունքային տարբերությունն էր:

Առանձնացված տարբերակները, արտահայտելով գյուղատնտեսական զբաղմունքների նկատմամբ սոցիալ-մասնագիտական ու սեռատարիքային խմբերի վերաբերմունքը, բնականաբար, դրսևորվում են նաև այսօր: Տնտեսավարման նոր ձևերն ու եղանակները որոշ փոփոխություններ են ձևավորում նաև ներընտանեկան հարաբերությունների ավանդական մոդելում:

Գյուղատնտեսական զբաղմունքները, որոնք այսօր հանդես են գալիս որպես գյուղական միջավայրում զբաղվածությունը պայմանավորող հիմնական տարբերակ, տարբեր գնահատականի ու վերաբերմունքի են արժանանում սեռատարիքային ու սոցիալ-մասնագիտական տարբեր խմբերի կողմից: Սեփականաշնորհման առաջին փուլում հաճախ չէր գիտակցվում, որ մոտ ապագայում գյուղատնտեսական զբաղմունքները դառնալու են գոյության ապահովման հիմնական աղբյուր: Աշխատանք ու եկամուտի այլ աղբյուրներ ունեցող երիտասարդության համար հողի սեփականատեր դառնալն ուներ կենսամակարդակի լրացուցիչ աճ ապահովելու նպատակ: Գերիշխում էր այն մտայնությունը, որ փոխվելու է ոչ թե զբաղվածության համակարգը, այլ գյուղատնտեսական նոր զբաղմունքներն օրգանապես ներգրավվելու են գոյություն ունեցող համակարգի մեջ: Այս մտայնության ձևավորմանը նպաստում էր նաև պետության ընկալման գոյություն ունեցող մոդելի նույնական վերարտադրությունը որակապես նոր իրավիճակում: Գրառված նյութերը ցույց են տալիս, որ ինչպես մեծահասակները, այնպես էլ երիտասարդներն ըստ էության պատրաստ չեն եղել սեփական տնտեսական ինքնուրույնության ու ակտիվության աճին,

ենթադրելով, որ պետությունը, որը նույնացվել է խորհրդայինի հետ, շարունակելու է կատարել իր հիմնական գործառույթները: Դիտարկման այս մակարդակում հողի սեփականատեր դառնալու իրողությանը հաճախ տրվել են սուբյեկտիվ գնահատականներ և ենթադրվել է, որ կատարվելու են մասնակի փոփոխություններ: Նաև այս իրողությունն է պայմանավորել վերափոխումների հաջողությունը և արագ իրագործումը: Հետագայում, երբ ակնհայտ է դարձել, որ գյուղատնտեսական զբաղմունքները դառնում են գերիշխող, հաճախ նաև այլընտրանք չունեցող, բնականաբար, կատարվել է մոտեցումների վերանայում, որը և արժեքավորվում է գյուղական միջավայրում, արտահայտելով սոցիալ-մասնագիտական, սեռատարիքային խմբերի վերաբերմունքի հակասականությունն ու դրսևորվելով ներընտանեկան հարաբերություններում: Այսօր, բազմաթիվ գյուղերում երիտասարդների մեծ մասի կողմից գյուղատնտեսական զբաղմունքներն ընդունվում են որպես հարկադրական, ոչինչ չտվող: 1991թ. հետ համեմատությունը ցույց է տալիս, որ այս մոտեցումն ունեցողների թիվն աճել է, ինչը պայմանավորված է տնտեսական ճգնաժամի խորացմամբ ու կենսամակարդակի կտրուկ անկումով: Գյուղատնտեսական զբաղմունքները, որոնք խլում են ժամանակի մեծ մասը, չեն ապահովում անհրաժեշտ գոյամիջոցները: Բնական է, որ երիտասարդության մեծ մասն անհնարին է համարում գյուղատնտեսության միջոցով տանելի կենսամակարդակ ապահովելը, ինչից մեխանիկորեն ածանցվում է և վերաբերմունքը: Ընդ որում, այս մոտեցումն արտահայտված է և՛ նախկինում ոչ գյուղատնտեսական և՛ գյուղատնտեսական զբաղմունքներ ունեցած երիտասարդության միջավայրում: Մեծահասակները⁷⁸, դժվարությունները գիտակցելով հանդերձ,

⁷⁸ Տարբեր գյուղերում, օրինակ նշվում էր, որ եթե գյուղում ես ապրում, պետք

հիմնականում կողմնակից են գյուղատնտեսությամբ զբաղվելուն, չնայած դեռևս նախապատվությունը տրվում է խորհրդային համակարգին և տնտեսավարման կոլեկտիվ ձևերին ու եղանակներին: Հիմնական զբաղմունքների հանդեպ գյուղական միջավայրում ձևավորված վերաբերմունքն անդրադառնում է նաև ներընտանեկան հարաբերությունների վրա: Երիտասարդության մի մասի համար ավելի կարևոր են այն զբաղմունքները, որոնք ընձեռում են կարճ ժամանակահատվածում տանելի կենսամակարդակ ապահովելու հնարավորություններ: Դա հիմնականում արտագնա աշխատանքն է: Սակայն այս դեպքում առաջանում են այլ խնդիրներ. տղամարդկանց տևական բացակայությունն ընտանիքի մնացած անդամներին ստիպում է զբաղվել այնպիսի խնդիրներով, որոնց կարգավորմամբ նրանք նախկինում հիմնականում չեն զբաղվել: Խոսքը և՛ գյուղապետարանների հետ հարաբերությունների, և՛ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման մասին է:

Եթե արտագնա աշխատանքի մեկնած անդամ ունեցող ընտանիքում կան այլ տղամարդիկ, կան գյուղում բնակվող մերձավոր ազգականներ, «տնտեսական, համայնքային» գործառույթները փոխանցվում են հիմնականում նրանց, այլապես ամբողջ ծանրաբեռնվածությունն ընկնում է կանանց ուսերին: Միաժամանակ պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ արտագնա աշխատանքը ոչ միշտ է ապահովում բարձր եկամուտներ, հատկապես վերջին տարիներին: Բնական է, որ այս

է հող էլ մշակես, բոստան էլ ունենաս, գյուղի լրիվ գործերն էլ անես: Գյուղացին, եթե հող չմշակի ու անասուն չպահի, էլ ինչ գյուղացի: Չնայած այս մոտեցմանը, մեծահասակների մի մասը նույնպես գտնում է, որ այսօր անհնար է գյուղատնտեսության միջոցով բարձր կենսամակարդակ ապահովելը, ինչը կապված է հիմնականում օբյեկտիվ դժվարությունների հետ:

դեպքում առաջանում են խնդիրներ արդեն արտագնացության սկզբից: Ներընտանեկան հարաբերությունները պայմանավորում է նաև հետևյալ գործոնը. վերջին տարիներին, կապված արտագնա աշխատանքի, տնտեսական, քաղաքական կառավարման համակարգերի վերափոխումների հետ, փոխվում են ընտանիքի անդամների դերային գործառույթները: Խորհրդային շրջանում ձևավորված այն իրողությունները, որոնք բնութագրվում էին ինչպես համայնքային, այնպես էլ ներընտանեկան հարաբերություններում երիտասարդների ակտիվության աճով, շարունակում են արտահայտված մնալ: Ավելին, կարելի է պնդել, որ երիտասարդների ակտիվության շրջանակներն այսօր նույնիսկ ընդլայնվում են: Նրանց մի մասը եռասերունդ ընտանիքներում ստանձնում է ընտանիքի շահերը ներկայացնելու, տնտեսական գործունեությունը կանոնակարգելու գործառույթ: Այս իրողությունը կարելի է դիտարկել որպես ավանդույթի դրսևորում որակապես նոր իրավիճակում:

Տնտեսական նոր հարաբերություններով պայմանավորված իրողություններն հանդես են գալիս որպես գործընթացի արագությունը պայմանավորող գործոն: Հայրեր-որդիներ բախումը, որը դրսևորվում է ժամանակ առ ժամանակ, ունի հիմնականում մոտեցումների տարբերությունների բնույթ. մեծահասակների համար կարևորը արժեքավորման ուղղահայաց առանցքն է՝ խորհրդային արժեքների իդեալականացմամբ, իսկ երիտասարդներին բնորոշ է արժեքային դաշտերը հորիզոնական առանցքում կառուցելը՝ դիրքի արագ աճ և բարձր եկամուտ ապահովող զբաղմունքների կարևորումով:

Կնոջ կարգավիճակում և գործառույթներում վերջին տասնամյակի փոփոխությունները նույնպես պետք է դիտարկվեն

նորին անցման ենթատեքստում: Նորը կնոջ գործառույթներում և կարգավիճակում բնորոշվում է հակասական գործոններով: Մի կողմից այն իր դրոշմն է դնում կնոջ կարգավիճակը պայմանավորող տարբեր գործոնների վրա, մյուս կողմից՝ խորհրդային զարգացմամբ պայմանավորված բազմաթիվ իրողություններ այսօր էլ շարունակում են կարևոր դեր խաղալ:

Դրանք են, մասնավորապես, զբաղվածությունում, կարգավիճակում դրսևորվող տարբերությունները՝ կապված մասնագիտության, կրթական ցենզի հետ: Նոր սոցիալ-մասնագիտական խմբերի ու ենթախմբերի ձևավորումը 1970-80-ական թթ. հանգեցրել էր կանանց որոշ մասի մասնակի օտարմանը գյուղատնտեսական զբաղմունքներից: Վերջիններս ընդգրկվում էին արդյունաբերական, կրթամշակութային, կենցաղ-սպասարկման հիմնարկություններում, ձեռք բերում նոր մասնագիտություն և մասնակից լինում ընտանեկան բյուջեի ձևավորմանը: Կանանց մեծ մասն ուներ նաև օժանդակ տնտեսությամբ զբաղվելու հնարավորություն, հատկապես աշխատանքից ազատ օրերին, և, ըստ էության, բազամագործառութային էր: Բարձր կրթական ցենզը, աշխատանքային միջավայր ընտրելու ավելի մեծ հնարավորությունները, բնականաբար նպաստում էին կանանց ակտիվության աճին: Սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ու ենթախմբերի ձևավորումը դառնում էր նաև տարբեր կրթական ցենզ ու մասնագիտություն ունեցող անդամներից կազմված ընտանիքների ստեղծման պատճառ: Կանանց որոշ մասի օտարումը գյուղատնտեսական զբաղմունքներից, բնականաբար, վերջիններիս տալիս էր նաև ժամանցի կազմակերպման, երեխաների դաստիարակությամբ զբաղվելու ավելի լայն հնարավորություններ:

Խորհրդային շրջանում ծավալված գործընթացները դառնում են պատճառ, որ կնոջ կարգավիճակում, գործառույթներում կատարված փոփոխություններին այսօր տրվում են տարբեր, հաճախ՝ հակասական ու իրարամերժ գնահատականներ:

Գրառված նյութերն ընձեռում են այդ փոփոխություններն ըստ նախկինում ունեցած հիմնական զբաղմունքի դասակարգելու հնարավորություն՝ գյուղատնտեսությունում և արդյունաբերական ձեռնարկություններում, կրթանշակութային ոլորտում, այլ հաստատություններում ընդգրկված կանայք: Ըստ սույն հիմնական զբաղմունքների, տրվում են նաև գնահատականները: Մասնավորապես, նախկինում գյուղատնտեսական տարբեր ձեռնարկություններում ընդգրկված կանանց մասին որոշ բանասացներ նշում էին. «Նախկինում կինը մեզ մոտ շատ-շատ էր տանջվում: Միայն ճակնդեղի մշակությունը հերիք էր, վաղ առավոտից մինչև ուշ երեկո ճակնդեղ էին մշակում: Լավ է, էդ տառապալից աշխատանքը հիմա չկա: Եթե միայնակ կանանց չհաշվենք, տնտեսությունում, ֆերմաներում աշխատող կանանց գործը թեթևացել է, չնայած թոշակառուն էլ, երիտասարդն էլ հող են մշակում»: Մեջբերումից երևում է, որ խոսքը տվյալ դեպքում նախկինում զուտ գյուղատնտեսական զբաղմունքներ ունեցած կանանց մասին է: Սակայն սա փոփոխությունները բնորոշող միակ գնահատականը չէ: Նյութերը ցույց են տալիս, որ նաև նախկինում հիմնականում գյուղատնտեսական զբաղմունքներ ունեցած կանանց ծանրաբեռնվածության փոփոխություն է կատարվում վերջին տարիներին: Խորհրդային շրջանում ձևավորվում էր որոշակի մասնագիտացում՝ կանայք ընդգրկվում էին այգեգործական բրիգադներում, անասնապահական ֆերմաներում, ունեին կայուն զբաղմունքներ: Այսօր նրանք

զբաղվում են և՛ բանջարաբուստանային բույսերի մշակությամբ, և՛ կաթնամթերքների պատրաստմամբ, բազմաթիվ դեպքերում՝ նաև գյուղատնտեսական մթերքների վաճառքով գյուղերի մերձակա շուկաներում ու քաղաքներում: Այսինքն՝ գործ ունենք սեփականաշնորհումից հետո հիմնական զբաղմունքների պահպանվածության պայմաններում դրանց զուգակցման նոր եղանակների ու ծանրաբեռնվածության աճի հետ: Իսկ ծանրաբեռնվածության նվազման հետ կապված վերը բերված օրինակը վերաբերում է այն կանանց, որոնք նախկինում ընդգրկված են եղել ծանր ֆիզիկական աշխատանքներում (ճակնդեղի, ծխախոտի մշակություն և այլն): Այս խմբի համար կարևոր է նաև աշխատանքային միջավայրի փոփոխությունը: Եթե զբաղմունքների փոփոխություններն էական չեն, ապա աշխատանքային միջավայրի կտրուկ փոփոխությունն այս խումբը բնութագրող կարևոր իրողություններից է: Նախկին միջավայրը (կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ) գոյություն չունի և անհատական գյուղացիական տնտեսության վարման պայմաններում սահմանափակվել են կանանց աշխատանքային շփումները, պակասել են տարբեր միջոցառումները⁷⁹: Կրթամշակութային հիմնարկություններում, սպասարկման ոլորտում ընդգրկված կանանց դեպքում արդեն արտահայտված են ծանրաբեռնվածության աճի և զբաղմունքների փոփոխության իրողությունները: Այս խմբում, ի տարբերություն առաջինի, արտահայտված է երկու իրողություն միաժամանակ. զբաղմունքների փոփոխությանը զուգընթաց աճում է նաև

⁷⁹Կին բանասացների կողմից առանձնացվում էր հատկապես այն, որ այսօր չկան նախկին աշխատանքային կոլեկտիվները: Դրանցում աշխատելն ավելի հեշտ էր, ուրախ, ավելի շատ էին նաև տարբեր միջոցառումները: Չինա առավտից իրիկուն դաշտում մենակ աշխատում են, հաճախ նույնիսկ չի լինում որևէ մեկը, որ հետը գրուցես:

ծանրաբեռնվածությունը: Այս խմբի համար նույնպես կարևոր նշանակություն ունեն աշխատանքային միջավայրի փոփոխության իրողությունները: Կարևոր է նաև աշխատանքի դիմաց ոչ համարժեք փոխհատուցման գործոնը, գյուղատնտեսական զբաղմունքները հաճախ չեն ապահովում նույնիսկ ընտանիքի գոյության նվազագույնը: Կրթական հաստատություններում այսօր ևս ընդգրկված կանայք, ի լրումն նշված փոփոխությունների, զուգակցում են հիմնական աշխատանքն ու գյուղատնտեսական զբաղմունքները⁸⁰:

Փաստորեն, կանանց կարգավիճակի և զբաղվածության փոփոխությունները կարելի է որակել որպես նոր իրավիճակում խորհրդային համակարգը բնութագրող տարրերի դուրսնղման և այլընտրանքային տարբերակների բացակայության գործընթաց:

Կնոջ այսօրվա վիճակը պայմանավորող գործոնների շարքում կարևոր են նաև ընտանիքի կազմի, ունեցվածքային հնարավորությունների հետ կապվածները: Ընտանիքի կազմը, ինչպես ցույց տրվեց, խորհրդային շրջանում պայմանավորում էր կնոջ կարգավիճակի հետ կապված բազմաթիվ հարցեր: Այսօր ևս եռասերունդ ընտանիքներում, ամուսնական զույգի՝ (հիմնականում՝ տղամարդու) ծնողների հետ ապրելու դեպքում, պահպանված է աշխատանքի բաժանումը: Կանանցից մեկը (սովորաբար տարիքով ավագը) զբաղվում է կաթնամթերքների պատրաստմամբ, սեփականաշնորհված հողերի մշակությամբ,

⁸⁰ Բազմաթիվ գյուղերում նշվում էր, որ ուսուցչուհիների համար, հատկապես եթե օգնող չունեն, դժվար է բոլոր աշխատանքները հասցնելը: Դավիթ Բեկի միջնակարգ դպրոցի տնօրենը, խոսելով այս խնդրի մասին, նշում էր. «խորհրդային շրջանում, երբ կար կայուն աշխատավարձ ու ուսուցիչները չունեին ֆինանսական դժվարություններ, դասերից հետո մնում էին, միջոցառումներ կազմակերպում: Իսկ այսօր մտածում են դասերը շուտ վերջացնելու մասին, որպեսզի կարողանան տան հոգսերը հոգալ:

հնարավորության սահմաններում՝ նաև տնային տնտեսության հետ կապված գործերի որոշ մասով: Երիտասարդ հարսների հիմնական գործառույթը երեխաների խնամքն է, տնային տնտեսության հետ կապված աշխատանքները, հնարավորության դեպքում՝ նաև հողամասերի մշակությունը: Եռասերունդ ընտանիքներում տան ավագ տիկինը օգնում է նաև գյուղում բնակվող զավակների ընտանիքներին: Այսպիսի ընտանիքներում բավականին տարածված է նաև տարբեր աշխատանքները համատեղ կազմակերպելու պրակտիկան: Երկսերունդ ընտանիքներում արդեն աշխատանքների ծանրությունն ընկած է մի կնոջ ուսերին: Ծանր է կանանց վիճակը հատկապես այնպիսի ընտանիքներում, որոնցից մեկ կամ երկու տղամարդ պարբերաբար մեկնում է արտագնա աշխատանքի, սակայն, այս դեպքում հարկավոր է կատարել մեկ վերապահում:

Դրսից պարբերաբար օգնություն ստացող ընտանիքները կարող են կրճատել գյուղատնտեսական աշխատանքների ծավալները, զբաղվել միայն տնամերձ փոքր հողակտորների մշակությամբ: Այն ընտանիքները, որոնց առաքվող օգնությունը պարբերական չէ, ստիպված զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ դրսից օգնության բացակայության դեպքում ընտանիքի գոյության համար անհրաժեշտ նվազագույնն ապահովելու նպատակով⁸¹:

Ազգագրական տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև աղջիկների ու հարսների զբաղվածության հետ կապված հարցերը, որոնցում

⁸¹Արտագնա աշխատանքի բացասական ազդեցությունների մասին ուշագրավ դիտարկում գրառվեց Տավուշի մարզում, փորձագիտական հարցման ժամանակ: Նշվեց, որ դրսից պարբերաբար օգնություն ստացող ընտանիքները հաճախ հրաժարվում են հողերը մշակելուց, դրանք չհանձնելով նաև վարձակալության: Այսինքն, ստեղծվում է իրավիճակ, երբ

դրսևորվում է, մի կողմից՝ նրանց գյուղատնտեսական աշխատանքներում ըստ հնարավորին չներգրավելու, մյուս կողմից՝ ծանր կացությամբ պայմանավորված՝ գյուղատնտեսական աշխատանքներին հարկադրական մասնակցության միտումը⁸²:

Փաստորեն, ինչպես մեծահասակ կանանց, այնպես էլ աղջիկների ու հարսերի համար, տնտեսավարման նոր ձևերն ու եղանակները հանդես են գալիս որպես բազմաթիվ իրողություններ պայմանավորող կարևոր գործոն: Վերջին տարիների փոփոխությունները, բացի կնոջ զբաղմունքների վրա ազդելուց, որոշակի ազդեցություն ունեցան նաև նրա կարգավիճակի վրա:

ոչ գյուղատնտեսական զբաղմունքից ստացվող եկամուտը դառնում է գյուղատնտեսականներից մասամբ հրաժարվելու պատճառ:

⁸² Գրեթե բոլոր գյուղերում նշվում էր, որ ձգտում են երիտասարդ հարսներին ըստ հնարավորին քիչ ներգրավել գյուղատնտեսական աշխատանքներում, չնայած, «եթե երեխա չունեն, ամեն գործի էլ խառնվում են՝ անասուն, բոստան, մանավանդ, եթե տղամարդիկ գյուղում չեն: Բայց եթե ընտանիքը հնարավորություն ունի, հարսներն ավելի քիչ են աշխատում»: Նույն մոտեցումն առկա է նաև չամուսնացած աղջիկների նկատմամբ: Վերջինները գյուղատնտեսական աշխատանքներում ընդգրկվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքում, երբ ընտանիքը չունի աշխատանքների կազմակերպման այլ հնարավորություններ: Մարմաշենում, օրինակ՝ կին բանասացներից մեկը պատմում էր. «գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ աղջիկս մի քանի օր է դաշտ գնացել, այն էլ ստիպված էինք, որ հասցնեինք բոստանները քաղհանել: Կամ՝ անցյալ տարի որդիս ու ամուսինս խոպանում էին, ես էլ հիվանդ էի: Աղջիկս ստիպված գնացել, կարտոֆիլը մշակել է: Արտագնացությամբ զբաղվողների ընտանիքները նույնպես ձգտում են հողը մշակել: Ունենալ-չունենալը կապ չունի: Հող ունես, ցանել ես, հարսներն, աղջիկներն էլ պետք է մշակեն»: Ինչպես բազմաթիվ այլ ոլորտներում, այստեղ ևս դրսևորվում են առանձնահատկություններ ըստ շրջանների: Բանջարաբոստանային բույսերի մշակությամբ զբաղվող շրջաններում աղջիկների ու կանանց մասնակցությունը տարբեր գյուղատնտեսական աշխատանքներին ավելի ակտիվ է, քան ամասնապահական շրջաններում, քանի որ առաջին զբաղմունքներն ավելի աշխատատար են:

Ինչպես խորհրդային շրջանում, այսօր ևս կնոջ կարգավիճակը պայմանավորող բազմաթիվ գործոններ անմիջական առնչություն ունեն ընտանիքի կազմի հետ: 1970-80-ական թթ. այն ընտանիքներում, որտեղ կային տարբեր սերունդների ներկայացուցիչներ, որպես կանոն, ընտանեկան-ազգակցական էթիկետի որոշ ավանդական տարրեր ավելի պահպանված էին և արտահայտվում էին ընտանիքի գլխավորի գերիշխող դերով, ամուսինների ոչ իրավահավասար հարաբերություններով, պարտականությունների կանոնակարգմամբ, ընտանիքի բոլոր անդամների աշխատավարձն ավագ կնոջ մոտ պահելով և այլն: Եական դեր էր խաղում նաև ընտանիքի սոցիալական կազմը. ավանդական տարրերը թույլ էին արտահայտված բանվորների և մտավոր աշխատանքի ներկայացուցիչների մեջ: Սոցիալապես ոչ միատարր ընտանիքներում կնոջ կարգավիճակը կարող էր պայմանավորվել նրա բարձր կրթական մակարդակով, որի հետ հաճախ հաշվի էին նստում նաև ընտանիքի գլխավորները, հատկապես ընտանիքի համար կարևոր հարցերի ընդունման ժամանակ:

Վերջին տասնամյակում կնոջ կարգավիճակում կատարված փոփոխությունները նույնպես ունեն դրսևորման տարբեր առանցքներ: Ընտանիքների մեծ մասում այսօր էլ արտահայտված են դերերի և գործառույթների բաժանման իրողությունները: Դրանք դրսևորվում են և՛ երկսերունդ և՛ եռասերունդ ընտանիքներում, որոնցում ընտանիքի գլխավորը սովորաբար ավագ տղամարդն է, որը և ներկայացնում է ընտանիքը հասարակական հարաբերություններում, ինչպես նաև զբաղվում տնտեսական գործունեության կազմակերպման հարցերով: Միաժամանակ, որոշ ընտանիքներում, արտահայտված է նաև մեկ այլ առանցք, որը, ինչպես 1970-80-ական թթ., այսօր ևս կապված է կնոջ

կարգավիճակի և նրա դերային գործառույթների աճի հետ: Այս դեպքում կնոջ կարգավիճակի փոփոխությունները պայմանավորված են նաև տնտեսական գործոններով: Տարբեր գյուղերում նշվում էր, որ սեփականաշնորհումից հետո կանանց մի մասն ավելի արագ հարմարվեց շուկայական հարաբերություններին, ներգրավվեց առևտրի մեջ: Նրանց մի մասն իր վրա վերցրեց նաև ընտանիքի գոյամիջոցների ապահովման հոգսերի մեծ մասը: Բնական է, որ ծանրությունն իր ուսերին վերցրած կինը նման մոտեցում է պահանջում նաև տղամարդուց: Այն ընտանիքներում, որտեղ այդ մոտեցումը չկա, կինը հանդես է գալիս որպես ոչ միայն տնտեսական, այլ նաև համայնքային, հասարակական հարաբերությունների կարգավորիչ ու կազմակերպիչ, իր գործառույթներին ավելացնելով այնպիսիք, որոնք նա նախկինում չի ունեցել: Այս իրողությունը (կանանց ավելի արագ հարմարվելը նոր իրավիճակին) երբեմն դառնում է նաև ներընտանեկան վեճերի ու հակասությունների պատճառ:

Ընդհանրացնելով, կարելի է փաստել, որ ինչպես բազմաթիվ այլ ոլորտներում, կանանց զբաղվածության, կարգավիճակի հետ կապված հարցերում նույնպես գործ ունենք երկակի իրողությունների հետ: 1970-80-ական թթ. ձևավորված ու կայացած բազմաթիվ իրողություններ այսօր էլ պահպանված են ու շարունակում են հաճախ վճռորոշ դեր խաղալ: Միաժամանակ, արտահայտված են տնտեսավարման նոր ձևերով պայմանավորված իրողությունները, որոնք ազդում են խորհրդային շրջանում ծավալված գործընթացների վրա (արագացնում կամ դանդաղեցնում դրանք) և ձևավորում այն արժեքային դաշտը, որում այսօր գործառնում է գյուղական ընտանիքը, այդ թվում նաև կանայք:

Ամուսնությունների ուղղության (ներհամայնքային, գյուղից գյուղ, գյուղից քաղաք) և ամուսնական տարիքի հետ կապված հարցերը նույնպես կարևոր նշանակություն ունեն փոփոխությունների դիտարկման տեսանկյունից:

Գյուղական միջավայրում, ընդհուպ մինչև անցած դարի կեսերը լայն տարածում ունեին ներգյուղային կամ ներշրջանային ամուսնությունները: Սակայն գյուղական երիտասարդության շփումների աճը՝ կապված ուսումնառության, աշխատանքային գործունեության հետ, նպաստում էր ամուսնությունների «աշխարհագրության» ընդլայնմանը: Նյութերը ցույց են տալիս, որ գյուղական միջավայրում հարգի էին գյուղից քաղաք ամուսնությունները, երբ աղջիկն ամուսնանում էր քաղաքաբնակի հետ, ընդ որում Շիրակում հարգի էր աղջկան Գյումրիում, Լոռիում՝ Վանաձորում, Հայաստանի համար ընդհանրապես՝ Երևանում ամուսնացնելը: Հաջողակի համբավ ունեին այն մայրերը, որոնք կարողացել էին բոլոր աղջիկներին քաղաքում ամուսնացնել: Այս իրողությունը լայն տարածում ուներ հատկապես նախալեռնային և լեռնային գյուղերում, որոնք դիտվում էին որպես հեռանկար, ապագա չունեցող:

Սեփականաշնորհումից հետո այս միտումը ընդգծված չէ:

Աղջկան գյուղում ամուսնացնելուն նախկինի նման բացասական որակներ չեն վերագրվում և, թերևս, դա է պատճառը, որ բազմաթիվ գյուղերում աճել է քաղաքացի հարսների թիվը: Այս երևույթի պատճառները կարելի է հասկանալ, եթե հաշվի առնենք, որ քաղաքային բնակչության կենսամակարդակը նույնպես կտրուկ անկում է ապրել վերջին տասնամյակում:

Չնայած դրան, պետք է նշել, որ այսօր, ինչպես և 1970-80-ական թթ., ամուսնությունների ուղղությունները տարբեր են. ներհամայնքային, գյուղից գյուղ, գյուղից քաղաք, քաղաքից գյուղ:

Պարզապես որևէ ուղղությանը տրվող նախապատվության հարցում կարևոր դեր են խաղում տնտեսական գործոնները: Լեռնային գյուղերում բազմաթիվ ընտանիքներում դարձյալ նախապատվությունը տրվում է աղջկան քաղաքում ամուսնացնելուն, քանի որ քաղաքում տնտեսական կացության բարելավմանը զուգընթաց գյուղը դարձյալ դառնալու է անհեռանկար: Փաստորեն, այս պարագայում մենք գործ ունենք «քաղաքի հեղինակության» ժամանակավոր սահմանափակման հետ, ուստի կարելի է ենթադրել, որ տնտեսական վիճակի բարելավումը դարձյալ կխթանի 1970-80-ական թթ. ծավալված գործընթացների զարգացումը:

Վերջին տարիներին, հատկապես արտագնացության բարձր տոկոս ունեցող գյուղերում, աճել են նաև գյուղից արտերկիր, հիմնականում ՌԴ ամուսնությունները: Այս իրողությունը կապված է այն բանի հետ, որ արտագնացության մեկնած երիտասարդների որոշ մասը հիմնավորվում է դրսում, այնտեղ գործ ձեռնարկում: Գրառված նյութերը ցույց են տալիս, որ նրանց մեծ մասը նախընտրում է Հայաստանից «հարս տանելը» և այդ պատճառով ինչպես գյուղաբնակ, այնպես էլ քաղաքաբնակ երիտասարդ աղջիկների մի մասն ամուսնանալուց անմիջապես հետո մեկնում է հանրապետությունից:

Փաստորեն, ներընտանեկան հարաբերությունները պայմանավորող տարբեր իրողություններում վերջին տարիներին արտահայտված նշանակություն են ձեռք բերել տնտեսական գործոնները: Տնտեսականի դերը գերազնահատելուց խուսափելու համար փաստենք, որ տնտեսական բնույթի բազմաթիվ գործոնների աճը ժամանակավոր է և պայմանավորված է ծանր կացությունում ընտանիքի գոյամիջոցների ապահովման անհրաժեշտությամբ: Որպես այդ ամենի հետևանք կարելի է

դիտարկել տարբեր ընտանիքներում կանանց գործառույթների շրջանակի աճը, ներընտանեկան հարաբերություններում դրսևորվող այն իրողությունները, որոնք կապված են այս կամ այն զբաղմունքին տրվող նախապատվության հետ և այլն: Ասվածն ապացուցվում է նաև ամուսնական տարիքին վերաբերվող նյութերը դիտարկելիս: 1970-80-ական թթ. դրսևորված միտումները հիմնականում հետևյալներն էին. 1970-ական թթ. ամուսնական տարիքը տղամարդկանց մոտ կազմել է 23-26, կանանց մոտ՝ 19-22 տարեկան: Յենց այդ տարիքում էր ամուսնացել տղամարդկանց մոտավորապես կեսը և կանանց կեսից ավելին: 1970-ական թթ. վերջերին և 1980-ական թթ. սկզբին ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքում, տղամարդկանց ամուսնական տարիքը կազմել է 22-24, կանանցը՝ 18-21 տարեկան: Սակայն եթե քաղաքում այդ տարիքում իր առաջին ամուսնությունը գրանցել է. 1979թ. տղամարդկանց 37 և կանանց 52.3 %-ը, ապա գյուղում համապատասխանաբար 72.1 և 64.8%-ը: Այս տարբերությունը բացատրվում է այն բանով, որ քաղաքաբնակ երիտասարդությունը, դպրոցից հետո, սովորաբար շարունակում է ուսումնառությունը, և, բացի այդ, ամուսնությանն առնչվող հարցերում ավելի ազատ է ու ինքնուրույն: Գյուղական վայրերում սովորաբար ձգտում են տղային ամուսնացնել զինվորական ծառայությունը, իսկ աղջիկներին՝ դպրոցն ավարտելուց հետո: Միաժամանակ, 1970-80-կան թթ. ավելացել էր նաև փոխադարձ համաձայնությամբ ամուսնությունների տեսակարար կշիռը: Նույն շրջանում աճում էր հասակակիցների և նվազում տարիքային մեծ (6-10 տարի և ավել) տարբերությամբ ամուսնությունների թիվը: Այսպես, 1970թ. 20-24 տարեկան տղամարդկանց և մինչև 24 տարեկան կանանց ամուսնությունների տեսակարար կշիռը կազմում էր. քաղաքում 30, գյուղում՝ 33.1%, 1974թ.՝

համապատասխանաբար 40.8 և 49.5 %, 1983թ.՝ 44.1 և 60.7%: 25-29 տարեկան տղամարդկանց և մինչև 20 տարեկան կանանց և 30-34 տարեկան տղամարդկանց ու մինչև 24 տարեկան կանանց ամուսնությունների տեսակարար կշիռը 1970թ. կազմել է քաղաքում 21.7, գյուղում՝ 24.1%, 1974թ. համապատասխանաբար՝ 12.4 և 13.2%, 1979թ. 10.3 և 9%, 1980թ.՝ 10.3 և 9.6%: Փաստորեն այս ոլորտում արձանագրվել է տարիքային մեծ տարբերությամբ ամուսնությունների քանակի նվազում:

Ամուսնական տարիքին վերաբերող նյութերը թույլ են տալիս արձանագրելու վերջին տասնամյակում դիտվող հակառակ երևույթներ: Գյուղական միջավայրում բավականին լայն տարածում ունեն և՛ վաղ, և՛ տարիքային մեծ տարբերությամբ ամուսնությունները:

Վաղ ամուսնությունների պատճառները մի քանիսն են.

ա) տնտեսական, երբ ամուսնությունն ունի լրացուցիչ աշխատուժե ներգրավելու նպատակ: Այս պրակտիկան ավելի տարածված է աշխատուժի կարիք ունեցող ընտանիքներում, չնայած հազվադեպ է հանդիպում:

բ) Տղայի ամուսնությունն ունի մինչև զինակոչային տարիքը երկու երեխա ունենալու և ծառայությունից ազատվելու նպատակ: Այս երևույթը տարածված էր հատկապես 1991-94 թթ.:

գ) Աղջիկներին վաղ ամուսնացնելն ունի նրանց համար բարեկեցիկ կյանք ապահովելու նպատակ, հատկապես եթե աղքատ ընտանիքի աղջիկն ամուսնանում է ունևոր ընտանիքի տղայի հետ:

Տարիքային մեծ տարբերությամբ ամուսնությունները նույնպես բավականին լայն տարածում ունեն գյուղերում: Պատճառներից մեկը երիտասարդների ամուսնական տարիքի

բարձրացումն է՝ կապված հիմնականում տնտեսական ծանր կացության հետ⁸³:

Տարիքային մեծ տարբերությամբ ամուսնությունների թիվը մեծ է արտագնա աշխատանքի բարձր տոկոս ունեցող գյուղերում: Բնական է, որ նման (և՛ վաղ և՛ տարիքային մեծ տարբերություններով) ամուսնությունների տարածումը միայն դրական իրողություններ չէ, որ ձևավորում է ընտանեկան հարաբերություններում: Բազմաթիվ բանասացներ նշում են, որ հաճախ ամուսնանում են ոչ միայն ամուսնական կյանքի մասին հստակ պատկերացումներ չունենալով, այլև մոտիկից միմյանց չճանաչելով: Քիչ չեն դեպքերը, երբ ամուսնանում են մի քանի հանդիպումից հետո: Իրավիճակի ամբողջ ծանրությունը բացահայտվում է այն ժամանակ, երբ ամուսնանալուց անմիջապես հետո երիտասարդը մեկնում է արտագնա աշխատանքի:

Արտագնա աշխատանքի բարձր տոկոս ունեցող գյուղերում կան 18-20 տարեկան կանայք, որոնք երկու-երեք տարի ամուսնացած լինելով հանդերձ, ամուսիններին տեսել են ընդամենը մի քանի ամիս: Ամուսնությունից հետո նրանք հաճախ մասնակցում են նաև գյուղատնտեսական աշխատանքներին: Եթե հաշվի առնենք, որ նախքան ամուսնությունը ծնողների մեծ մասը ձգտում է աղջիկներին մասնակից չդարձնել ծանր աշխատանքներին, պարզ կդառնա, որ այդ մասնակցությունը

⁸³ Շատ գյուղերում նշվում էր, որ կան 25-30 տարեկան երիտասարդներ, որոնք չեն ամուսնանում, որովհետև չեն կարող ընտանիք պահել: Կենսամակարդակի կտրուկ աճ կարող է ապահովել միայն արտագնա աշխատանքը, և, թեկուզ բարձր եկամուտների դեպքում, բոլոր հարցերը կարելի է լուծել չորս-հինգ տարի աշխատելուց հետո: Այդ պատճառով էլ աճում է ամուսնական տարիքը:

նույնպես ապահովվում է լրացուցիչ լարման ու ծանրաբեռնվածության հաշվին:

Աճել է նաև ըստ ունեցվածքային սանդղակում զբաղեցրած դիրքի, ամուսնությունների ընդգրկումը: Խորհրդային շրջանում ևս այս երևույթը, հատկապես «էլիտար» ամուսնությունները, երբ շրջկոմի քարտուղարի կամ գործարանի տնօրենի զավակն ամուսնանում էր համանման դիրք զբաղեցնող ընտանիքի ներկայացուցչի հետ, բավականին լայն տարածում ուներ:

Դրանց հիմքում ընկած շարժառիթներն ավելի շատ տնտեսական են. ամրագրվում է ընտանիքի վիճակն ու ստեղծվում են խնամիական կապերն օգտագործելով եղածը պահպանելու կամ ավելացնելու լրացուցիչ լծակներ⁸⁴:

Փաստորեն, սեփականաշնորհումից հետո կնոջ կարգավիճակում, գործառույթներում և զբաղվածությունում կատարված փոփոխություններում դրսևորվող միտումներն ունեն հետևյալ արտահայտությունը. Խորհրդային շրջանում ծավալված գործընթացները, որոնց որոշ մասն արդեն կայացել էր, իսկ որոշ մասը 1970-80-ական թթ. դեռևս գտնվում էր կայացման փուլում, այսօր էլ շարունակում են էական դեր խաղալ և պայմանավորել բազմաթիվ իրողություններ ներընտանեկան հարաբերություններում: Միաժամանակ, կապված ծանր կացության, կենսամակարդակի անկման, միայն (կամ հիմնականում) զուտ գյուղատնտեսական զբաղմունքների միջոցով ընտանիքի գոյամիջոցներն ապահովելու հետ, ձևավորվում են նոր,

⁸⁴Գրանցվել են դեպքեր, երբ հարուստ աղջկա ծնողներն արգելել են ամուսնությունը աղքատ տղայի հետ այն պատճառաբանությամբ, որ վերջինս իրենց ընտանիքին համապատասխան դիրք չի զբաղեցնում հասարակության մեջ: Աղքատ բազմաթիվ ընտանիքներում նշվում էր, որ աղքատությունը կոթվարացնի զավակներին ամուսնացնելը: Փաստենք, որ խոսքը երևույթի աստիճանական տարածման մասին է:

հիմքում տնտեսական գործոններ, որոնց մի մասը հակասության մեջ է խորհրդային շրջանի ավանդականացած արժեքային դաշտի հետ (օրինակ՝ կանանց արտահայտված տնտեսական ակտիվությունը, հետևաբար նաև գլխավոր դերը որոշ ընտանիքներում պետք է դիտարկել որպես տնտեսական հարաբերություններով պայմանավորված նորույթ):

Ընտանիքում կատարված փոփոխությունների դիտարկումը նույնպես բերում է այն եզրահանգմանը, որ դրանց մեծ մասն ունի տնտեսական պայմանավորվածություն և կապված է ծանր տնտեսական կացության հաղթահարման տարբերակների փնտրտուքի, նորույթների նկատմամբ վերաբերմունք ձևավորելու անհրաժեշտության, նորից ընտրություն կատարելու և դրանք տնտեսական, հասարակական, մշակութային, ներընտանեկան հարաբերություններում ամրագրելու հետ:

Տնտեսական պայմանավորվածություն ունեցող բազմաթիվ իրողություններ այսօր արտահայտված են ներընտանեկան հարաբերությունների տարբեր ոլորտներում: Մեծահասակների, դպրոցականների ծանրաբեռնվածության աճը, գյուղատնտեսական զբաղմունքների հաճախ հարկադրական զուգակցման իրողությունները կարելի է դիտարկել որպես այդ ամենի հետևանք:

Ներընտանեկան հարաբերություններում դրանք ձևավորում են նաև այլ նորույթներ. կնոջ կարգավիճակում կատարվող փոփոխությունների մի մասը, հատկապես տնտեսական ակտիվության աճը, նույնպես պետք է դիտարկել այս ենթատեքստում: Սակայն պետք է արձանագրել, որ այս դեպքում գործ ունենք խորհրդային շրջանում ծավալված գործընթացների արագության և պատճառների փոփոխության հետ: Կնոջ տնտեսական ակտիվությունն աճում էր նաև խորհրդային

շրջանում: Սակայն այն կապված էր նոր մասնագիտական խմբերի ձևավորման, կրթական մակարդակի բարձրացման և բազմաթիվ այլ գործոնների հետ և, ըստ էության, ուղեկցվում էր նրա կարգավիճակի փոփոխություններով, ընտանիքում կնոջ դերի բարձրացմամբ: Այսօր տնտեսական աճի հիմքում ընկած են բոլորովին այլ իրողություններ. ընտանիքի գոյության կենսամիջոցներն ապահովելու անհրաժեշտություն, այլընտրանքային տարբերակների բացակայություն:

Հիմնականում նույն պատճառներն են ընկած նաև տղամարդու հիմնական գործառույթների փոփոխությունների հիմքում:

Գյուղատնտեսական զբաղմունքները, ինչպես ցույց են տալիս գրառված նյութերը, բավականին մեծ դժվարություններով են ընդունվում հատկապես նախկինում արդյունաբերական ձեռնարկություններում ընդգրկվածների կողմից:

Որպես նոր իրողություն պետք է նշել նաև ամուսնական տարիքի, տարիքային մեծ տարբերություններով ամուսնությունների թվի աճը:

Այս և բազմաթիվ այլ իրողություններն են պայմանավորում ընտանիքի փոփոխությունները: Միաժամանակ, ինչպես համայնքում, այնպես էլ ընտանիքում, շարունակելու են կարևոր դեր խաղալ նորույթների ընտրույթի հետ կապված խնդիրները:

Անցումը շուկայական հարաբերություններին միայն տնտեսական հետևանքներ չէ, որ ունենում է ընտանիքի վրա: Այն ուղեկցվում է նաև հասարակական, մշակութային հարաբերությունների դաշտը պայմանավորող արժեքների փոփոխությամբ, որոնք, բնականաբար, անմիջական ազդեցություն ունեն ընտանիքի վրա: Առաջիկա տարիներին դրանց ընտրույթն ու ամրագրումը նույնպես կարևոր դեր են խաղալու: Ուստի

ընտանիքի ինքնակարգավորման ու ինքնակազմակերպման տարբերակների դերը ևս շարունակելու է արտահայտված մնալ: Ինչպես համայնքը, այնպես էլ ընտանիքը նախընթաց պատմական զարգացման ընթացքում մշակել և կենսագործել են այնպիսի տարբերակներ, որոնք ընձեռել են ոչ միայն տնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով բարձր կենսամակարդակ, այլ ընտանիքի, ներընտանեկան հարաբերությունների առավել ընդունելի տարբերակ ապահովելու հնարավորություններ:

Ազգակցական հարաբերությունները այս դեպքում նույնպես կարող են նպաստել ներընտանեկան հարաբերություններում ձևավորված որոշ անընդունելի իրողությունների արագ հաղթահարմանը:

Փաստորեն, ընտանիքում և ներընտանեկան հարաբերություններում նույնպես արտահայտված է որոշակի հակասականություն: Մի կողմից արտահայտված է գոյություն ունեցող մոդելի նույնական վերարտադրությունն ապահովելու ձգտումը, մյուս կողմից՝ ընտանիք են մուտք գործում այնպիսի իրողություններ, որոնք վտանգում են հնուց եկած և տասնամյակների ընթացքում կայացած ու կայունացած բազմաթիվ արժեքներ:

Վերջաբան

Ազգաբանական ցանկացած հետազոտություն իր առջև դնում է մի քանի սկզբունքային հարցի պատասխանելու խնդիր: Սույն ուսումնասիրությունն այս տեսանկյունից բացառություն չէ: Որպես կանոն, հետազոտությունների արդյունքում ոչ միշտ է հաջողվում ստանալ առաջադրված բոլոր հարցերի ամբողջական պատասխանները: Հետազոտության ավարտին միշտ ինչ-որ բան մնում է թերի, առաջանում են լրացուցիչ հարցադրումներ, որոնց պատասխանը կարող էր ավելի հետաքրքիր ու գրավիչ դարձնել ընթերցողի դատին հանձնվող հոդվածը, գրքույկը, մենագրությունը: Սույն մենագրությունն այս տեսանկյունից ևս բացառություն չէ:

Ազգաբանի պատասխանատվությունը միշտ փոքր-ինչ ավելի մեծ է: Մասնագիտության բերումով ազգաբանն անընդհատ հասարակական, մշակութային տարբեր գործընթացների հորձանուտում է, ձգտելով հասկանալ դրանց խորքային իմաստն ու բովանդակությունը, ներկայացնել վտանգավոր գործընթացների կանխարգելման եղանակներ ու տարբերակներ:

Անցումային շրջանի հայկական ընտանիքի ուսումնասիրությունը կրկնակի պատասխանատու խնդիր է, քանի որ ընտանիքն այսօր կանգնած է ոչ միայն լուրջ բարդությունների, այլ նաև կարևոր ընտրանքի առաջ:

Աշխատանքի տարբեր բաժիններում դիտարկվեցին դրանց հասարակական, մշակութային ազդեցություններն ու

հետևանքներն անհատի, ընտանիքի, համայնքի ու հասարակության վրա:

Ընտանիքի ուսումնասիրության փորձը ցույց է տալիս, որ անկախ քաղաքական համակարգերից, տնտեսական ու սոցիալական զարգացման միտումներից, հատկապես ավանդական մշակութային տարրերի պահպանվածությամբ աչքի ընկնող հասարակություններում միշտ կարևոր է ընտանիքի դերն ու նշանակությունը: Լինելով արմատական տարաբնույթ վերափոխումների օբյեկտ, ընտանիքը միշտ պահպանում է առաջին հայացքից աննկատ, սակայն որակական ուսումնասիրություններով բացահայտվող սուբյեկտի իր կարգավիճակը:

Արժեքային հստակ կողմնորոշիչներից ու սկզբունքներից զրկված հայկական ընտանիքն այսօր աստիճանաբար դառնում է ապակառուցողական արժեքներ ստեղծող սուբյեկտ, որոնք իրենց հերթին ապագայում պայմանավորելու են հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացումները: Օրինակների համար հեռուն պետք չէ գնալ: Տեղական ու համապետական մակարդակի ցանկացած ընտրություն զալիս է առաջին հայացքից պարզ, իրականում՝ չափազանց դաժան ճշմարտություններ ապացուցելու:

Ընտրակաշառքը, հանդիսանալով հասարակական անտարբերության հիմնավորում, միաժամանակ նույն անտարբերությունը պարբերական ու վերարտադրվող դարձնելու գործիք է: Թատրոնի, կինոյի, ազգային մշակույթի արժեքների հանդեպ անտարբերությունը բերում է ոչ միայն ցածրորակ մշակութային արժեքների աննախադեպ տարածման, այլ նաև բարձրակարգ մշակույթ ստեղծելու հնարավորությունների սահմանափակման: Այսինքն, այստեղ ևս հասարակությունն ու

ընտանիքը հայտնվել են կախարդական շրջափուլում, որից դուրս գալն առաջիկայում, անկախ տնտեսական վերափոխումների հաջողությունից, շատ դժվար է լինելու, քանի որ խարխլվում են հասարակության ու ընտանիքի էթնիկ և մշակութային հիմքերը:

Հայկական ընտանիքն այսօր չունի արագ փոփոխվող աշխարհում կողմնորոշվելու հստակ չափորոշիչներ ու մեխանիզմներ: Գլոբալիզացիան ու արևմտյան մշակութային համակարգերի ու ենթահամակարգերի ներթափանցումը ձևավորում են նոր հրամայականներ, որոնց ընդունումն ու գիտակցված վերարտադրությունը, ըստ նույն արևմուտքի տեսաբանների ու քաղաքագետների, բացում է անհամեմատ ավելի լայն հնարավորություններ անհատի ու ընտանիքի համար:

Ժողովրդավարությունն ու քաղաքացիական հասարակությունը մարդակենտրոն համակարգերի ձևավորման կարևոր նախադրյալներ են: Մարդակենտրոն հասարակությունն, իր հերթին անհատի ինքնաիրացման, զարգացման, կարևորության գիտակցության ավելի լայն հնարավորություններ է ընձեռում խմբակենտրոն հասարակության համեմատությամբ:

Ընտանիքը մարդակենտրոն համակարգերում հանդես է գալիս որպես ինքնաիրացման հնարավորություն ստացած անհատների օրգանական ամբողջություն, սոցիալական, հասարակական ու մշակութային կապերի բազմազանությամբ ու ընտրության տարաբնույթ մեխանիզմներով:

Հայաստանյան ընտանիքն անցումային շրջանում մարդակենտրոն հասարակություններին բնորոշ որակներով չի բնութագրվում: Ջանգվածային աղքատությունն ու արտագաղթը, բարոյահոգեբանական ծանր մթնոլորտը խարխլել են ընտանիքի ոչ միայն հասարակական ու մշակութային, այլ նաև ժողովրդագրական հիմքերը: Չնայած հստակ վիճակագրության

բացակայությանը, կարելի է արձանագրել այն դառն իրողությունը, որ այսօր ավելի շատ հայ ծնվում է հայրենիքից դուրս: Ծերանում ու դատարկվում են գյուղական բնակավայրերը, նախկինում արդյունաբերական կենտրոնի համարում ունեցող շատ քաղաքներ այսօր ընդամենը խղճուկ գոյություն են քարշ տալիս: Ստեղծված իրավիճակը փոխում է տասնամյակների ընթացքում կայունացած դաստիարակության նորմերը: Երիտասարդության համար առաջին պլան են մղվում նյութական արժեքները, որոնք մեր իրականությունում մարմնավորվում են ի դեմս օլիգարխիկ տարբեր խմբերի ներկայացուցիչների. սրանք առանձնանում են ոչ միայն իրենց հագուկապով ու նյութական հնարավորություններով, այլ նաև վարվելակարգի որոշակի առանձնահատկություններով: Այս դեպքում ևս օրինակների համար պետք չէ հեռուն գնալ: Ցանկացած ազգագրական դիտարկում հանրապետության որևէ քաղաքում, հատկապես Երևանում կարող է օգնել տասնյակ օրինակների գրառմանը: Այսինքն, անցումային շրջան ապրող հայկական ընտանիքում առկա է վտանգավոր չափերի հասած խզում հռչակված արժեքների և իրական գործողությունների ու վարքի միջև: Արժեքային բազմազանությունը, որը դրսևորում է արժեքային վակուումի վերածվելու միտումներ, դառնում է ապակառուցողական արժեքների գերակշռության պատճառ: Մարդակենտրոն հասարակության ձևավորման սկզբունքներ հռչակած անհատն ու ընտանիքն այսօր շարունակում են ապրել դասական խմբակենտրոն հասարակություններին բնորոշ օրենքներով, որտեղ նյութական ու հոգևոր արժեքները, նաև անհատը ծառայեցվում են խմբի շահերին: Խումբը, որը Հայաստանի պայմաններում արդեն ձեռք է բերում փակ, ինքնավերարտադրվող կլանին բնորոշ հատկանիշներ, գերակա է ոչ միայն անհատի, այլ պետական ու հասարակական շահի

համեմատությամբ: Ընդ որում, քաղաքական վերնախավում ձևավորված այս մոդելն այսօր նույնությամբ վերարտադրվում է տարբեր մակարդակներում: Քաղաքային ու գյուղական համայնքներում, ազգականների ու դրացիների խմբերում, միջանձնային շփումներում դարձյալ որպես գերակա արժեք հանդես է գալիս խումբը, իսկ անհատը, նաև ընտանիքն այս համատեքստում կարևորվում են այս կան այն խմբին պատկանելության գործոնի հաշվառմամբ: Լուրջ վտանգ է սպառնում նաև ազգային մշակութային ու արժեքային համակարգերին: Ազգային գիտակցված ընկալումն ու ազգային ռացիոնալ արժեքների կիրարկումն այսօր սահմանափակ են:

Ցանկացած հասարակությունում կարևոր նշանակություն ունեն էլիտար խմբերը: Դրանք կարողանում են ապահովել ոչ միայն որևէ արժեքային համակարգի տարածումը, այլև տարբեր համակարգերի ու ենթահամակարգերի օրգանական համագործակցությունը, փոխլրացումն ու փոխհարստացումը: Ցանկացած ընտանիք, անհատ որոշակի իրավիճակներում ունի ընդօրինակելու ցանկություն: Ներդաշնակ հարաբերությունների պայմաններում գործառնող հասարակություններում ընդօրինակելի խմբերն ու անհատները, որպես կանոն, բնութագրվում են բարձր բարոյականությամբ, հասարակական, պետական ու ազգային գաղափարներին ու շահերին նվիրվածությամբ: Հասարակական ինքնակարգավորման ու ինքնավերարտադրության բարդ մեխանիզմներն իրենց հերթին հնարավորություն են տալիս ընդօրինակելի արժեքները տարածել վերևից ներքև: Արտակարգ իրավիճակում, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, ընտանիքը, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական միջավայրում, կարևորում է ոչ այնքան խոսքը, որքան գործը, կոնկրետ գործողություններն ու քայլերը:

Ստեղծված իրավիճակը, որի տարբեր առումներին անդրադարձանք վերը, վտանգավոր է ոչ միայն ընտանիքի, այլ նաև հասարակական ու պետական զարգացումների տեսանկյունից ընդհանրապես: Ընտանիքում ձևավորված ծանր բարոյահոգեբանական մթնոլորտը, դերային հիմնական գործառույթների ու հասարակական կարևորության մեխանիզմների կորուստը, անտարբերությունը, կենսական պահանջումների շեմի ու տեսականու արհեստական սահմանափակումները ուղղակիորեն ազդում են նաև հասարակական ու քաղաքական հարաբերությունների վրա: Ցանկացած իշխանության համար ավելի հեշտ է հարաբերվել հստակ խնդիրներ ու պահանջներ չառաջադրող ու դրանց պաշտպանության սկզբունքներ ու մեխանիզմներ չունեցող միավորների հետ: Ավելին, այս իրավիճակում ժամանակ առ ժամանակ դրևորվում է նաև քաղաքական հարկադրանքը, երբ հասարակությանը, ընտանիքին ու անհատին պարտադրվում են սեփական կողմնորոշումներին, արժեքային ընկալումներին ու հնարավորությունների հակասող արժեքներ, որոնք իրենց հերթին էլ ավելի են խորացնում կրավորականության ու զանգվածային անտարբերության միտումները: Ընտանիքն այս տեսանկյունից ևս բացառություն չէ: Ստեղծվել է իրավիճակ, երբ ընտանիքն աստիճանաբար կորցնում է արտաքին վտանգներից ու անբարենպաստ ազդակներից պաշտպանվելու իմունային համակարգը, նմանվելով այն հիվանդին, որին իրական բուժման փոխարեն առաջարկում են ընդամենը արտասահմանյան թանկարժեք դեղամիջոցներ, առանց վերջիններիս արդյունավետության մասին հստակ պատկերացումներ ունենալու: Վիճակն ավելի է ծանրանում աշխարհաքաղաքական հնարավոր զարգացումները հաշվի առնելու դեպքում: Հայաստանի

Հանրապետությունն այսօր ունի չլուծված հակամարտություն ու բազմաթիվ խնդիրներ հարևան պետությունների հետ: Դրանց կարգավորումն ու նոր աշխարհում արժանի տեղ զբաղեցնելը նույնպես ուղղակիորոն կապված են հասարակական, այդ թվում և ընտանեկան ներուժի ամբողջական ու համակողմանի օգտագործման հետ: Գրառված ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ չնայած զանգվածային արտագաղթին ու հանրապետության ներսում առկա բացասական միտումներին, հայկական ընտանիքը դեռևս շարունակում է պահպանել առողջ արժեքներն ընդունելու ու վերարտադրելու հատկանիշը: Պարզապես անհրաժեշտ են դրա իրականացմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ, որոնք հաշվի կառնեն ոչ միայն այսօր ձևավորված իրավիճակը, այլև հայ հասարակության ու ընտանիքի զարգացման նախընթաց փորձը, ավանդույթներն ու սովորույթները. ինչպես նաև ստեղծված իրավիճակում ընտրություն կատարելու հնարավորությունները:

Աղբյուրների և գրականության ցանկ

1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր. պետական ֆինանսները և աղքատության կրճատումը, Եր., 2002:
2. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003:
3. Աղքատության հաղթահարման իմ/ներ տեսլականը (հողվածներ, քաղվածքներ ՄԻԺԻ-ի կողմից կազմակերպված մրցույթից), Եր., 2001:
4. Ավագյան Գ., Հայաստանը 1920-1990թթ., Եր., 1997:
5. Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1975:
6. Գաբրիելյան Մ., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001:
7. Գաբրիելյան Մ., Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001:
8. Գաբրիելյան Մ., Դաշտային ազգագրական նյութեր, 1993-2005:
9. Գալստյան, Հայաստանի Հանրապետության բնակչության աշխատանքային միջպետական տեղաշարժերը, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (այսու՝ ՌԱՀԿ), Եր., 1998:
10. Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001:
11. Թադևոսյան Ա., Անցումային շրջանի էթնահոգեբանական փոփոխությունների առանձնահատկությունները Հայաստանում, ՌԱՀԿ, Եր., 2000:
12. Թադևոսյան Ա., Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, Եր., 2001:
13. Թադևոսյան Ա., Քաղաքացիական հասարակության հիմքերն ու հնարավորությունները Հայաստանում, ՌԱՀԿ, Եր., 2000:
14. Թադևոսյան Ա., Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում, ՌԱՀԿ, Եր., 1998:
15. Թադևոսյան Ա., Հասարակական շերտավորման և աղքատության ձևավորման պատկերը Հայաստանում 1991-1997թթ., ՌԱՀԿ, Եր., 1998:
16. Թադևոսյան Ա., Արժեքային գործընթացները և միտումները 1991-1998թթ., ՌԱՀԿ, Եր., 2000:
17. Թադևոսյան Ա., Գաբրիելյան Մ., Աղքատության ու գոյատևման պատկերը. հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, ՄԻԺԻ, Եր., 2003:

18. Խառատյան Յ, Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000:
19. Խոջաբեկյան Վ., ՀՀ բնակչության գաղթի միտումները.- Դրօշակ, 2001, թիվ 2, էջ 204-216:
20. Ծաղիկյան Ս., Կոռուպցիա. պատճառները, հետևանքները, Եր., 2001:
21. Հայաստանի կանայք և տղամարդիկ. վիճակագրական գրքույկ, Եր., 2005:
22. Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), Եր., 2003:
23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I (խմբ.՝ Յու. Մկրտումյան), Եր., 2000:
24. ՀՀ ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում (խմբ.՝ Յու. Մկրտումյան), Եր., 2005:
25. Մանասերեան Ն., Հայաստանի գիւղատնտեսությունը յետ-սեփականաշնորհման փուլում-Դրօշակ, 1997, թիվ 11, էջ 27-28:
26. Մարգարյան Ն., Մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդավարական արժեքների դերը աղքատության հաղթահարման գործում, Եր., 2001:
27. Մանուկյան Ս., Կոռուպցիան և անցումային շրջանի սոցիալական դինամիկան. Երևանի ուսանողության կոռուպցիոն դիրքորոշումներն ու միտումները, Եր., 2005:
28. Մարկոսյան Ա., Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման քաղաքականությունը ՀՀ-ում.-Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, գիրք առաջին, Եր., 1997, էջ 129:
29. Մարության Հ., Հայ ինքնության ձևափոխման հիմնական ուղղությունները Ղարաբաղյան շարժման տարիներին.- «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները», Հայագիտական միջազգային առաջին համաժողով, զեկուցումների դրույթներ, Եր., 2003, էջ 55-56;
30. Մարության Հ., Սումգաիթեան ջարդեր, իրողութիւն եւ պատմական յիշողութիւն.-«Հանդէս Ամսօրեայ» հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա, 2002, էջ 158-206:
31. Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Եր., 2003:
32. Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության գյուղական տարաբնակեցումը, Եր., 1999:

